

ԿԻՄԵՆՏ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՏԵՄԻ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945)



ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ ՆԱՄԻ ՄԻԿՈՅԱՆԻ
ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱՅԵԼ Է «ԲԱՄՈ»
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք. ՄՈՍԿՎԱ)



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ**

КЛИМЕНТ АРУТЮНЯН

**ДЕЯТЕЛЬНОСТЬ ГРИГОРА
АРТЕМЬЕВИЧА АРУТЮНЯНА
В ГОДЫ ВЕЛИКОЙ
ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ
(1941 – 1945)**

Издательство "Гитутюн" НАН РА
ЕРЕВАН 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՏԵՄԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941 – 1945)

A II
90559



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 2001

ԳՏՀ 329 (479.25)
ԳՄԴ 66.61 (2Հ) 8
Հ 422

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ**

*Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ տեղաբնակիչու Հ.Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ*

*Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պարունական գիտությունների դոկտորներ
Գ.Մ.ԳԵՂԱՄՅԱՆԸ և Հ.Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ*

Հ 422 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ, Գրիգոր Արտեմի Հարությունյանի
գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 –
1945) (Պատ. խմբ.՝ Հ.Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ):

ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ. – Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2001,
154 էջ + 16 էջ նկար:

Աշխատության մեջ նորահայտ արխիվային փաստերի, մամուլի
նյութերի և ժամանակակիցների հուշերի հիման վրա լուսաբանվում է
Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի
Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի
տարիներին (1941 – 1945թթ.): Տպագրվում է նրա ծննդյան 100-ամյակի
կապակցությամբ: Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին:

0902030000

Հ

703 (02) – 2001

ԳՄԴ66.61(2Հ)8

ISBN 5 – 8080 – 0479 – 9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կուսակցական և պետական ականավոր գործիչ, 1937 – 1953թթ. Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի (Հարությունով) քաղաքական, հասարակական, պետական գործունեությունը ծավալվել է 1919 – 1953թթ. Վրաստանում և Հայաստանում: Ռա եղել է աշխարհի մեկ վեցերորդ մասում սոցիալիստական հասարակարգ կառուցելու փորձարկումների ու պարադոքսների ժամանակաշրջան՝ մի կողմից արդյունաբերության, գիտության ու տեխնիկայի, մշակույթի և սոցիալական բնագավառներում աննախընթաց վերելք ու նվաճումներ, ֆաշիզմի դեմ տարած համաշխարհային պատմական հաղթանակ, մյուս կողմից՝ ահաբեկչություն, սարսափ, անօրինականություն, բռնություններ: Միայն Հայաստանում բռնությունների զոհ դարձան 42 հազար անմեղ հայեր:

Կուսակցության X համագումարում (1921թ. մարտ) կոմունիստները, հրաժարվելով «ռազմական կոմունիզմից» և որդեգրելով նոր տնտեսական քաղաքականություն, ընդունեցին իրենց նահանջը դեպի պետական կապիտալիզմ: Ոչ բավարար զարգացած երկրում արմատական փոփոխությունների անցման ճանապարհին հաղթանակեց երկարատև դժվարությունների ուղին անցնելու լենինյան դիրքորոշումը: Քաղաքական բանավեճերում ծնվեցին ու ձևավորվեցին իրարից արմատապես տարբեր հայեցակետեր, առաջացան տրոցկիստական և նոր ընդդիմություններ, աջ ու ձախ խմբավորումներ ու թեքումներ:

Այլախոհություն չհանդուրժող Ստալինը, իրականացնելով հեղափոխություն վերևից, կազմակերպեց բոլոր ուղղվածությունների գաղափարական ջախջախումը, օգտագործելով առանձին խմբերի միջև եղած տակտիկական տարածայնությունները, որի եզրափակիչ փուլը եղավ կուսակցության XV համագումարը (1927թ. դեկտեմբեր):

Ամրապնդելով իշխանությունը կուսակցության և կառավարության բարձրագույն ոլորտներում, ստալինականները հրաժարվելով նոր տնտեսական քաղաքականությունից,

վերածնեցին «ռազմական կոմունիզմի» և «ռազմականացված սոցիալիզմի» տրոցկիստական մոդելը, որը իր հետ բերեց բռնաճնշումներ, ահաբեկչություն, սարսափ, գյուղացիության զանգվածային աքսոր:

Ստալինի հանոզմունքը, թե բանվորական պետության գործունեությունը արդարացնում է ճնշման, բիրտ ուժի կիրառման ամեն մեթոդ, և այն մեղադրանքը, թե տրոցկիստական-զինվորական բլոկի մերկացման գործում միացյալ Պետքաղվարչությունը ուշացել է չորս տարով, ունեցավ ողբերգական հետևանք:

Այդ ժամը ժամանակ էր, որ Չայաստան եկավ Գրիգոր Չարությունյանը, որը 1937թ. սեպտեմբերի 23-ին, առանց իր գիտության, ընտրվել էր Չայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ինչպես ասել էին Երևանի կայարանում իրեն դիմավորողները՝ Գ.Մալենկովի, Ա.Միկոյանի և Լ.Բերիայի առաջարկությամբ:

Գրիգոր Չարությունյանը ծնվել է 1900թ. նոյեմբերի 7-ին, Թելավի քաղաքում (Վրաստան), մինչև Երևան գալը անցել էր կուսակցական աշխատանքի երկար ճանապարհ: Եղել էր կուսակցության Թելավիի գավառային կոմիտեի քարտուղար, վրացական դիվիզիայի քաղբաժնի հրահանգիչ, Մոսկվայի Կ.Մարքսի անվան տնտեսագիտության ինստիտուտում 2 տարի սովորելուց հետո՝ Անդրկովկասի ամենախոշոր կառույցի՝ Ձեմոն-Ավճալայի հիդրոէլեկտրակայանի շինարարության կուսակցական կազմակերպության և ենթաշրջկոմի քարտուղար, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի գյուղբաժնի վարիչ, կոլխոզկենտրոնի նախագահ, կուսակցության վերահսկիչ հանձնաժողովի նախագահի և բանգյուղտնտեսության ժողովրդական կոմիսարի տեղակալ, Կենտկոմի կազմակերպական աշխատանքի բաժնի վարիչ:

1934 թվականի հունվարին՝ 33 տարին նոր բոլորած, նա ընտրվել է Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար. աշխատել է մինչև 1937թ. սեպտեմբերի վերջերը: Մինչ Չարությունյանը, Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղարի պոստում, 1919 – 1933թթ. աշխատել էին Ստեփան Վարդանյանը, Ռուբեն Մկրտչյանը, Երվանդ Ասլիբեկյանը, Ստեփան Չակոբովը: Բոլորն էլ դարձան ստալինականության զոհեր:

Նկատենք, որ Թիֆլիսի քաղաքագլուխները 1841թ. մինչև 1917 թվականը եղել են 25 հոգի, բոլորն էլ հանրահայտ հայեր, առաջինը՝ Իզմիրլյանը, վերջինը՝ Ալեքսանդր Խատիսյանը, Հայաստանի ապագա վարչապետը:

1934թ. հունվար – 1937թ. սեպտեմբերը, Հարությունյանի Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար եղած տարիները համընկան ԽՍՀՄ-ում ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի իրականացման և Թբիլիսիի վերակառուցման գլխավոր հատակագծի կյանքի կոչման հետ, որը հաստատվել էր 1933թ. սեպտեմբերին: Նոր հրապարակների, պողոտաների, փողոցների, կամուրջների շինարարության, տրանսպորտի նոր միջոցների շահագործման շնորհիվ քաղաքի մերձկայարանային հրապարակը կապվեց հեռավոր Սաբուրթալո շրջանի հետ, Քուռ գետի վրա կառուցվեց վեց կամուրջ, ստեղծվեց կապ Հավլաբարի և Նավթլուղի շրջանների մեջ, կառուցվեցին նոր ջրամբարներ, արտադրական ձեռնարկություններ: Քաղաքի Նավթլուղ, Դիդուբե, Գրմա-Գելե, Ջեմո-Ավճալա շրջանները վերածվեցին արդյունաբերական կենտրոնների: Շարք մտան նոր հզոր մեքենաշինական գործարաններ, ջերմակայաններ, սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններ: Ստեղծվեց հանգստի կսմաչ գոտի:

Սահմանվեցին նոր բարեկամական հարաբերություններ Հայաստանի հետ. 1936թ. փետրվարին Թբիլիսիում բացվեց Ալ.Մյասնիկյանի անվան հայկական մշակույթի տունը, բարելավվեց հայկական թատրոնի վիճակը, ընդարձակվեց հայկական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների ցանցը:

1936թ. օգոստոսի 15 – 16-ին Թբիլիսիում անցկացվեց Հայաստանի ժողովրդական ստեղծագործության փառատոն, արվեստի հայ վարպետների հանդիպում Թբիլիսիի մտավորականների, արվեստի գործիչների և գրողների հետ, որը տեղի ունեցավ Մյասնիկյանի անվան հայկական մշակույթի տանը: Նույն՝ 1936թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թբիլիսի ժամանեցին Երևանի պետական համալսարանի և Լեճիճականի բազմամարդ պատվիրակությունները, հայրենադարձների խմբեր՝ Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նուբարաշեն, Խարբերդ, Արաբկիր ավաններից: Երևան ժամանեցին Թբիլիսիի պատվիրակու-
թյուններ:

Գնալով բարձրանում էր Հարությունյանի հեղինակությունը Թբիլիսիում և ամբողջ Վրաստանում, ժամանակակիցները բարձր էին գնահատում նրա ազնվությունը և բարյացակամությունը, կազմակերպական տաղանդը, աշխատանքի ոճը և ստեղծագործ միտքը:

Գ.Հարությունյանի հարաճուն հեղինակությունը անհանգստացնում էր Բերիային և Թբիլիսիի քաղկոմի քարտուղարին Հայաստան տեղափոխելը նրա «գաղտնի» քայլերից էր: «1936թ. վերջերին սկսվեցին Բերիայի անհանգստության դրսևորումները իմ նկատմամբ: Դա ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ հանրապետությունների կենտկոմների և մայրաքաղաքային քաղկոմների քարտուղարների պաշտոնները համատեղելու մասին որոշումից հետո էր: Հենց այդ ժամանակը հանընկալ ինձ Հայաստան տեղափոխելու հետ», – ասել է Հարությունյանը հետագայում: 1937թ. մայիսին Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար ընտրվեց Բերիան: Թբիլիսիի քաղկոմի հայ անդամների թիվը 25-ից իջավ 12-ի: Հարությունյանը ընտրվեց երկրորդ քարտուղար:

Նույն ամսին կայացած Վրաստանի կոմկուսի X համագումարում Հարությունյանը թեև ընտրվեց Կենտկոմի բյուրոյի անդամ, սակայն համագումարում ելուք ունեցած 63 պատվիրակների մեջ նա չկար: Կենտկոմի կազմում չընտրվեց Հարությունյանի կրտսեր եղբայրը՝ Սերգեյը, որը մինչ այդ Կենտկոմի անդամ էր, 26 կոմիսարների շրջկոմի առաջին քարտուղար:

Հիշեցին, որ Սերգո Հարությունյանը Ստալինյան շրջկոմի պլենումում տված զեկուցման մեջ՝ նվիրված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935թ. դեկտեմբերյան պլենումի արդյունքներին, ոչ մի անգամ չի տվել Ստալինի և Բերիայի անունները («Ձարյա Վոստոկա» թերթում): Աջարիայի նվաճումները՝ առանց Ստալինի և Բերիայի ղեկավարությամբ է ներկայացրել «Պրավդա» թերթում տպագրված հոդվածում մարզկոմի առաջին քարտուղար Ա.Գեուրկովը՝ Հարությունյանի կնոջ եղբայրը: Հիշեցին նաև, որ «1923թ. մի քանի ամիս Գեուրկովը համակրել է Վրաստանի կոմկուսում նացիոնալ-ուկրոնիստական ընդդիմությանը: Բաթումում, մարզային կուսակցական կոնֆերանսում քվեարկել է նախագահության՝

ուկլոնիստների կողմից առաջադրված կազմի օգտին»։ Նրանք դարձան ստալինականության զոհ։ Կասկածներ կային, որ նրանք կարող էին լինել կուսակցության XVII համագումարում Ստալինի դեմ քվեարկած առնվազն 160 պատվիրակների թվում։

«Պրավդա» թերթում 1936թ. օգոստոսի 19-ից Բերիան հանդես էր եկել «Յողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» հոդվածով։ Չբավարարվելով դրանով, նա հոկտեմբերի 10-ին գրեց. «Ով կարծում է, թե բոլոր թշնամիներն արդեն մերկացված են և ոչնչացված, նա չարաչար սխալվում է։ Դեռ քիչ չեն հակախորհրդային տարրերը, դրանց դեմ պայքարը պահանջում է ավելի բարձրացնել ստալինյան զգոնությունը, ավելի աջալուրջ խփել թշնամուն»։

Բանտարկվեց և գնդակահարվեց Վրաստանի կոմկուսից ՅամԿ(բ)Կ XVII համագումարի (1934թ. դեկտեմբեր) պատվիրակ ընտրվածների 70 տոկոսը, Խորհրդային Միության 19 հանրապետություններից, երկրամասերից, մարզերից ընտրված 59 հայ պատվիրակներից 50-ը. ՅամԿ(բ)Կ Կենտկոմի անդամների 70 տոկոսը։ Յայ պատվիրակներից 21-ը ծնունդով Վրաստանից էին, 29-ը՝ աշխատել էին Վրաստանում։ Բոլորն էլ լավ գիտեին Բերիային։

Ստալինի և նրա շրջապատի հանցանքի հետևանքով 1936 թվականի հունիսից մինչև 1937 թվականի սեպտեմբերի 23-ը երկու անգամ գլխատվեցին Յայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպությունը, Խորհրդային և պետական մարմինները, ձերբակալվեցին երկու գումարումների Կենտկոմի բյուրոյի ամբողջ կազմը, գնդակահարվեցին 1921 – 1937թթ. Յայաստանում աշխատած Կենտկոմի յոթ առաջին քարտուղարներից 6-ը՝ Գևորգ Ալիխանյան, Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան), Յայկ Յովսեփյան, Յայկազ Կոստանդյան, Ադասի Խանջյան, Ամատունի (Վարդապետյան), իսկ Աշոտ Յովհաննիսյանը ավելի քան տաս տարի անցկացրեց աքսորավայրերում։ Բանտարկվեցին և գլխատվեցին կոմերիտմիության Կենտկոմի 11 առաջին քարտուղարներից 10-ը, Յայաստանի կենտգործկոմի, կառավարության նախագահներ, ժողկոմներ։ Երկու տարում բանտարկվեց մոտ 6000 մարդ։

Ծանր հարված հասցվեց հասարակության բոլոր խավերին,

հայ եկեղեցուն՝ ոչնչացվեց նրա սպասավորների մեծ մասը: Ձանգվածային բռնաճնշումներն ու ահաբեկչությունը խորհրդային ժողովրդի պատմության սև էջերն էին:

1936 – 1937թվականներից կանցնի 17 տարի, և կգտնվեն գործիչներ, որոնք այդ թվականների սարսափները կվերագրեն Հարությունյանին, որն այդ տարիներին դեռ Հայաստանում չէր աշխատում:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվելու մասին լուրը, այն էլ Բերիայի առաջադրությամբ, առաջացրել էր Հարությունյանի տարակուսանքը՝ «Բերիային հայտնի էր, որ ես լեզուն չգիտեմ, կադրերին չեմ ճանաչում, պայմանները չգիտեմ», – ասել է Հարությունյանը:

Ստացած ժառանգությունը ծանր էր:

Սահակ Տեր-Գաբրիելյանի «ինքնասպանության» կապակցությամբ 1937թ. սեպտեմբերի 8-ին գրած նամակում, Ստալինը Հայաստանի ղեկավարությունից պահանջում էր «Բացահայտել և ոչնչացնել Հայաստանի ժողովրդական տնտեսությանը վնաս հասցնող և բանվոր դասակարգին ու գյուղացիությանը կեղեքող հայ ժողովրդի թշնամիներին», արդյունքների մասին զեկուցել իրեն: Ձերբակալվածների փոխարեն առաջ քաշել նոր կադրեր, «Հայաստանում ևս հայտնաբերել առաջնորդի դեմ ահաբեկչություն նախապատրաստողներին և այդ մասին հայտնել նրան», սեղմ ժամկետում նախապատրաստել և անցկացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները, այդ ընթացքում բոլորին հավատացնելով, որ խորհրդային քաղաքացին ապրում է աշխարհի ամենաազատ երկրում, ապահովել երկրորդ հնգամյա պլանի հաջող կատարումը:

Մոսկվայից ժամանածները՝ Միկոյան, Մալենկով, չեկայից՝ Լիտվին, 1937թ. սեպտեմբերի 22-ին Ստալինին և Եժովին հղած հեռագրով խնդրում էին «Հայաստանը դաշնակներից ու հակախորհրդային տարրերից մաքրելու համար թույլատրել լրացուցիչ գնդակահարել 700 մարդ: Առաջին կատեգորիայի թույլտվությունը, տրված 500 մարդու համար, արդեն սպառվում է»: Քաղբյուրոն և Չեկան չեն զլանում, թույլատրում են 1500: Հարությունովին, Ստալինի գիտությամբ, առաջին ցուցումները տրվեցին նոյեմբերի 9-ին, ապա 1938թ. հունվարի 31-ին:

Ցուցակները կազմվում էին Մուղղուսու բանտարկությունից հետո ներքին գործերի ժողկոմ նշանակված Վ.Խվորոստյանի անմիջական ցուցումով: Կան փաստեր, որ Հարությունյանին երբեմն հաջողվում էր մեծ ջանքերի գնով Խվորոստյանի ծիրաններից ազատել առանձին հերթական զոհերի:

ՆԳԺԿ ապարատի նախկին աշխատակից Մ.Կարապետյանի «տեղեկանքից»՝ 1953թ. հուլիսի 15-ին հասցեագրված ՀԿ(Բ) Կենտկոմի բյուրոյին. «Եժովի հանձնարարությամբ՝ Խվորոստյանի պատվերով 1937 – 1938 թվականներին ՆԳԺԿ ապարատի կողմից կազմվում էին տեղեկանքներ կուսակցական-խորհրդային և ինժեներատեխնիկական ղեկավար կադրերի վերաբերյալ, նրանց բանտարկելու նպատակով: Ինձ հաստատ հայտնի է, և անհրաժեշտության դեպքում կարող եմ հաստատել, որ ընկ. Հարությունովը շատ դեպքերում վճռականորեն հակազդել է Խվորոստյանի այդ թշնամական դիտավորություններին:

Գործը հասել էր նրան, որ Խվորոստյանը գրավոր բողոքով դիմել է Եժովին, որտեղ մեղադրել է ընկ. Հարությունովին, որ նա արգելակում է ժողովրդի թշնամիներին բանտարկելուն»:

Տեղեկանքի վրա կա Յակով Ջարոբյանի հեռատես մակագրությունը. «Պահել գործում. ընկ. Հարությունյանին կարդացել եմ»:

Այնուհանդերձ ամենագոր ՆԳԺԿ-ն խաղում էր իր դերը, և Հայաստանում զոհ գնացին շատ անմեղ մարդիկ:

Այդ սև էջը դատապարտվեց Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարում ընդունված հատուկ բանաձևում (1990թ. սեպտեմբեր):

Հարությունյանն ինքը, թույլ տված սխալների մասին խոսեց 1938թ. հունիսի սկզբներին կայացած Հայկոմկուսի XI համագումարում:

Գրիգոր Հարությունյանը սկսեց զբաղվել Հայաստանի ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման հարցերով՝ դրսևորելով փայլուն կազմակերպչի և հմուտ ղեկավարի տաղանդ: Ստեղծվել էին սինֆոնիկ նվագախումբ, պետական էստրադա՝ ջազ համույթով, բացվել էին թանգարաններ, Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ՝ երգի և պարի անսամբլ, շահագործման էին հանձնվել Օպերայի և բալետի թատրոնի, հանրային գրադարանի շենքերը:

Մշակութային կյանքում հատկապես մեծ նշանակություն ունեցան երեք մեծ միջոցառումներ, որոնց և՛ նախածեռնողը, և՛ Ստալինի համաձայնությունը ստացողը Գ.Չարությունյանն էր: Դրանք «Սասունցի Դավիթ» էպոսի և Մոսկվայում հայ արվեստի և գրականության տասնօրյակների անցկացման նախածեռնություններն էին: «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական հանձնաժողովի առաջին նիստում Չարությունյանը դրեց «էպոսի ազգային առանձնահատկությունները վերհանելու և խորապես մեկնաբանելու անհրաժեշտության» հարցը: «Չայ ժողովուրդը տոնում է հերոսական էպոսի, մեծագույն երկի՝ «Սասունցի Դավիթ» պոեմի հազարամյակը: Այդ տոնակատարությանը մասնակցում է ամբողջ խորհրդային ժողովուրդը, – գրել է «Պրավդա» թերթը առաջնորդող հոդվածում, – խորհրդային մշակույթի միջոցով «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային մշակույթի ոլորտի մեջ և դառնում մարդկային հերոսական էպոսի մի մասը»:

Երեք գրքերով հրատարակվեց համահավաք տեքստը, որի նախապատրաստումը իրականացվեց Մանուկ Աբեղյանի գլխավորությամբ և Սիեր Աբեղյանի նկարագործումներով: Էպոսի թեմաներով, Գ.Չարությունյանի հանձնարարությամբ իրենց բարձրարժեք գործերը ստեղծեցին Չակոբ Կոջոյանը և Երվանդ Քոչարը:

Մոսկվայում կայացած հայկական արվեստի տասնօրյակի օրերին Մեծ թատրոնում ցուցադրվեցին Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ», Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերաները, Ա.Խաչատրյանի «Երջանկություն» բալետը և այլ գործեր, մայրաքաղաքում կայացան Գ.Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերը, անցկացվեց հայ գրականության տասնօրյակ, բացվեց Չայաստանի կերպարվեստի ցուցահանդես:

1938 – 1941թթ. Չայաստանում անցկացվեցին միջոցառումներ նվիրված Չովհաննես Թումանյանին, Ղազարոս Աղայանին, Միքայել Նալբանդյանին, Խաչատուր Աբովյանին, Սայաթ-Նովային, տեղի ունեցան անվանակոչումներ, բացվեցին տուն-թանգարաններ, հրատարակվեցին հայոց մեծերի շատ ստեղծագործություններ:

Չատկանշական է, որ ազգային մշակույթին մայրենի լեզվով ծանոթանալու, ժողովրդի հոգեբանությունը ավելի լավ

հասկանալու, նրա հետ մոտիկից անմիջական շփվելու համար Գ.Չարությունյանը ժողովրդական մանկավարժ Սիմակ Սահակյանի ուսուցմամբ ձեռնամուխ եղավ հայոց լեզվի տիրապետմանը: Չարությունյանի առաջադիմությունը նշում են ոչ միայն ժամանակակիցները, այլև ինքը:

1956թ. նոյեմբերին, Թբիլիսիում աշխատանքի անցնելու կապակցությամբ լրացված կադրերի հաշվառման թերթիկում «Ի՞նչ լեզուների եք տիրապետում» հարցին, Չարությունյանը պատասխանել է. «ռուսերեն, վրացերեն, հայերեն՝ լավ»:

Նոր էր ժողովուրդը մեջքը ուղղում ստալինյան բռնաճնշումներից, երբ պայթեց պատերազմը:

Չանրահայտ են ստեղծված ծանր վիճակը, հայ ժողովրդի անձնագրի, հիրավի հերոսական աշխատանքը թիկունքում, ուժերի մոբիլիզացումը, ռազմաճակատը զինուժով և ռազմամթերքով ապահովելու, խորհրդա-թուրքական սահմանը անառիկ պահելու գերբնական լարվածությունը:

Քչերին է հայտնի, սակայն, Գ.Չարությունյանի կոնկրետ կազմակերպական աշխատանքը Չայաստանում կազմավորված կամ վերակազմավորված 13 հրաձգային դիվիզիաների, մասնավորապես 6 հայկական դիվիզիաները մարդկային և նյութական միջոցներով ապահովելու, քաղաքական աշխատողներով համալրելու ուղղությամբ:

Պատերազմի առաջին իսկ օրվանից Չարությունյանը գլխավորեց հանրապետության տնտեսությունը վերակառուցելու, կենսագործունեությունը անխափան ապահովելու, աշխատանքը ռազմաճակատի պահանջներին համապատասխանեցնելու գործընթացը: Դրությունը ծանր էր. Չայաստանի սահմաններում կենտրոնացված էր թուրքական 48 դիվիզիաներից 26-ը: Նրանք տեղակայված էին Վան – Երևան, Արդահան – Ախալցխա – Ախալքալաք – Կարս – Լենինական ուղղություններում:

Չարությունյանը անձամբ հետևում էր Չայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմավորմանը, որին հանձնեց մարտական դրոշը, եղավ ռազմաճակատի գծում՝ Գրոզնու շրջանում, հանդիպում ունեցավ 400-րդ գնդի մարտիկների հետ, ելույթ ունեցավ Անդրկովկասի ռազմաճակատի, որի ռազմական խորհրդի անդամ էր, Յյուսիս-Կովկասյան ռազմական խորհրդի

միստում, որտեղ քննարկվում էր դիվիզիայի գործունեության հարցը:

Հետագայում Հարությունյանը վճռական դեր խաղաց հաղթանակով Բեռլին մտած Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիայի ճակատագրում: Հաղթանակից հետո ստացվել էր գլխավոր շտաբի գուժ հրամանը դիվիզիան կազմացրելու մասին: Գործին միջամտեց Հարությունյանը, որը հատուկ նամակով դիմեց պաշտպանության ժողկոմին, իսկ ժողկոմը Ստալինին էր, խնդրանքով, դիվիզիան չկազմացրել, տեղաբաշխել Հայաստանում: Պատասխանը չհապաղեց: Խնդրանքը հարգվեց, դիվիզիան տեղակայվեց Հայաստանում, մնալով ևս 11 տարի:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարը մշտական կապի մեջ էր բոլոր հայկական դիվիզիաների, ռազմաճակատների ռազմական խորհուրդների, հրամանատարության հետ, կազմակերպում էր հանրապետության աշխատավորության բարոյական և նյութական օգնությունը հայ մարտիկներին: Հայաստանից հայկական զորամասեր՝ ռազմաճակատ մեկնեց 15 պատվիրակություն:

Հայաստան էին գալիս հայկական զորամիավորումներից, տեսնում հանրապետության աշխատավորության հայրենամվեր աշխատանքը, այն, որ արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը ոչ միայն նվազել է, այլև աճել. տեսնում էին հոգատարությունը հաշմանդամների, գիտության, կրթության նկատմամբ: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պատերազմի ժամանակվա կարևոր որոշումներից էր «Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների համար Ջերմուկի հանքային ջրերի օգտագործման մասին» 1943թ. օգոստոսի 21-ի որոշումը: Ջերմուկի առողջարանային համալիրի ստեղծման աշխատանքներով անձամբ զբաղվում էր Հարությունյանը:

Հայաստանի նորաստեղծ ակադեմիան ձեռնամուխ եղավ համախմբելու հայ գիտական միտքը, գլխավորելու այն, ժամանակակից գիտական մեթոդներով հիմնավորելու հետազոտություններ և ուսումնասիրություններ, գիտական վերլուծության բովո՞վ անցկացնելու հարազատ ժողովրդի բովանդակ մշակույթը, հայտնաբերելու բյուրեղացած արժեքներ

ազգային և համամարդկային իմաստով, դրանով իսկ իր լուծման ներդնելով Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների գիտությունների գանձարանը, էլ ավելի մեծ չափով ներգործելու հայ ժողովրդի մշակույթի և հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման վրա:

Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի 1943թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ հաստատվեցին ակադեմիայի կանոնադրությունը և կառուցվածքը:

Համաձայն այդ որոշման ակադեմիան համարվում էր հանրապետության գիտական մտքի կենտրոնը: Նա բաղկացած էր ֆիզիկամաթեմատիկական և բնական, կենսաբանական, հասարակական և գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքներից: Այդ բաժանմունքները միավորում էին 24 հիմնարկություններ, որոնցից 15-ը ինստիտուտներ էին: Այդ հիմնարկներն էին ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, երկրաբանության, կենդանաբանության, ֆիզիոլոգիայի, բույսերի գենետիկայի, խաղողագործության և գինեգործության, անասնապահության, երկրագործության, պատմության, լեզվի, գրականության ինստիտուտները, Երևանի աստղադիտարանը, սեյսմիկ և Սևանի հիդրոբիոլոգիական կայանները, միկրոբիոլոգիայի, տնտեսագիտության, հողագիտության սեկտորները, բուսաբանական այգին, պատմության թանգարանը:

1946թ. հունիսի 21-ին ակադեմիայի ընդհանուր ժողովը հաստատեց վիցեպրեզիդենտ Վ.Յ.Համբարձումյանի ներկայացրած «Ակադեմիայի զարգացման հնգամյա պլանը»: Այն բխում էր ԽՍՀՄ, մասնավորապես Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանից, նրա տեխնիկական և գիտական խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Հնգամյա պլանը ընդգրկում էր 95 թեմա, որոնցից 34-ը՝ ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների գծով, 18-ը՝ գյուղատնտեսական, 23-ը՝ կենսաբանական, 20-ը՝ հասարակական գիտությունների գծով:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձված գիտության այն ճյուղերի վրա, որոնք մինչև ակադեմիայի հիմնադրումը հանրապետությունում ներկայացված չէին: Նախատեսվում էր զարգացնել աստրոֆիզիկան, կոսմիկական ճառագայթների

Ֆիզիկական, մաթեմատիկական, սիլիկատների քիմիան, մեխանիկական, էլեկտրատեխնիկական, ագրոքիմիան, ֆարմացևտիկ քիմիան, բույսերի ֆիզիոլոգիան, հասարակական գիտությունների առանձին ճյուղեր: Այդ իսկ պատճառով հետագա տարիներին ակադեմիայի կառուցվածքը ենթարկվեց զգալի փոփոխությունների: 1952թ. ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի բազայի վրա հիմնվեց երկու բաժանմունք՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների և տեխնիկական գիտությունների: Ակադեմիայի կազմում ստեղծվեցին նոր միավորներ՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտները, Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանը, էլեկտրատեխնիկայի լաբորատորիան, փիլիսոփայության սեկտորը, արվեստի տեսության և պատմության սեկտորը, գրականության և արվեստի թանգարանը:

Գ.Հարությունյանի ուշադրության կենտրոնում էր և սփյուռքահայության հետ կապերի ամրապնդման, Սայր հայրենիքի հետ սփյուռքահայության մերձեցման հիմնահարցը: 1944թ. սեպտեմբերի 18-ին Կենտկոմի առաջին քարտուղարը դիմեց ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ՝ արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերություն ստեղծելու մասին միջնորդությամբ. առաջարկությունը ընդունվեց: Ընկերությունը կազմակերպվեց նույն՝ 1944 թվականին:

1945թ. մարտի 19-ին խորհրդային կառավարությունը Թուրքիային տեղեկացրեց 1925թ. դեկտեմբերի 17-ի խորհրդաթուրքական բարեկամության և չեզոքության մասին պայմանագրի ժամկետը լրանալու մասին: Ձևավորվեց խորհրդային Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը այդ հարցում.

1. Բարձրացնել Թուրքիայի կողմից բռնազավթած հայկական տարածքների՝ խորհրդային Հայաստանին վերադարձման հարցը.

2. Կազմակերպել աշխարհով մեկ սփռված հայերի հայրենադարձությունը պատմական հայրենիք.

3. 1921թ. անարդարացիորեն խորհրդային Ադրբեջանին անցած հայկական տարածքների միացումը խորհրդային Հայաստանին:

Այդ խնդիրների առաջ քաշմանը ձեռնամուխ եղավ

Գ.Չարությունյանը, որի հեղինակությունը պատերազմի տարիներին մեծապես աճել էր:


Միայն 1945թ. ապրիլին Գ.Չարությունյանը մի քանի գրություններով դիմում է Ստալինին՝ սփյուռքահայության շրջանում աշխատանքներ սկսելու, Խորհրդային Չայաստանի և Իրանի, Սիրիայի և Լիբանանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, ԱՄՆ-ի, Եգիպտոսի ու Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանատներում հայկական գաղութների գծով խորհրդականի պաշտոն ստեղծելու, գաղութների կյանքը ուսումնասիրելու համար Չայաստանի ժողովխորհի ներկայացուցիչներին հայաշատ երկրներ գործուղելու, սփյուռքահայությանը Խորհրդային Չայաստանի նվաճումներին ծանոթացնելու համար հատուկ ամսագիր՝ «Խորհրդային Չայաստան» հրատարակելու մասին:

Մայիսի 15-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկված գրությունում Չարությունյանը դիմում է լայնամասշտաբ հայրենադարձություն կազմակերպելու խնդիրը: Հուլիսի 6-ին Ստալինին տեղեկացնում է Թուրքիայի հետ պայմանագրի չեղյալ համարելուց հետո հանրապետության բնակչության, մասնավորապես մտավորականության շրջանում տիրող տրամադրության մասին: «Հատկապես աշխույժ խոսակցություն է գնում մտավորականության շրջանում, որոնք սկսել են բացահայտ արտահայտվել այն մասին, թե ուկրաինական, բելոռուսական և այլ ժողովուրդների միավորումից հետո խորհրդային կառավարությունը մեծ տերությունների երեք ղեկավարների հանդիպման ժամանակ կդնի Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիային անցած տարածքների Խորհրդային Չայաստանի հետ միավորման հարցը»: Չարությունյանը, որպես հեղինակություն, մասնավորապես նշում էր Ավետիք Իսահակյանի և Մարտիրոս Սարյանի անունները:

Այս հարցը 1945թ. հուլիսի վերջերին հիրավի դրվեց Պոտսդամի կոնֆերանսում, առաջ քաշեցին Մոլոտովը և Ստալինը, սակայն չստացավ աջակցություն Չերչիլի, Տրումենի և Իդենի կողմից:

Այնուհանդերձ Գ.Չարությունյանը հետևողական էր հայոց պահանջատիրության հարցում, որին նա անդրադարձավ 1945թ.

AG 90559



նոյեմբերի 25-ին «Պրավդայում» տպագրված հոդվածում, ուր գրում էր, որ օգտվելով Հայաստանի անօգնական վիճակից, 1920թ. թուրքական զորքերը զավթեցին Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Կարս, Արդահան, Սարիղամիշ, Կաղզվան քաղաքներով: Ավելի վճռական և հանգամանալից խոսեց 1946թ. փետրվարի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների մախօրյակին՝ Երևան քաղաքի ընտրողների ներկայացուցիչների ժողովում:

Հայկական մարզերը վերադարձնելու հարցը դնում է ամբողջ հայ ժողովուրդը, և պաշտպանվում է Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից. նա գտնում է, որ Թուրքիայի կողմից հայկական հողերը նրանց իսկական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին վերադարձնելը արդարացի է, և որ այդ հարցը խիստ կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար, – հայտարարեց Հարությունյանը:

Կենտկոմի քարտուղարը նկատի ուներ Ամերիկայի հայկական ազգային խորհրդի կողմից 1945թ. ապրիլին Սան-Ֆրանցիսկոյում բացված Միավորված ազգերի կազմակերպության խորհրդատու ժողովին ներկայացրած հուշագիրը: Հուշագրում պահանջվում էր «հայկական հողերի միացումը ազատ, անկախ Հայաստանի գոյություն ունեցող պետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող բոլոր հայերի վերադարձը այնտեղ»:

Սակայն հարցը հօգուտ հայերի չլուծվեց: Սկսվել էր «սառը պատերազմ» հակահիտլերյան դաշինքի երկրների միջև, և Թուրքիան գտավ ԱՄՆ-ի և Եվրոպայի երկրների աջակցությունը: Որոնք հայերի արդարացի պահանջը դիտում էին որպես «կոմունիզմի ծավալում», «Ստալինյան էքսպանսիա»:

Գ.Հարությունյանը Մոսկվայի առաջ դրեց նաև Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին վերամիավորելու հարցը 1945թ. նոյեմբերին Ստալինին գրած նամակում Հարությունյանը ներկայացնում էր հետևյալ հիմնավորումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են: Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը նման է Հայաստանի Լեռնային շրջաններին Հայաստանի կազմի մեջ մտնելը կնպաստի Լեռնային Ղարաբաղի զարգացմանը, տնտեսության ղեկավարման բարելավմանը, իսկ

Հայաստանի հանրապետական մարմինների ղեկավարման պայմաններում կուժեղանա բնակչությանը մայրենի լեզվով կուլտուր-մասսայական և քաղաքական սպասարկումը:

Լեռնային Ղարաբաղի մարզի միացումը Հայաստանին տեղական կադրերին հնարավորություն կտա Հայաստանի բուհերում շարունակել իրենց ուսումը մայրենի լեզվով, մյուս կողմից Հայկական ԽՍՀ-ն կարող է ստանալ ազգային կադրեր Լեռնային Ղարաբաղի մարզից, որոնք աչքի են ընկնում իրենց գործնականությամբ, և ներկայումս, բնականաբար, չեն կարող լրիվ օգտագործվել Ադրբեջանում:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի առաջ դրվում էր հարց Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մտցնել Հայկական ԽՍՀ-ի կազմ որպես Ղարաբաղի մարզ: Ընդգծելով, որ դա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ցանկությունն է, Հարությունյանը, հարցի դրական լուծման դեպքում, գտնում էր անհրաժեշտ լուծելու նաև Ղարաբաղի նախկին կենտրոնի՝ ավերված Շուշի քաղաքի վերականգնման հարցը:

Գ.Հարությունյանը և Հայաստանի կառավարությունը միաժամանակ շարունակում էին կենտրոնի առաջ բարձրացնել հայրենադարձության հարցը: ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1945թ. նոյեմբերի 21-ին ընդունում է որոշում հայերի ներգաղթի մասին: Հարությունյանի ձեռքով գրած որոշման նախագիծը ընդունվում է առանց փոփոխության: 1945թ. դեկտեմբերին Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվում է «Արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտե»:
ԽՍՀՄ կառավարությունը ընդունեց ևս երկու որոշում՝ 1946թ. փետրվարին և հունիսին, նախագծերը զրված էին Հարությունյանի ձեռքով, արդեն հուլիսին Հայաստան ժամանեցին սփյուռքահայերի առաջին խմբերը՝ մոտ 50000 մարդ:

Հոկտեմբերի 8-ին Հարությունովը Ստալինին զեկուցում է հայրենադարձության ընթացքի և դժվարությունների մասին.

1. Բնակարանների պակասի պատճառով ժամանողներին հաճախ տեղավորում են բնակության համար ոչ պիտանի շինություններում, որը առաջ է բերում արդարացի դժգոհություն, իսկ բնակարանների կառուցումը դանդաղում է, որովհետև պակասում է տարածքը:

2. Ժամանող բնակչության հիմնական զանգվածը արհեստավորներ են, և երբ նրանց տեղավորում են գյուղական վայրերում, նրանք դժգոհում են:

3. Իրանից, Սիրիայից և Լիբանանից ժամանածները վատ են հագնված և մոտակա ծմռանը նրանք պատրաստ չեն, իսկ խանութներում հագուստ չկա:

4. Ժամանողները թեյ են խմում, իսկ խանութներում շաքար չկա:

Հարությունյանը խնդրում էր Ստալինին Հայաստանին հատկացնել հագուստ, կոշիկ և շաքար՝ հայրենադարձներին բավարարելու, շինանյութ՝ բնակարաններ կառուցելու համար:

Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ա.Վոզնեսենսկուն ներկայացվում են ճշտված տվյալներ՝ ինչից ինչքան է անհրաժեշտ: Հայրենադարձներին աշխատանքի տեղավորելու համար Երևանում կառուցվում է լուսատեխնիկական գործարան:

Առանձին հայրենադարձներ չդիմացան դժվարություններին, 21 հոգի անցավ սահմանը, 110-ը բռնվեց սահմանն անցնելու փորձ կատարելիս:

Սկսվեց հակահայկական կոմպանիան:

1947 – 1948թթ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, ներքին գործերի ժողկոմատը և այլ մարմիններ հեղեղվեցին «հայկական մացիոնալիզմը», «հայկական անջատողական ձգտումները», «ծովից ծով Հայաստան» ստեղծելու նկրտումները «ներկացնող» գրպարտչական նամակներով:

1947թ. հունիսի 21-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Մ.Բադիրովը նամակով դիմեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմ՝ Մարիետա Շահինյանի՝ 1946թ. հրատարակած «Խորհրդային Անդրկովկաս» գիրքը շրջանառությունից հանելու պահանջով, միայն այն բանի համար, որ Մ.Շահինյանը Լեռնային Ղարաբաղը անվանել էր «Հայկական երկրամաս», «Հայաստանի մի կտոր», Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելը բնորոշել որպես «դեն նետված, քանդված երկիր»:

Լ.Բերիային 1947թ. նոյեմբերին ուղղված նամակում «Թուրքիայի բարեկամները» առաջ քաշեցին «Բարձրացնենք զգոնությունը և ջախջախենք հայկական բուրժուական

նացիոնալիզմը» կարգախոսը, պահանջեցին «մոբիլիզացնել խորհրդային հասարակայնությունը և անվտանգության մարմիններին վճռական պայքարի հանել ընդդեմ այդ խոցի»: Նրանք հանդես էին գալիս հայերի հայրենադարձության դեմ, հայրենադարձությունը ներկայացնելով որպես «Մեծ Հայաստան» ստեղծելու և ԽՍՀՄ-ից անջատվելու միջոց, իսկ հայրենադարձներին՝ Թուրքիայի դեմ պատերազմի հրծիգներ:

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Չարկվիանին նույն օրերին հատուկ նամակով Ստալինին «տեղեկացրեց» Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում հայ ազգայնականների «պառակտիչ» գործունեության և նրանց մեկուսացման անհրաժեշտության մասին: Ստալինը այդ «դոմոսը» ուղարկեց Բերիային*:

Հակահայկական ուժերի զրպարտությունը և սադրանքը ունեցավ կործանարար նշանակություն. հայրենադարձությունը, Ստալինի՝ 1948թ. սեպտեմբերի 13-ին Գ.Մալենկովին հղած հեռագրից հետո, կասեցվեց: «Հայ հայրենադարձների մեջ կան ամերիկյան հետախույզներ, որոնք նախապատրաստել են դիվերսիա «Պոբեդա» նավի վրա», – ասված էր հեռագրում:

Դրսևորելով հերթական ստրկամտություն, նույն օրը, 1948թ. սեպտեմբերի 13-ին Մալենկովը հեռագրեց Ստալինին. «Դուք անպայման ճիշտ եք, որ հայ հայրենադարձների մեջ կան ամերիկյան հետախույզներ, որոնք իրականացրել են դիվերսիա «Պոբեդա» ջերմանավի՝ Բաթումից Օդեսա դուրս գալուց առաջ, հայերի ափ իջնելուց առաջ, կամ ընթացքում: Մենք ձեռք կառնենք բոլոր միջոցները»: Մեկ օր հետո, սեպտեմբերի 14-ին, Մալենկովը հեռագրեց Ստալինին. «ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի՝ սեպտեմբերի 14-ի որոշմամբ արտասահմանյան հայերի հայրենադարձությունը ԽՍՀՄ անհապաղ և անմիջապես դադարեցված է և արգելված նրանց ընդունումը Հայաստանում, անկախ նրանից, թե որտեղից են ներգաղթողները: «Պոբեդա» ջերմանավի մասին առաջարկությունները, շարադրված Ձեր հեռագրի չորս կետերում, ընդունված են որպես քաղբյուրոյի որոշում»: Հեռագրերը գրված են Մալենկովի ձեռքով: Հայրենադարձների մեղքի հաստատման անհրաժեշտություն չէր

* Փաստաթուղթը հայտնաբերել է ակադեմիկոս Գ.Գալոյանը:

պահանջվում: Ստալինը, ոչ առանց Բերիայի, իր խոսքն արդեն ասել էր:

Զօգնեց և «Թուրքիայի բարեկամների» սադրիչ գործողությունների դեմ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին 1948թ. հոկտեմբերին Գ.Հարությունյանի ուղղած նամակը, որը փաստորեն պատասխան էր հակահայկական վայնասուն բարձրացրած բոլոր զրպարտիչներին:

«Թուրքիայի բարեկամների» կողմից գրված նամակի հեղինակին բնորոշելով որպես «Թուրքիայի կողմից զավթած հայկական հողերի հարցում Թուրքիայի հետադիմական կառավարողների շահերի պաշտպան» և պանթուրքիզմի գաղափարախոսության ջատագույններ, Գ.Հարությունյանը տեղեկացնում էր, որ նրանք նպատակ ունեն ժխտել Թուրքիայում հայկական հողերի գոյությունը՝ նրանց օրինական տերը համարելով թուրքերին, «խեղաթյուրելով թուրքական դաժան լծի դեմ և Թուրքահայաստանի ազատագրման համար հայ ժողովրդի պայքարի պատմությունը, այն ներկայացվում է որպես հայ ազգայնականների գործ»: Հետաքրքիր է և թուրքերի կողմից Հայաստանի նվաճման բացատրությունը. «Թուրքերը առաջին անգամ հայկական հողեր մտան 1514թ. որպես հափշտակիչներ, 1555թ. և 1639թ. վերջնականապես նրանք Հայաստանը բաժանեցին Պարսկաստանի հետ և շարունակում են տիրել այդ հողերին մինչև օրս: Ռուսական Հայաստանի շատ տարածքներ Թուրքիան զինագրավել է 1918 – 1920թթ.»:

Հարությունյանը գրում էր. «Նամակի հեղինակը շրջանցում է թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդին պատճառած մեծագույն ողբերգությունը, որի հետևանքով Թուրքահայաստանում ոչնչացվեց մոտ մեկ միլիոն հայ, մոռացվում է և այն փաստը, որ հայ բնակչության մնացած մասը, թուրքական կոտորածներից փրկվելու համար ստիպված էր իր սեփական հայրենիքից փախչել աշխարհի բոլոր կողմերը: Այսօր բոլորին հայտնի է, որ Հայրենիք վերադառնում են աշխատավոր հայեր»:

ՊԱԿ-ի կազմած նախագծով ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1949թ. մայիսի 29-ին ընդունեց որոշում՝ «Վրացական, Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ից, ինչպես նաև Սև ծովի

առափնյա տարածքից արտաքսվածների տեղափոխության, վերաբնակեցման և աշխատանքի տեղավորման ապահովման մասին»: Արտաքսումը տարածվում էր «Դաշնակցականների, թուրքական քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող թուրքերի, խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին թուրքական քաղաքացիների, հունահպատակների, քաղաքացիություն չունեցող նախկին հունահպատակների» վրա: Աքսորավայր ընտրված էր Ալթայի երկրամասը:

ԽՍՀՄ ՊԱԿ-ի խիստ զաղտնի կազմած ցուցակներով և նրա՝ մայիսի 28-ի հրահանգով, միայն Հայաստանից արտաքսվեց 2754 ընտանիք՝ 12136 մարդ: Նրանք որպես դաշնակցականներ, ռազմագերիներ, անբարեհույսներ հայտնվեցին ԳՈՒԼԱԳՈՒՄ, Ալթայի երկրամասում և այլ քսորավայրերում: Օպերացիան երևանում դեկավարում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի բարձր պաշտոնյա, զեներալ-գնդապետ Բոգդան (Բախչի) Քոբուլովը:

Հարությունյանը սպասվող ոճրագործության մասին իմացավ հունիսի 11-ին. Հայաստանի կոմկուսի Կենտկոմում, Քոբուլովի հաղորդումից հետո: Ժամանակակիցները նշում են, որ նա այդ լուրը ընդունեց խիստ բացասական, որի ապացույց են և նրա հետագա քայլերը:

Այդ ոճրագործություններից անմիջապես հետո Կենտկոմի քարտուղարը հանձնարարում է ստուգել Կենտկոմի հասցեով ստացված դիմումները, յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ պահանջում տեղեկանք: Եվ, ինչպես վկայում են փաստաթղթերը, մի շարք դիմումներ ստացել են դրական պատասխան:

Փաստաթղթերը վկայում են, որ 1949 թվականի ոճրագործությունը շարունակվել է և հետագայում: 1951թ. օգոստոսի 10-ին խորհրդային Միության նախարարների խորհուրդը ընդունեց ազգային անվտանգության նախարարության առաջարկությունը՝ Վրացական ԽՍՀ-ում 1949թ. քսորից դուրս մնացած 69 իրանցիների, թուրքերի և դաշնակների քսորի մասին: Հանձնարարվում էր ցուցակները համաձայնեցնել Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Չարկվիանու հետ:

Գ.Հարությունյանը ուղիներ էր փնտրում բռնագաղթածների վիճակը թեթևացնելու և արդարությունը վերականգնելու համար:

Պրա վկայությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1953թ. հունիսի 6-ի որոշումն է «ԽՍՀՄ պետական անվտանգության նախարարության՝ 1949թ. մայիսի 28-ի հրահանգի համաձայն Հայկական ԽՍՀ տարածքից Ալթայի երկրամաս աքսորված անձանց դիմումների մասին»;

Գ.Հարությունյանի ստորագրած այդ որոշման մեջ ասված է.

1. ԽՍՀՄ ՊԱԿ-ի՝ 1949թ. մայիսի 28-ի հրահանգի իրականացման ժամանակ թույլ տրված սխալների առկայության պատճառով անհրաժեշտ համարել կատարել այն անձանց գործերի ստուգում, որոնք 1949թ. Հայկական ԽՍՀ տարածքից արտաքսվել են Ալթայի երկրամաս:

2. Հանձնարարել Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախարար ընկ. Մարտիրոսովին հարց բարձրացնել ԽՍՀՄ ՆԳՆ առաջ Հայկական ԽՍՀ-ից աքսորված անձանց գործերի վերադարձման վերաբերյալ, տեղում ստուգելու համար:

Որոշումը ընդունվել է Ստալինի մահից հետո, Բերիայի բանտարկությունից 20 օր առաջ:

Մինչ այդ Հայաստանի ղեկավարությունը արմատապես փոխել էր վերաբերմունքը և հայ առաքելական եկեղեցու նկատմամբ:

1952թ. փետրվարին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ.Մալենկովին գրած նամակում, ընդառաջելով ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ վեցերորդ Չորեքչյանի առաջարկներին, Հարությունյանը հարց էր դնում թույլատրել 1953թ. գարնանը էջմիածնում՝ «Հայ առաքելական եկեղեցու կենտրոնում» կատարել մեռոնի եփում, որը չէր եղել 20 տարի, անցկացնել համաժողով՝ եկեղեցական կանոնադրություն (սահմանադրություն) ընդունելու և ամենայն հայոց կաթողիկոս ընտրելու համար, խորհրդային և արտասահմանյան քաղաքացիներից թեմերի պետեր, եկեղեցու սպասավորներ ձեռնադրել, տրամադրել ֆինանսական միջոցներ էջմիածնի Գևորգյան ծեմարանի գործունեությունը և «էջմիածին» ամսագրի հրատարակությունը ապահովելու համար: Թույլտվությունը տրվեց:

Ստալինի մահը և Բերիայի բանտարկությունը երկրում առաջացրին քաղաքական նոր իրադրություն:

«Բերիայի հանցագործ հակակուսակցական գործունեության

մասին» հարցը քննարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում: Գ.Չարությունյանը հանդես եկավ հուլիսի 4-ի նիստում: Նշելով Բերիայի ջարդարարական գործունեությունը Վրաստանում, Չարությունյանը նրան բնորոշեց որպես «կարիերիստ և ավանտյուրիստ»:

Չարությունյանի ճառը ընդհատվեց ընդամենը մեկ անգամ, Բաղիրովինը՝ տասնյակ անգամներ:

Սակայն Չայաստանում դրությունը հանգիստ չէր: Առանձին գործիչներ ահազանգում էին Մոսկվա՝ Չարությունյանի «Բերիայի մարդ» լինելու մասին: Նրանք չէին մոռացել Ն.Խրուշչովի՝ Չարությունյանին նետած խոսքը՝ «կհանդիպենք նեղ ճանապարհին»:

Չարցը նրանում էր, որ 1951թ. մարտին Չարությունյանը հանդես էր եկել «ագրոքաղաքների» ստեղծման խրուշչովյան ծրագրի դեմ, այն համարել «ֆանտաստիկ» և «հիբրիդ», գյուղի և գյուղացու շահերին հակասող, նրանց տնամերձ հողակտորին հարվածող:

Եվ «հանդիպումը նեղ ճանապարհին» կայացավ. 1953թ. սեպտեմբերին Կենտկոմի քարտուղարության նիստում. առաջին քարտուղար Խրուշչովը դրեց Չարությունյանին աշխատանքից ազատելու հարցը, պատճառաբանելով որ «Բերիայի դրածոն չի կարող օգտվել կուսակցության քաղաքական վստահությունից»:

Խրուշչովի պահանջը իրականացվեց Չայաստանի կոմկուսի Կենտկոմի՝ 1953թ. նոյեմբերյան պլենումում:

Աշխատանքից ազատելը պատճառաբանվեց հետևյալ «մեղքերով». «չի բացահայտել իր հարաբերությունները Բերիայի հետ, ինչպես վայել է կոմունիստին և ղեկավարին»:

Պլենումից հետո մի քանի սկզբնական կազմակերպություններ սուր քննադատության են ենթարկել Կենտկոմի և Չարությունյանի գործունեությունը, իսկ Չարությունյանը բյուրոյի հուլիսի 17-ի որոշումը որպես տեղեկատվություն ուղարկել է ԽՄԿԿ Կենտկոմ, որտեղ փորձել է կոծկել Կենտկոմի քարտուղարների հասցեին եղած սուր քննադատությունը և մի շարք կոմունիստների անհիմն մեղադրել է ազգայնականության մեջ:

– Կենտկոմի բյուրոյում և քարտուղարությունում չի եղել

կոլեգիալություն, շատ հարցեր Հարությունյանը լուծել է միանձնյա կամ երկրորդ քարտուղարի հետ:

– Ղեկավար աշխատանքի առաջադրել է մարդկանց, որոնք չեն վայելել հարգանք և հեղինակություն: Հանրապետության ղեկավարների թվում եղել են մարդիկ Բերիայի շրջապատից:

– Սխալ է ղեկավարել գաղափարական աշխատանքը, հրապարակվել են գրքեր քաղաքական լուրջ սխալներով:

– 16 տարի աշխատելով Հայաստանում, չսովորեց հայերեն, որն առաջացնում է արդարացի դժգոհություն:

– Կենտկոմի բյուրոն և նախարարների խորհուրդը թույլ են տվել մեծ սխալներ և թերություններ գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում: Ցածր բերքատվության պատճառով աշխօրերի դիմաց տրվում է չնչին բնամթերք և դրամ:

– Աշխատավորությունը գտնվում է բնակարանային ծայրահեղ վատ վիճակում:

Ընդունելով շատ մեղադրանքներ, և այն, որ 1931 – 1936թթ. մոտ հարաբերությունների մեջ է եղել Բերիայի հետ, Հարությունյանը պարզաբանում է, որ հետո նրա հետ ոչ մի կապ չի ունեցել. Մոսկվայում գործով հանդիպել է նրա հետ 3 – 4 անգամ՝ 10-ական րոպե: Պատասխանելով հարցադրումներին ասում է. դպրոցներ, կոլտնտեսություններ, կոմունիստական համալսարանը, պրոպագանդիստի տունը Բերիայի անունով է կոչվել մինչև իր երևան գալը, և իր օրոք նրա անունով կոչվել է մի փողոց և Երևանում մի շրջան:

Աշխատանքից ազատվելուց հետո Հարությունյանը երկու տարի գլխավորեց էջմիածնի խորհրդային հետամնաց տնտեսություններից մեկը, հասցնելով առաջավորների շարքը:

Սակայն շարունակվում էր Հարությունյանի հետապնդումը, «հիմնավորված», բայց անհիմն փաստարկները նրան պատասխանատվության կանչելու մասին: Հայաստանից ուղարկվում էին նոր «փաստարկներ», ընդհանուր հայտարարություններով:

Կենտկոմի մանրակրկիտ ստուգումները սպասված արդյունքը չտվեցին:

Հարությունյանին հայտարարվեց խիստ նկատողություն՝ կադրերի ոչ ճիշտ ընտրության համար: Բաղիրովի և նրա

շրջապատի ճակատագիրը հայտնի է:

Հարությունյանը, որը երկու անգամ տարել էր վիրահատություն, վախճանվեց 1957թ. նոյեմբերի 9-ին, 57 տարեկան հասակում, Թբիլիսիում, ուր աշխատում էր հանրապետության պետպլանում, Հայաստանի մայրաքաղաքում նրա համար աշխատանք չէր գտնվել:

Սերունդները հիշում են Հարությունյանին՝ տեսնելով Հայաստանը, նրա քաղաքներն ու մայրաքաղաքը, պալատների նմանվող արդյունաբերական ձեռնարկությունները, քաղաքի կանաչ գոտիները ու հրապարակները, գիտությունը, մշակույթը, կրթությունը, նրա տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Հայ ժողովրդի հաջողությունների 17 տարին անխզելիորեն կապված են Գ.Հարությունյանի անվան հետ: Ի դեմս Հարությունյանի մենք ունենք ազգային ու պետական անվանի գործիչ, որը իր կենդանության ժամանակ ժողովրդի կողմից արժանացել է «Գրիգոր Շինարար» կոչմանը:

Հարությունյանի անաչառ և ընդգրկուն գնահատականը կտա պատմությունը:

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս

1. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

1941թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան խախտելով 1939թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի հետ 10 տարի ժամանակով կնքված չհարձակման պայմանագիրը, առանց նախօրոք պատերազմ հայտարարելու, ուխտադրժորեն ու հանկարծակի հարձակվեց Խորհրդային Միության վրա: Հիտլերականները նպատակ էին դրել կայծակնային պատերազմի միջոցով, մի քանի շաբաթվա ընթացքում ջախջախել Կարմիր բանակը, զավթել ԽՍՀՄ տարածքի զգալի մասը, ոչնչացնել խորհրդային պետությունը, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել Գերմանական մեծ կայսրություն: Դրա հետ մեկտեղ Հիտլերը նախօրոք պլանավորել և նախատեսել էր նաև Խորհրդային Միության ժողովուրդների զանգվածային կոտորածներ: Դեռևս 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա. «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին», – իր գեներալներին ոգևորելու համար ցինիկաբար նետել էր Ֆյուրերը¹:

Օգտվելով հանկարծակի հարձակման հետևանքով ձեռք բերած նախաձեռնությունից, ավիացիայի և տանկերի թվական գերակշռությունից, ինչպես նաև պատերազմի նախօրյակին Ստալինի թույլ տված կոպիտ սխալներից, գերմանաֆաշիստական զորքերը զգալի հաջողությունների հասան: Հունիսի 22-ի կիրակի օրը նրանց հաջողվեց 250 – 300 կմ խորությամբ ռմբակոծել Մոլդովայի, Ուկրաինայի, Բելոռուսի և Մերձբալթյան հանրապետությունների տնտեսական և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կենտրոնները, մեծ վնաս պատճառել հատկապես օդանավակայաններում գտնվող խորհրդային ավիացիային (հունիսի 22-ին ֆաշիստները ոչնչացրին 1200

¹ "The New-York Times", Nov. 24, 1945, p. 7.

խորհրդային ինքնաթիռ, որից շուրջ 900-ը գետնի վրա, միայն Արևմտյան ռազմաճակատը առաջին օրը կորցրեց 738 ինքնաթիռ)² և սրընթաց կերպով շարժվել դեպի արևելք՝ Լենինգրադի, Մոսկվայի և Կիևի հիմնական ուղղություններով: Ծանր վտանգ կախվեց երկրի վրա: Խորհրդային կառավարությունը գնահատելով ստեղծված դրությունը, հունիսի 22-ին հանդես եկավ հայտարարությամբ, որի տեքստը ցերեկվա ժամը 12-ին ռադիոյով կարդաց ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, արտաքին գործերի նախարար Վ.Ս.Մոլոտովը. «1941թ. հունիսի 22-ի առավոտյան ժամը 4-ին առանց պատերազմ հայտարարելու գերմանական զորքերը հարձակվեցին ԽՍՀՄ-ի վրա, ռմբակոծվեցին ժիտոմիրը, Կիևը, Սևաստոպոլը, Կառևասը և այլ քաղաքներ, – նշված էր հայտարարության մեջ: – Այդ հարձակումը քաղաքակիրթ ժողովուրդների պատմության մեջ անօրինակ մի ուխտադրություն է...»: Հիշեցնելով Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան, Մոլոտովը այնուհետև նշում է, որ «ժողովուրդը նորից հաղթական Հայրենական պատերազմ կմղի հայրենիքի համար: Մեր գործը արդար է: Թշնամին կջախջախվի: Հաղթանակը մերը կլինի, քանի որ մեր գործն արդար է»³:

Նույն օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հրամանագրեր ընդունեց երկրի մերձճակատային շրջաններում պատերազմական դրություն հայտարարելու և այդ պայմաններում զինվորական ու քաղաքացիական իշխանությունների իրավասությունների ու խնդիրների, ինչպես նաև ԽՍՀՄ 14 զինվորական օկրուգներում 1905 – 1918թթ. ծնված զինվորական ծառայության համար պիտանի քաղաքացիներին բանակ գորակոչելու մասին⁴: Հունիսի 23-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեցին ԽՍՀՄ Զինված ուժերի Գլխավոր հրամանատարության զորակայան ստեղծելու մասին, որը օգոստոսի 8-ից կոչվեց Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայան⁵: Հունիսի 29-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդունեցին ղեկավար

² 50 лет Вооруженных Сил СССР, М., 1968, с. 259.

³ “Правда”, 23 июня, 1941.

⁴ Նույն տեղում:

⁵ А.М.Василевский, Дело всей жизни, М., 1984, с. 97, 99.

հրահանգ՝ ուղղված մերձնակատային մարզերի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, որտեղ շարադրվեց խորհրդային ժողովրդի պայքարի ծրագիրը⁶։ Հունիսի 30-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ ստեղծվում է պատերազմի ժամանակաշրջանի արտակարգ մարմին՝ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտե՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Ի.Վ.Ստալինի գլխավորությամբ։ Պաշտպանության պետական կոմիտեի ձեռքում էր կենտրոնացվում ամբողջ պետական իշխանությունը երկրում։ Բոլոր քաղաքացիները կուսակցական, խորհրդային, կոմերիտական և զինվորական մարմինները պարտավոր էին անվերապահորեն կատարել Պաշտպանության պետական կոմիտեի բոլոր որոշումներն ու կարգադրությունները⁷։ Հուլիսի 3-ին ռադիոյով ժողովրդին դիմեց Ի.Վ. Ստալինը, որը սկսված պատերազմը բնորոշեց որպես Հայրենական պատերազմ և կոչ արեց երկրի ողջ բնակչությանը ոտքի կանգնել գերմանաֆաշիստական զավթիչներից հայրենիքը պաշտպանելու համար⁸։ Հուլիսի 10-ին Ի.Վ.Ստալինը նշանակվեց Գերագույն հրամանատարության զորակայանի նախագահ, հուլիսի 19-ին ԽՍՀՄ Պաշտպանության ժողկոմ, իսկ օգոստոսի 8-ին՝ ԽՍՀՄ Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար⁹։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի, ժողկոմխորհի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության, Պաշտպանության պետական կոմիտեի և Ջորակայանի որոշումները, ղեկավար հրահանգները, հրամանները, կոչերը կարևոր նշանակություն ունեցան գերմանաֆաշիստական զավթիչների դեմ խորհրդային ժողովրդի պայքարը կազմակերպելու և ղեկավարելու գործում։

Պատերազմի հենց առաջին օրերին ֆաշիստական Գերմանիայի ընտիր բանակները, որ մինչ այդ հեշտ հաղթանակներ էին տարել Արևմտյան Եվրոպայում ու

⁶ *Решение партии и правительства по хозяйственным вопросам, т. 3, М., 1968, с. 38 – 40.*

⁷ *КПСС о Вооруженных Силах Советского Союза, Документы, 1917 – 1968, М., 1969, с. 302.*

⁸ *“Известия”, 4 июля 1941.*

⁹ *Советская Военная Энциклопедия, т. 7, М., 1979, с. 516.*

հաղթարշավով հասել ԽՍՀՄ սահմանները, իրենց համար անսպասելի հանդիպեցին խորհրդային սահմանապահների, ցամաքային ու ծովային ուժերի հերոսական դիմադրությանը և հսկայական կորուստներ կրեցին: 1941թ. ամռանը և աշնանը խորհրդային զորքերը հյուսիսարևմտյան(Մերձբալթիկա – Լենինգրադ), կենտրոնական (Սմոլենսկ – Մոսկվա) և հարավարևմտյան (Կիև, Օդեսա, Դոնի Ռոստով, Ղրիմ) ուղղություներով մղում էին համառ, ծանր ու արյունահեղ պաշտպանական մարտեր, հակառակորդին պատճառում կենդանի ուժի ու տեխնիկայի հսկայական կորուստներ, դանդաղեցնում նրա առաջխաղացումը, դրանով իսկ վիժեցնում կայծակնային հարվածով մի քանի շաբաթում ԽՍՀՄ-ը խորտակելու Յիտլերի սին պլանները:

2. Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՉԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ ՀԱՍԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

ա) ՈԱԶՄԱՍՈՐԲԼԻԶԱՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐ ԵՎ
ՈԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ինչպես միշտ, այնպես էլ 1941թ. հունիսի 21-ի շաբաթ օրը ԳԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Չարոբյունյանի համար սովորական աշխատանքային օր էր, որը տևեց մինչև ուշ գիշեր և շարունակվեց մինչև լուսաբաց: Մոսկվայից ստացված գաղտնի լրատվությունը զգուշացնում էր գերմանաֆաշիստական զորքերի ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու հնարավորության մասին: Առաջին քարտուղարի հետ իրենց աշխատասենյակներում էին գտնվում ինչպես Կենտկոմի, այնպես էլ հանրապետության կառավարության անդամները, պետական, կուսակցական, խորհրդային մարմինների ղեկավարները: Գիշերվա ժամը 2-ն անց 35 ռոպեին ՉամԿ(բ)Կ Կենտկոմից ստացվեց սահմանամերձ զինվորական օկրուգների հրամանատարություններին ուղղված հրամանը՝ հունիսի 22-ի գիշերը զորքերը մարտական պատրաստության բերելու և պետական սահմանի պաշտպանական շրջանների կրա-

կակետերում կենտրոնանալու, ինչպես նաև պատրաստ լինելու գերմանացիների և նրանց դաշնակիցների հանկարծակի հարվածը ետ մղելու համար¹⁰: Սակայն մինչև այդ փաստաթուղթը կհասներ օկրուզներ, գերմանական ինքնաթիռները, հրետանին հունիսի 22-ի վաղ առավոտյան՝ ժամը 3-ն անց 15 թռպեին, զանգվածաբար ռմբակոծում էին խորհրդային ռազմական օբյեկտներն ու քաղաքները: Ժամը 4-ին մոտ Գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ, խորհրդային Միության հերոս Գ.Կ.ժուկովը զանգահարեց Ի.Վ.Ստալինին և հայտնեց գերմանական զորքերի հարձակման մասին: Ժամը 5-ն անց 45 թռպեին Ստալինի մոտ հավաքվեցին Պաշտպանության ժողկոմ, խորհրդային Միության մարշալ Ա.Կ.Տիմոշենկոն, Գլխավոր շտաբի պետ Գ.Կ.ժուկովը, արտաքին գործերի նախարար Վ.Մ.Մոլոտովը, ներքին գործերի ժողկոմ Լ.Պ.Բերիան և ԽՍՀՄ ժողկոմխորհի բյուրոյի անդամ Լ.Զ.Մեխլիսը: Ժամը 7-ն անց 15-ին ընդունվեց պաշտպանության ժողկոմի թիվ 2 ղեկավար հրահանգը, որով խորհրդային զորքերին կոչ էր արվում բոլոր ուժերով ու միջոցներով հակահարված տալ թշնամուն, սակայն չանցնել պետական սահմանը և այլն¹¹: Այս ամենի մասին անմիջապես տեղյակ պահվեց ոչ միայն արևմտյան, հյուսիսարևմտյան և հարավարևմտյան սահմանամերձ զինվորական օկրուզների հրամանատարությանը, այլև միութենական հանրապետությունների կուսակցական, պետական ղեկավարությանը: Առավոտյան ստեղծված իրավիճակի մասին Գրիգոր Չարությունյանին ավելի լայն տեղեկություն տվեց Անդրկովկասյան զինվորական օկրուզի հրամանատարությունը: Չարկ է նշել, որ Գ.Ա.Չարությունյանը ի պաշտոնե Անդրկովկասյան զինվորական օկրուզի, ապա ռազմաճակատի խորհրդի անդամ էր, ուներ գեներալ-մայորի զինվորական կոչում: Չամապատասխանաբար Անդրկովկասյան զինվորական օկրուզի, ապա ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամներ էին Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Կ.Ն.Չարկվիանին և Միրջաֆար Բաղիրովը: Արդեն առավոտյան Չայաստանի բոլոր շրջկոմների քարտուղարները զգուշացված էին զգոնություն ցուցաբերելու և սահմանապահների

¹⁰ Великая Отечественная война 1941 – 1945, кн. 1, М., 1998, с. 130.

¹¹ Նույն տեղում, էջ 130 – 131:

հետ օպերատիվ կապ պահպանելու մասին: Առավոտյան ժամը 8-ին Գրիգոր Հարությունյանի մոտ հավաքվեցին համարապետության ժողկոմխորհի նախագահ Արամ Սերգեյի Փիրուզյանը, զինկոմ, գնդապետ Գարեգին Կիրակոսի Ասատրյանը, Կենտկոմի ռազմական բաժնի վարիչ Ա.Ա.Մկրտչյանը, բյուրոյի մնացած անդամները: Մինչև ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի արտահերթ նիստի հրավիրումը, Գր.Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց Ի.Վ.Ստալինի և Վ.Մ.Մոլոտովի կողմից ստորագրված հեռագրի տեքստի մասին, որտեղ նշված էր պատերազմն սկսվելու մասին: Հեռագիրն ստանալուց անմիջապես հետո, Գր.Ա.Հարությունյանը հեռախոսով կապվել էր ինչպես Մոսկվայի, այնպես էլ Թբիլիսիի հետ, ստացել նոր պարզաբանումներ ՀամԿ(բ)Կ Կենտկոմից և Անդրկովկասյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դ.Տ.Կոզլովից: Շուտով առաջին քարտուղարի մոտ ժամանեց օկրուգի հրամանատարի հատուկ հանձնակատարը: Հունիսի 22-ին ժամը 12-ին Վ.Մ.Մոլոտովի ռադիոելույթը լսելուց հետո արդեն բոլորի մոտ չքացավ կասկածը, որ գուցե գիշերային ընդհարումները սոսկ սադրանք են եղել, քանի որ դեռ թարմ էր բոլորի հիշողության մեջ հունիսի 14-ի ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը: Այդ հաղորդագրության մեջ պաշտոնապես ասված էր, որ օտարերկրյա, հատկապես անգլիական մամուլում լուրեր են տարածվում ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև մոտ ժամանակներս պատերազմ սկսվելու մասին. «Չնայած այդ լուրերի ակնհայտ անմտությանը, – ասված էր հաղորդագրության մեջ, – ՏԱՍՍ-ը լիազորված է հայտարարելու, որ այդ լուրերը ԽՍՀՄ-ին ու Գերմանիային թշնամի ուժերի կողմից անշնորհք կերպով թխված պրոպագանդա են հանդիսանում, ուժեղ, որոնք շահագրգռված են պատերազմի ընդարձակմամբ ու սանձազերծմամբ»¹²: Հարկ է նշել, որ ՏԱՍՍ-ի այս հաղորդագրությունը ապակողմնորոշիչ նշանակություն էր ունեցել ինչպես երկրի ամբողջ բնակչության, այնպես էլ բանակի հրամանատարական-քաղաքական կազմի լայն շրջանների համար: Ուստի, պատահական չէր, որ նույնիսկ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամների և պետական գործիչների մոտ մինչ Մոլոտովի ռադիոելույթը դեռևս ինչ-որ

¹² «Սովետական Հայաստան», 14 հունիսի 1941:

կասկածամտություն էր տիրում, որն անմիջապես փարատվեց: Բոլորի վրա մեծ տպավորություն է թողել հատկապես խորհրդային կառավարության հայտարարության լավատեսական «Մեր գործը արդար է, թշնամին կջախջախվի, հաղթանակը մերը կլինի» եզրափակիչ խոսքերը¹³:

Այս լավատեսական տրամադրությամբ էլ Գրիգոր Չարունյանյանը բացեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի արտահերթ նիստը: Համառոտ հաղորդում տալով գիշերային իրադարձությունների մասին, նա այնուհետև հանգիստ տոնով թվարկեց այն առաջնահերթ միջոցառումները, որոնք պետք է իրագործեին հանրապետության կուսակցական, պետական և խորհրդային մարմինները: Բյուրոյի անդամները, ինչպես նաև հրավիրվածները, իրենց ծոցատետրերում կատարում էին համապատասխան նշումներ: Բյուրոն որոշեց շտապ կարգով հատուկ թերթիկներ հրատարակել պատերազմն սկսվելու կապակցությամբ, քանի որ հունիսի 22-ի բոլոր թերթերն արդեն լույս էին տեսել վաղ առավոտյան, առանց գերմանաֆաշիստական զավթիչների ուխտադրուժ հարձակման մասին որևէ տեղեկատվության: Այդ որոշման մեջ ասված էր. «Թույլատրել «Սովետական Հայաստան», “Коммунист” և “Совет Эрманнистани” թերթերի խմբագրություններին հունիսի 22-ի երեկոյան բաց թողնել հատուկ թերթիկներ՝ հունիսի 22-ին, ժամը 12-ն անց 15 րոպեին ռադիոյով ընկ. Վ.Ս.Մոլոտովի արած հայտարարությունը հրապարակելու համար»¹⁴: Թերթիկները տպագրվեցին հայերեն, ռուսերեն ու ադրբեջաներեն լեզուներով և անմիջապես ուղարկվեցին հանրապետության բոլոր քաղաքներն ու շրջանները: Դրանք կարդացվում էին ձեռնարկություններում և կառույցներում, կոլտնտեսություններում և պետական տնտեսություններում, հիմնարկություններում և բուհական կազմակերպություններում տեղի ունեցող բազմամարդ հակաֆաշիստական միտինգներում ու ժողովներում, որոնք վերածվեցին աշխատավորության հայրենասիրության հզոր ցույցերի: Այդ միտինգներում հանրապետության բանվորները, գյուղացիները և մտավորականները արտահայտեցին իրենց նվիրվածությունը հայրենիքին

¹³ «Սովետական Հայաստան», 23 հունիսի 1941:

¹⁴ Հայաստանի Հանրապետության հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ), ֆ. 1, ց. 032, գ. 28, թ. 93:

և երդվեցին կյանքի գնով պաշտպանել հայրենի հողը և ջախջախել ֆաշիստական զավթիչներին:

Գրիգոր Արտեմիչի առաջարկությամբ բյուրոյի այդ օրվա արտահերթ նիստում խոսք գնաց նաև այն առաջնահերթ խնդիրների վերաբերյալ, որոնք վերաբերում էին հանրապետության ռազմական, տնտեսական և մարդկային միջոցների ու կարողությունների մոբիլիզացման աշխատանքներին:

Հանրապետության կուսակցական, պետական, տեղական մարմինների առջև անհետաձգելի խնդիրներ դրվեցին՝ ամբողջ աշխատանքը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու, նախօրոք մշակված 1941 թվականի համար մոբիլիզացիոն պլանի կենսագործման ուղղությամբ. այդպիսի պլաններ մշակված էին նախօրոք բոլոր հանրապետություններում և պետք է իրագործվեին միայն պատերազմի ժամանակ: Ժողկոմխորհի նախագահին հանձնարարվեց զինակոչիկների և զինապարտների, ինչպես նաև տրանսպորտի միջոցների մոբիլիզացիոն միջոցառումների մասին զեկուցել հունիսի 23-ի բյուրոյի նիստում: Ինչպես Գրիգոր Հարությունյանը, այնպես էլ հանրապետության մյուս ղեկավար գործիչները մեծ եռանդով ու պատասխանատվությամբ ներգրավվեցին հայրենիքի պաշտպանության, գերմանաֆաշիստական զավթիչներին օր առաջ ջախջախելու և երկրի սահմաններից դուրս վճռվելու գործին: Նրանցից ոչ մեկը այդ ժամանակ դեռ չէր պատկերացնում, որ անխուսափելի հաղթանակը ձեռք կբերվի միայն 1418 երկար ու ծիգ օրերից հետո: Հունիսի 23-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն հաստատեց զինապարտների ու տրանսպորտային միջոցների մոբիլիզացման միջոցառումների պլանը: Լսելով Ա.Ա.Փիրուզյանի զեկուցումը մոբիլիզացիայի ընթացքի մասին, Կենտկոմի բյուրոն նշեց, որ հանրապետությունում հաջողությամբ են ընթանում այդ աշխատանքները և որոշում ընդունեց կոմունիստներին զորակոչելու և ռազմաճակատ ուղարկելու, ինչպես նաև ընդհանուր զորակոչն ու զորահավաքը կազմակերպված անցկացնելու վերաբերյալ¹⁵: «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանը դարձավ

¹⁵ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 519:

հանրապետության կուսակցական ու խորհրդային աշխատանքի գլխավոր բովանդակությունը:

Պատերազմի առաջին իսկ օրվանից խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական մարմինները, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները, հանրապետական քաղաքային և շրջանային զինվորական կոմիսարիատներն անմիջապես լծվեցին հանրապետության ռազմական և տնտեսական կարողությունների մոբիլիզացման աշխատանքներին: Հանրապետության առջև դրվեցին անհետաձգելի խնդիրներ՝ ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, ապահովել զորահավաքը, կադրեր ընտրել ճակատ մեկնածուներին փոխարինելու և թիկունքի աշխատանքն անխափան շարունակելու համար, սկսել բնակչության ռազմական ուսուցում, ժողովրդական աշխարհազորի կազմավորում, սահմանամերձ շրջաններում պաշտպանական ամրությունների կառուցում և այլն:

Հանրապետության աշխատավորության ուժերի մոբիլիզացման աշխատանքների ղեկավարությունը իրականացնում էր Հայաստանի կոմկուսը՝ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի գլխավորությամբ: Վերջինս միաժամանակ ՀԿ(Բ)Կ երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարն էր: Մեծ պարտականություններ էին դրված ժողկոմխորհի նախագահ Արամ Սերգեյի Փիրուզյանի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Սաքակ Պետրոսի Պապյանի վրա, որոնք անմիջականորեն իրականացնում էին խորհրդային և կառավարչատնտեսական մարմինների գործունեության ընդհանուր ղեկավարությունը¹⁶: Կենտկոմի քարտուղարներ Աղասի Սողոմոնի Սարգսյանին, Սուրեն Աղասիի Սիքայեյանին, Սահակ Կարապետի Կարապետյանին և Աղասի Ենոքի Չարչօղյանին հանձնարարվեց հանրապետության ռազմական ներուժը մոբիլիզացնելու համար ծավալվող աշխատանքների տարբեր բնագավառների անմիջական ղեկավարությունը:

¹⁶ Սաքակ Պապյանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում էր 1937 – 1954 թվականներին, իսկ Ա.Ս.Փիրուզյանը ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի պաշտոնում՝ 1938 – 1943թթ.: 1943 – 1947թթ. ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահն էր Աղասի Սողոմոնի Սարգսյանը: Ժողկոմխորհի նախագահը հանդիսանում էր նաև Հայաստանում 45-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ:

Մոբիլիզացիոն և ընդհանրապես հանրապետության տնտեսության ողջ կարողությունները ռազմական ռելսերի վրա փոխադրելու աշխատանքներն ավելի հստակ իրականացնելու նպատակով կազմվեց ՀԽՍՀ ժողկոմխորհի բյուրո, որի կազմի մեջ մտան ժողկոմխորհի նախագահը և նրա չորս տեղակալները: Հանրապետության ռազմական ներուժը մոբիլիզացնելու և բանակի պահանջներն ապահովելու աշխատանքները էլ ավելի հստակ և օպերատիվ իրականացնելու համար շուտով ստեղծվեց նաև ժողկոմխորհի նախագահի տեղակալի նոր պաշտոն, որը միաժամանակ հանդիսանում էր Անդրկովկասյան ռազմաճակատի թիկունքի պետի տեղակալը: Արտակարգ լիազորություններով օժտված այդ պաշտոնում նշանակվեց Ռուբեն Ազիզբեկյանը, որը պատվով կատարեց իր պարտականությունները¹⁷: Մեծ պարտավորություններ էին դրված նաև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ռազմական բաժնի վարիչ Աշոտ Մկրտչյանի, հանրապետության զինվորական կոմիսար, գնդապետ Գարեգին Ասատրյանի, Կենտկոմի և կառավարության բոլոր անդամների, երևանի և Լենինականի քաղկոմների, հանրապետության բոլոր շրջկոմների և գործկոմների վրա և այլն: Ամենից առաջ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվեց զորահավաքի վրա: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1941թ. հունիսի 22-ի «Զինապարտների մոբիլիզացիայի մասին» հրամանագրի համաձայն, որով բանակ էին զորակոչվում 1905 – 1918թթ. ծնված զինապարտները, հունիսի 23-ից Խորհրդային Հայաստանում սկսվեցին հանընդհանուր զորահավաքի աշխատանքները¹⁸: Զորահավաքն ընթանում էր կազմակերպված ձևով: Մեծ թիվ էին կազմում նաև կամավոր ռազմաճակատ մեկնել ցանկացողները. այդ են վկայում 1941թ. հունիսի 23 – 25-ի հանրապետական թերթերում տպագրված տեղեկությունները¹⁹: Առաջ անցնելով նշենք, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանից բանակ զորակոչվեցին ավելի քան

¹⁷ Ա. Ն. Մնացականյան, *Միասնական շարքերում, Ե., 1975, էջ 37*:

¹⁸ *Հետագայում այլ հրամանագրերով բանակ զորակոչվեցին 1890 – 1904, 1919 – 1925 թվականների, նույնիսկ 1926թ. ծնված զինապարտները, այսինքն պատերազմի տարիներին բանակ զորակոչվեցին 1890 – 1926թթ. ծնված 18 – 55 տարեկան զինապարտները*:

¹⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», «Коммунист», «Ավանգարդ», 23 – 25 հունիսի 1941:

300.000 մարդ, որ կազմում էր հանրապետության բնակչության 20 – 22%-ը²⁰: Բանակ զորակոչվածների ավելի քան 1/3-ը կազմում էին կոմունիստներն ու կոմերիտականները: Այսպես, օրինակ, 1941թ. հունիսին Հայաստանի կոմկուսի շարքերում կար 36.849 անդամ և թեկնածու, որոնցից 20.000-ը բանակ զորակոչվեցին պատերազմի առաջին շրջանում: Հետագա տարիներին բանակ զորակոչված կոմունիստների թիվը հասավ 30.000-ի: 1941 – 1945թթ. ընթացքում բանակ զորակոչված կոմերիտականների թիվն անցավ 70.000-ից²¹: Բանակ զորակոչվածների թվում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բաժինների վարիչներ Արտո Ղազարյանը, Դավիթ Հարությունյանը, քաղաքային, շրջանային կոմիտեների նախկին կամ այդ ժամանակ աշխատող քարտուղարներից Պետրոս Մելքոնյանը, Լևոն Շահբազյանը (Երևանի քաղկոմից), Սերգեյ Իսրայելյանը, Համո Հարությունյանը (Լենինականի քաղկոմից), Հայկ Մելքոնյանը, Սամսոն Վարդանյանը, Արշավիր Գասպարյանը, Միսակ Արմենյանը (Երևանի Կիրովյան շրջկոմից), Ավետիք Բազոյանը (Կիրովականի շրջկոմից), Վանյա Ղազարյանը (Ղափանի շրջկոմից), Սամանդ Սիաբանդուլը (Ալազյազի շրջկոմից) և ուրիշներ: Ռազմաճակատ մեկնածուների թվում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատներ Ալեքսան Ալեքսանյանը, Բենիամին Ալեքսանյանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ Գուրգեն Մարինոսյանը, Ավետիս Սուրադյանը, Հայկ Պարոնյանը, Գագիկ Աբեյանը և շատ ուրիշներ²²:

Պատերազմի սկզբից մինչև 1941թ. սեպտեմբեր ամիսը Հայկական ԽՍՀ-ում մոբիլիզացիայի պլանները կատարվեցին. պահեստի հրամանատարական կազմինը՝ 100, կրտսեր հրամանատարական կազմինը՝ 109, շարքային կազմինը՝ 100 տոկոսով²³:

Չնայած մարտական գործողություններն ընթանում էին Հայաստանի սահմաններից շատ հեռու, այնուամենայնիվ

²⁰ Կ.Ա.Հարությունյան, *Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին, Ե., 2001, էջ 5:*

²¹ *Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, էջ 520:*

²² Ա.Ն.Սնացականյան, *Միասնական շարքերում, էջ 39 – 40:*

²³ *ՀՀ ԴԶԿՊ ՊԿԱ, ֆ. 1, ց. 030, գ. 18, թ. 9:*

պատերազմի շունչը գնալով ավելի ու ավելի էր զգացնել տալիս իրեն հանրապետությունում: Դա պայմանավորված էր նաև թուրքիայի և Իրանի սահմանամերձ շրջաններում ստեղծված ծայրահեղ անհանգիստ իրավիճակով: Իրանում ավելի ու ավելի էին ակտիվանում գերմանաթուրքական գործակալների գործողությունները, որոնց հիմնական նպատակն էր իրանական շահին գրավել իրենց կողմը և երկիրը վերածել Խորհրդային Միության դեմ հարձակվելու հենակետի: Պատերազմի հենց առաջին իսկ օրից թուրքերը սկսել էին սահմանամերձ ռազմավարական ուղղություններով ճանապարհների և կանուրջների վերանորոգման աշխատանքները, Իրանի և Հայաստանի սահմաններին էին մոտեցնում զգալի ուժեր: Անդրկովկասյան ռազմաճակատի շտաբի հետախուզական վարչության՝ 1941թ. օգոստոսի 15-ի տվյալներով, թուրքիան խորհրդային սահմանների մոտ էր կուտակել իր 48 հետևակային դիվիզիաներից 26-ը: Նրանք հիմնականում տեղաբաշխված էին Երևան – Վան, Կարս – Լենինական և Արդահան – Ախալցխա – Ախալքալաք ուղղություններում²⁴: Նույն ռազմաճակատի հետախուզական վարչության 1941թ. սեպտեմբերի 22-ի թիվ 158 հետախուզական ամփոփագրի տվյալներով թուրքական հրամանատարությունը արագացված թափով ճանապարհաշինական ռազմավարական նշանակություն ունեցող մեծ ծավալների աշխատանք էր տանում Երզրում – Կարս, Արդահան – Օլթի, Դոզու Բայազետ – Բազըրգան – Չինգիլի, Սարիղամիշ – Ջիարեթ – Սողանլուղ շրջաններում: Միայն Երզրումի շրջանում 1941թ. սեպտեմբերի 16-ին գտնվում էին թուրքական բանակի բարձրաստիճան 8 գեներալ, որոնք ըստ հետախուզական տվյալների, զորքերը պատրաստում էին հարձակման²⁵: Այդ օրերին սովորական էր դարձել գերմանական ավիացիայի կողմից Կարմիր բանակի թիկունքային, հատկապես մերձսահմանային շրջաններում 5 – 10 հոգուց բաղկացած պարաշյուտիստ-դիվերսանտների խմբերի նետումը, որոնք նպատակ ունեին պայթեցնել ռազմավարական կարևոր

²⁴ *Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. Անդրկովկասյան ռազմաճակատի, ց. 1, գ. 2, թ. 28:*

²⁵ *Տե՛ս նույն տեղում, թ. 5 (այս տվյալները հրապարակվում են առաջին անգամ):*

նշանակություն ունեցող օբյեկտները, խուճապի մատնել բնակչությանը, ինչպես նաև բազաներ ստեղծել ավելի մեծ դիվերսիոն խմբեր ընդունելու համար: Որպես կանոն այդ դիվերսանտները հանդերձավորված էին խորհրդային միլիցիայի համազգեստով: Չնայած Անդրկովկասի տարածքում դեռևս չէր նկատվել թշնամու պարաշյուտիստների խմբերի իջեցման որևէ դեպք, այնուամենայնիվ դրա վտանգը գնալով ավելի ռեալ էր դառնում սահմանամերձ Թուրքիայում և Իրանում հակա-խորհրդային տրամադրությունների օրեցօր աճման հետևանքով: Այդ առումով էլ 1941թ. հունիսի 25-ին Անդրկովկասյան զինվորական օկրուգի ռազմական խորհուրդը հատուկ որոշում ընդունեց «Պարաշյուտային դեսանտների դեմ պայքար կազմակերպելու միջոցառումների մասին», որտեղ նշվում էր. «Հակառակորդի օդային դեսանտների անմիջական վերացումն իրականացնելու նպատակով Անդրկովկասյան զինվորական օկրուգի ռազմական խորհուրդը որոշում է. խնդրել Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմին և Վրացական ԽՍՀ ժողկոմխորհին, Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմին և Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմխորհին, Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին և Հայկական ԽՍՀ ժողկոմխորհին կարճ ժամանակամիջոցում կյանքի կոչել հետևյալ միջոցառումները.

1. ՆԳԺԿ համակարգում ստեղծել հակառակորդի դիվերսանտ-պարաշյուտիստների ոչնչացման կործանիչ գումարտակներ:

2. Բնակավայրերում, կոլտնտեսություններում, սովխոզներում և ՄՏԿ-ներում տեղանքը լավ ինացող բնակիչներից ստեղծել 3 – 5 հոգուց բաղկացած դիտորդ խմբեր, որոնք պետք է գործեին շուրջօրյա և խնամքով քողարկված:

Քաղաքներում այդպիսի խմբեր կազմակերպել յուրաքանչյուր թաղամասում...

Անդրկովկասյան զինվորական օկրուգի գործերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դ.Կոզլով, Ռազմական խորհրդի անդամ, դիվիզիոնային կոմիսար Շամանին»²⁶:

Ստանալով Անդրկովկասյան Զինվորական օկրուգի ռազմական խորհրդի որոշումը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քար-

²⁶ ՀՀ ՀԲԿԹ ՊԿԱ, ֆ. 1, ց. 29, գ. 55, թթ. 145 – 146:

տուղար Գ.Ա.Յարությունյանը դրա մասին անմիջապես տեղյակ պահեց ՅԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի անդամներին, Յայաստանի ԵԳԺԿ և ՊԱԺԿ նախարարներին և հանձնարարեց վերջիններին կարճ ժամանակամիջոցում կատարել որոշումը:

Հունիսի 30-ի առավոտյան Գրիգորի Արտեմիչը հեռագրով ստացավ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի հունիսի 29-ի ղեկավար հրահանգը՝ ուղղված մերձճակատային մարզերի կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին՝ ստորագրված Ի.Վ.Ստալինի և Վ.Ս.Սոլոտովի կողմից: Դա նշանակում էր, որ ՅամԿ(Բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը խորհրդային Յայաստանի տարածքը նույնպես դիտում են որպես մերձճակատային մարզ: Եւ այն օրը Գ.Ա.Յարությունյանի աշխատասենյակում հանրապետության կառավարության և Կենտկոմի պատասխանատու աշխատողները ծանոթացան հրահանգի բովանդակությանը, կարևորեցին ամենաառաջնահերթ խնդիրները, իսկ հուլիսի 1-ին հրավիրվեց ՅԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստ: Նիստը, քննարկելով ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի՝ հունիսի 29-ի ղեկավար հրահանգը ամբողջությամբ, որոշեց անվերապահորեն ընդունել այն ի ղեկավարություն և անշեղորեն կատարել²⁷:

Յայաստանի Յանրապետության հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվի Յայաստանի կոմկուսի Կենտկոմի ֆոնդում այսօր էլ խնամքով պահվում է այդ որոշումը, որն անձամբ ստորագրել է Գրիգոր Յարությունյանը: Որոշման մեջ նշվել է. «1. ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի ղեկավար հրահանգն ընդունել անշեղորեն կատարման համար:

2. Պարտավորել բոլոր կուսակցական և խորհրդային մարմիններին իրենց բոլոր աշխատանքներում ղեկավարվել ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի այդ հրահանգով:

3. Առաջարկել Յայաստանի Կ(Բ)Կ շրջկոմներին, քաղկոմներին քննարկել ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի՝ 1941թ. հունիսի 29-ի հրահանգը շրջկոմների և քաղկոմների բյուրոների նիստերում, դրանց մասնակից դարձնելով շրջանների ղեկավար ակտիվին, որից հետո ժողովներ

²⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 030, գ. 29, թ. 192:

հրավիրել ձեռնարկություններում ու կոլտնտեսություններում՝ աշխատավորության ուշադրությունը մոբիլիզացնելու ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ 1941թ. հունիսի 29-ի հրահանգից բխող խնդիրների շուրջ (օգտագործելով «Правда» թերթի 1941թ. հուլիսի 1-ի առաջնորդող հոդվածը):

4. Շրջկոմների բյուրոների միստերին մասնակցելու, կուսակցական, խորհրդային մարմինների աշխատանքներն ուժեղացնելու և բոլոր աշխատանքները ռազմաճակատի շահերին ենթարկելու համար, ինչպես նաև աշխատավորությանը ստեղծված իրավիճակի և նրանց պարտականությունների պարզաբանման աշխատանքները կազմակերպելու նպատակով շրջաններ ուղարկել հետևյալ ընկերներին (ցուցակը կցվում է): ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Հարությունյան»²⁸:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ որոշումն ի կատար ածելու համար հանրապետության շրջաններ մեկնեցին Կենտկոմի և կառավարության պատասխանատու աշխատողներ, որոնք հուլիսի 2 – 3-ը տեղերում հրավիրեցին շրջկոմների ու քաղկոմների բյուրոների ընդլայնված միստեր՝ տեղական ակտիվի մասնակցությամբ: Հունիսի 29-ի ղեկավար հրահանգի հիմնական դրույթները պարզաբանելու հետ մեկտեղ, շրջաններ գործուղված ընկերները միստերի մասնակիցների ուշադրությունը հրավիրում էին հատկապես այն կարևոր հանգամանքների վրա, որ ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը Անդրկովկասը նույնպես համարում էին մերձճակատային գոտի և այդ հանրապետությունների ղեկավարության վրա մեծ պատասխանատվություն էր դրվում ԽՍՀՄ հարավային սահմանների պաշտպանությունն ամրապնդելու գործում:

Շրջաններում ու քաղաքներում տեղի ունեցած կուսակցական կազմակերպությունների բյուրոների ընդլայնված միստերը կրում էին մարտական օպերատիվ բնույթ: Նիստերի ավարտից հետո մասնակիցներն անմիջապես վերադառնում էին իրենց աշխատավայրերը և ամենուրեք՝ գործարաններում, ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, պետական տնտեսություններում, բոլոր աշխատավորական կոլեկտիվներում և ուսումնական հաստատություններում հրավիրում բազմամարդ

²⁸ Նույն տեղում:

ժողովներ ու միտինգներ, որտեղ բացատրում էին հունիսի 29-ի ղեկավար հրահանգի բովանդակությունը, ցույց տալիս դրա գործնական նշանակությունը թշնամուն հակահարված տալու գործում: Լայնորեն օգտագործվում էին կենտրոնական և հանրապետական թերթերի առաջնորդող հոդվածները, հատկապես «Правда»-ի՝ 1941թ. հուլիսի 1-ի՝ «Ամեն ինչ ենթարկել երկրի պաշտպանության շահերին» առաջնորդող հոդվածը, որտեղ ընդգծված էր, որ ֆաշիստական զավթիչների դեմ պայքարի հաջող կազմակերպման համար «անհրաժեշտ է արագ ու վճռականորեն վերակառուցել ամբողջ աշխատանքները, դրանք ամբողջովին ենթարկելով ռազմաճակատի կարիքներին ու շահերին»²⁹:

Այն, որ պատերազմի առաջին օրերին Մոսկվան հատուկ ուշադրություն էր հատկացնում Անդրկովկասի տարածաշրջանին, վկայում է նաև հետևյալ ուշագրավ փաստը: Ինչպես հայտնի է, հուլիսի 3-ին ռադիոյով ելույթ ունեցավ Ի.Վ.Ստալինը և մանրամասն շարադրեց կուսակցության և կառավարության միջոցառումները, որոնք բխում էին հունիսի 29-ի վերոհիշյալ հրահանգից: Նա մերկացրեց գերմանական ֆաշիզմի զավթողական պլանները և խորհրդային ժողովրդի առջև շարադրեց արդյունաբերությունը, տրանսպորտն ու գյուղատնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու, ամբողջ երկիրը մարտական ճամբարի վերածելու ծրագիրը: Նույն օրը երեկոյան Մոսկվա կանչվեցին Անդրկովկասի հանրապետությունների ղեկավարները, նրանց թվում նաև Գ.Չարությունյանը: Չուլիսի 4-ին Պետական պաշտպանության կոմիտեի անդամների ներկայությամբ նրանց ընդունեց Ի.Վ.Ստալինը: Վերադառնալով Մոսկվայից Գ.Ա.Չարությունյանն անմիջապես իր մոտ կանչեց ՉԿ(բ)Կ Կենտկոմի անդամներին և պատմեց այդ հանդիպման մասին: Ստալինի ծայնից զգացվում էր, որ նա ոչ միայն մտահոգված էր ռազմաճակատում ստեղծված չափազանց ծանր իրավիճակից, այլև ԽՍՀՄ հարավային սահմանների մոտ ստեղծված տազնապալից իրադրությունից: Ըստ հետախուզության հավաստի տվյալների, խորհրդային Միության հարավային սահմաններում կուտակվում էին թուրքական և իրանական զորքեր: Չաղորդագրություններ

²⁹ «Правда», 1 июля 1941.

կային այն մասին, որ թուրքիայի տարածքով, փակ բեռնատար ավտոմեքենաներով Իրան էին փոխադրվում գերմանական զորքեր: Ի.Վ.Ստալինը ուղղակի հայտարարեց, որ օրերից մի օր Անդրկովկասը կարող է վերածվել մարտական գործողությունների թատերաբեմի՝ թուրքիայի կողմից: Դեռ ավելին, Պաշտպանության պետական կոմիտեի նախագահը ուղղակի նշեց հակառակորդի զորքերի հնարավոր հարձակման գլխավոր ուղղությունները Անդրկովկասում և նույնիսկ զգուշացրեց, որ մարտական գործողությունների անհաջող ելքի դեպքում Բաքուն պետք է պաշտպանել ամեն գնով: Ստալինը հավաստիացրեց, որ օգնություն անպայման կհասցվի, սակայն շատ բան կախված է հենց իրենցից՝ հանրապետություններից³⁰: Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ Ստալինի հետ ունեցած հանդիպման մասնակիցներից մեկը, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Ն.Չարկվիանին այդ հանդիպման մասին մանրամասն կերպով նկարագրել է «Կովկասը դիմացավ: Կովկասը հաղթեց» իր հուշերի գրքում: «Անկեղծ գրույցը, որ Կենտկոմի բյուրոյի բոլոր անդամների հետ վարեց Գրիգոր Արտեմիչը, զգաստացրեց մեզ, իսկ ամենից գլխավորը, էլ ավելի բարձրացրեց մեր պատասխանատվությունը կուսակցության և ժողովրդի առջև», – նշում է Ա.Ս.Փիրուզյանը³¹:

Պատերազմը անմիջապես էական փոփոխություններ մտցրեց ինչպես ԶԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Չարությունյանի, այնպես էլ նրա շրջապատի մարդկանց աշխատանքում: Եթե նախկինում ԶԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստերը հրավիրվում էին կանոնակարգված ժամանակացույցով, ամիսը 4 – 5 անգամ, ապա պատերազմի տարիներին, հատկապես առաջին շրջանում այդ նիստերը հրավիրվում էին պարբերաբար, հաճախ շաբաթը 3 – 4 անգամ: Նման հաճախականությամբ էին ընթանում նաև ժողկոմխորհի նիստերը: Ամենից առաջ քննարկվում էին ռազմամոբիլիզացիոն, ռազմատնտեսական հարցեր, որոնք սերտորեն կապված էին ռազմաճակատի անհետաձգելի կարիքների հետ: Կարևոր որոշում ընդունվեց

³⁰ А.С.Пирюзян, *Пазмышления о пройденном пути*, Е., 1989, с. 60 – 61.

³¹ *Նույն տեղում*:

աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների դերի ու պատասխանատվության բարձրացման, գյուղերում ու քաղաքներում հատկապես սահմանամերձ շրջաններում, խիստ կարգապահություն պահպանելու վերաբերյալ: Հատուկ ուշադրություն էր դարձվում պաշտպանական նշանակության արդյունաբերական ձեռնարկությունների, կամուրջների, երկաթուղային կայարանների պահպանության գործի կազմակերպմանը: Ամենուրեք կազմակերպվեցին օդային տարածքը հսկելու դետեքեր: Թուրքական ինքնաթիռները պատերազմի առաջին շրջանում սկսել էին խախտել Հայաստանի օդային սահմանները:

Հանրապետությունում ծավալվեց կազմակերպական, ռազմատնտեսական և գաղափարախոսական տքնաջան, մեծ աշխատանք՝ ամբողջ կյանքը ռազմական ռելսերի վրա փոխադրելու նպատակով: Այդ աշխատանքներն իրականացվում էին Գ.Ա.Հարությունյանի անմիջական ղեկավարությամբ: Նրա աշխատանքային օրը գրեթե վերջ չուներ: Առավոտյան վաղ մեկնում էր Լենինի հրապարակի (այժմ Հանրապետության հրապարակ) կառավարական տան շենք, որտեղ պատերազմի տարիներին աշխատում էր ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ապարատը և աշխատում մինչև ցերեկվա ժամը 6-ը: Գալով Կոնդում գտնվող միհարկանի առանձնատունը, որտեղ ապրում էր ընտանիքը՝ կինը Նինան և աղջիկը՝ Նամին, ճաշում էր, ապա մի քառասուն րոպե զբոսնում առանձնատան այգում: Դրանից հետո մեկ ժամ պառկում էր հանգստանալու և երեկոյան ժամը 9-ին ծառայության գնում մինչև ուշ գիշեր: Ինչպես իր հուշերում նշում է Նամի Միկոյանը՝ «Այդ աշխատառժը կապված էր Մոսկվայի հետ. Ստալինը աշխատում էր գիշերը և բոլորը պետք է ձեռքի տակ լինեին»³²: Գրիգոր Արտեմիչը շատ հետևողական էր ընդունված որոշումների կատարման հարցում: Այսպես, օրինակ, Մոսկվայից վերադառնալուց անմիջապես հետո, նա ժողկոմխորհի նախագահ Ա.Ս.Փիրուզյանին հարցրեց «Պարաշյուտային դեսանտների դեմ պայքար կազմակերպելու դեմ» Անդրկովկասյան զինվորական խորհրդի հունիսի 25-ի որոշման իրագործման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: Նախագահը զեկուցեց, որ

³² Նամի Միկոյան, *Միրով ու թախծով, հուշեր, Ե., 2000, էջ 85:*

հուլիսի 3-ին Հայաստանի ժողկոմխորհը հատուկ որոշում է ընդունել՝ «Հակառակորդի պարաշյուտային դեսանտների դեմ պայքարելու համար կործանիչ գումարտակներ կազմավորելու մասին»: Այդ որոշման տեքստը այսօր էլ պահպանվում է ՀՀ նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվի Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի ֆոնդում: Որոշման մեջ ասված է. «Հայկական ԽՍՀ ժողկոմխորհը հուլիսի 3-ի իր նիստում Անդրկովկասյան զինվորական օկրուգի 1941թ. հունիսի 25-ի թիվ 19 որոշման վերաբերյալ որոշում է. 1. Հակառակորդի պարաշյուտային դեսանտների դեմ պայքարելու նպատակով Հայկական ԽՍՀ տարածքում կազմակերպել կործանիչ գումարտակներ... 2. Կործանիչ գումարտակների կազմակերպումը և ղեկավարումը դնել Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ի վրա: Կործանիչ գումարտակների ղեկավարումն իրագործելու նպատակով Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ին կից ստեղծել օպերատիվ շտաբ: Սահմանել, որ օպերատիվ շտաբի հրամաններն ու հրահանգները պարտադիր են խորհրդային և հասարակական կազմակերպությունների համար: 3. Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ին կից օպերատիվ շտաբի պետ համատեղության կարգով հաստատել 1-ին կարգի զինվորական իրավաբան ընկ. Լևոն Գալուստի Կարապետյանին և նրա առաջին տեղակալ՝ ընկ. Գեղեոն Հայրապետի Միքայելյանին: 7. Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ օպերատիվ շտաբը կազմակերպում է շուրջօրյա դիտակետեր առավել կարևորության օբյեկտներում և այն վայրերում, որտեղ կարող են իջեցվել թշնամու դեսանտներ: Դիտակետերում ընդգրկվում են 3 – 5 մարդ՝ տեղանքին առավել ծանոթ բնակիչներից: 8. Հայկական ԽՍՀ Պաշտպանության նախարարը 6 ինքնաթիռ է առանձնացնում իրենց անձնակազմերի հետ միասին՝ Հայկական ԽՍՀ շրջանների միջև կապ ապահովելու և օդում պարեկելու համար...³³: Առաջ անցնելով նշենք, որ մինչև 1941թ. վերջերը Հայաստանի բոլոր սահմանամերձ շրջաններում ու քաղաքներում գործում էին կործանիչ գումարտակներ, որոնց շարքերում ընդգրկված էին 3110 մարդ³⁴:

Նման հետևողականությամբ Գ.Ա.Հարությունյանի

³³ Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 113, ց. 29, գ. 104, թ. 1:

³⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 29, գ. 330, թթ. 34 – 36:

ուշադրության կենտրոնում էր գտնվում և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1941թ. հուլիսի 12-ի «Հանրապետությունում ժողովրդական աշխարհագորի ջոկատների կազմակերպման և նրանց ռազմական պատրաստության մասին» որոշումը: Աշխարհագորի ջոկատներում ընդգրկվեցին զինակոչի ոչ ենթակա նախկին մեծահասակ զինվորականներ, պարտիզաններ, զորակոչային ցածր տարիքի բնակիչներ: 1941թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով Հայաստանի տարածքում կազմավորվեցին ժողովրդական աշխարհագորի 52 ջոկատներ, որոնց մեջ ընդգրկված էր 25.530 մարդ³⁵:

Գրիգոր Արտեմիչը մեծ ուշադրություն էր դարձնում նաև պատերազմի առաջին ամիսներին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի ընդունած այլ որոշումների անշեղորեն և ժամանակին կատարման ընթացքին: Այդպիսի որոշումների թվում էին 1941թ. սեպտեմբերի 4-ի «Կարմիր բանակի և Ռազմածովային նավատորմի մարտիկների համար ուղարկվող ծանրոցների ընդունման և ուղարկման», սեպտեմբերի 7-ի՝ «16 – 50 տարեկան քաղաքացիների ընդհանուր պարտադիր ուսուցման», սեպտեմբերի 8-ի՝ «Միջնակարգ դպրոցներում սովորողների ռազմաֆիզիկական պատրաստության», «Կարմիր բանակի համար բնակչության կողմից տաք հագուստների հավաքման» մասին որոշումները և այլն:

Ուստի պատահական չէր, որ վերադաս ռազմական մարմիններից եկած տեսչական հանձնաժողովները միշտ էլ բարձր են գնահատել Իանրապետությունում ռազմական ուսուցման գծով կատարված աշխատանքը, իսկ առանձին շրջաններ ու քաղաքներ (Երևանի Օրջոնիկիձեի շրջան, Լենինական, Աշտարակ և այլն) հորհրդային Միության մեջ գրավել են երկրորդ պատվավոր տեղը³⁶:

Ամփոփելով պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում Հայաստանում իրագործված ռազմամոբիլիզացիոն առաջադրանքների կատարման ընթացքը, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն արձանագրեց, որ 1941թ. հունիսի 22-ից մինչև սեպտեմբեր ամիսը հանրապետությունում մոբիլիզացիայի պլանները կատարվել են պահեստի հրամանատարական

³⁵ *Նույն տեղում, ց. 29, գ. 330, քք. 34 – 36:*

³⁶ *ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 034, գ. 385, քք. 34 – 36:*

կազմինը՝ 100 %-ով, կրտսեր հրամանատարական կազմինը՝ 100 %-ով, շարքային կազմինը՝ 100 %-ով, ձիերի մոբիլիզացման առաջադրանքը՝ 100 %-ով, մարդատար ավտոմեքենաներինը՝ 103 %-ով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 100 %-ով, տրակտորներինը՝ 100 %-ով, մոտոցիկլետներինը՝ 100 %-ով և այլն³⁷:

բ) ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նույն ժամանակամիջոցում Հայկական ԽՍՀ տարածքում ձևավորվեցին կամ համալրվեցին մի շարք զորամիավորումներ, որոնց հրամանատարական, քաղաքական ու շարքային կազմի մոբիլիզացիայի պլանը կատարվեց ըստ առաջադրանքի: Այսպես, օրինակ, հունիսի 23 – 30-ը առաջինների թվում սկսվեց համալրվել նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային Կ.Ե.Վորոշիլովի անվան կարմրադրոշ դիվիզիան, որը գտնվում էր խորհրդա-իրանական սահմանում: Հանրապետության մարդկային և նյութական միջոցներով համալրվելուց հետո դիվիզիան կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը, քանի որ, ինչպես վկայում է դիվիզիայի կոմիսար, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ, ավագ գումարտակային կոմիսար Ա.Ն.Գերվասիևը, համալրումն ավարտելուց հետո միավորման 16.000-անոց անձնակազմից ավելի քան 14.000-ը հայեր էին³⁸: Հայկական ԽՍՀ մարդկային և նյութական միջոցների հաշվին համալրվեցին նաև խորհրդա-ֆիննական պատերազմից հետո Հայաստան տեղափոխված և Լենինականում ու Կիրովականում տեղաբաշխված 136-րդ և 138-րդ հրաձգային դիվիզիաները: Հայաստանում կազմավորված կամ վերահամալրված միավորումներից էին նաև 61-րդ, 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները: Բացի այդ դիվիզիաներից, 1941թ. օգոստոսից հանրապետությունում սկսեցին ձևավորվել 408-րդ և 409-րդ, դեկտեմբերից՝ 89-րդ, իսկ 1942թ. հոկտեմբերից՝ 261-րդ հրաձգային դիվիզիաները, որոնք

³⁷ Նույն տեղում, գ. 030, գ. 10, ք. 15:

³⁸ А.Н.Гервасиев, *Версты мужества, Кишинев, 1976, с. 18.*

կազմավորման աշխատանքներն ավարտվելուց հետո պաշտոնապես դարձան հայկական ազգային միավորումներ: 1942թ. փետրվարին Կերչում ազգային հայկական միավորում դարձավ նաև 390-րդ հրաձգային դիվիզիան:

Այսպիսով, պատերազմի առաջին շրջանում Հայկական խՍՀ մարդկային և նյութական միջոցների հաշվին կազմավորվեցին կամ վերահամալրվեցին 13 հրաձգային դիվիզիաներ, որոնցից 6-ը՝ ազգային³⁹: Այդ զորամիավորումների կազմավորման աշխատանքները մշտապես գտնվում էին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի, ժողկոմխորի և Գերագույն խորհրդի նախագահության, տեղական խորհրդային, կուսակցական կոմերիտական կազմակերպությունների ամենօրյա հոգատարության և ուշադրության կենտրոնում, որի մասին կխոսենք փոքր-ինչ հետո: Դիվիզիաներից առաջինների թվում իրենց վերահամալրման աշխատանքներն ավարտեցին 76-րդ լեռնահրաձգային, 136-րդ և 138-րդ հրաձգային դիվիզիաները, որոնք 1941թ. օգոստոսի 25-ին Անդրկովկասյան ռազմաճակատի միավորումներից կազմված զորախմբի կազմում անցան խորհրդա-իրանական սահմանը և մասնակցեցին Իրանը գերմանաֆաշիստական զործակալներից մաքրելու գործողությանը, դրանով իսկ ձախողելով Իրանը խորհրդային Միության դեմ պատերազմի մեջ ներքաշելու հիտլերյան պլանները: Խորհրդային զորքերի մուտքը Իրան պայմանավորված էր 1921թ. փետրվարի 26-ին Մոսկվայում կնքված խորհրդա-իրանական պայմանագրի 6-րդ հոդվածով: Մինչև օգոստոսի վերջերը խորհրդային զորքերը առանց որևէ լուրջ դիմադրության գրավեցին Յուսիսային Իրանի ռազմավարական կարևոր հանգույցները: Միաժամանակ հարավից Իրան մտան դաշնակից Անգլիայի զորքերը⁴⁰: Ֆաշիստամետ Ռեզա շահը ստիպված էր հրաժարվել գահից հօգուտ որդու՝ Մոհամմեդ Ռեզա Փեհլևի, որը վարեց հակաֆաշիստական քաղաքականություն, իսկ 1943թ. սեպտեմբերի 9-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային, թեև չմասնակցեց ռազմական գործո-

³⁹ Այդ մասին ավելի մանրամասն տես Կ.Ա.Հարությունյան, *Հայկական ազգային զորամիավորումների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941 – 1945թթ.)*, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, թիվ 1, էջ 53 – 73:

⁴⁰ 1942թ. վերջերին Իրան մտան նաև դաշնակից ԱՄՆ-ի զորքերը:

ղություններին⁴¹: Խորհրդային զորքերի մուտքը Իրան լուրջ նախազգուշացում էր նաև Թուրքիայի կառավարությանը, որը, ինչպես արդեն նշեցինք, փորձում էր Իրանի տարածքն օգտագործել ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար:

Այդ լարված օրերին Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը, համարյա առանց քուն ու դադարի, ղեկավարում է գերմանաֆաշիստական զավթիչներին և նրա կամակատարներին հակահարված հասցնելու նպատակով հանրապետությունում իրականացվող աշխատանքները, անձամբ լինելով տեղերում, ցույց տալով անհրաժեշտ օպերատիվ օգնություն: Այսպես, օրինակ, երբ 1941թ. նոյեմբերի 22-ին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի թիվ 935 որոշման և ԽՍՀՄ Պաշտպանության ժողկոմի նույն ամսվա 3218 հրահանգի համաձայն, Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմում 1941թ. դեկտեմբերի 15-ից Երևանում սկսվեց կազմավորվել Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան⁴², Գրիգոր Արտեմիչը անձամբ հետևում էր դիվիզիայի կազմավորման աշխատանքներին: Դիվիզիայի առաջին հրամանատար նշանակվեց գնդապետ Սիմեոն Գևորգի Ջաքիյանը, շտաբի պետ՝ փոխգնդապետ Արտաշես Ավագի Ղազարյանը, կոմիսար՝ ավագ գումարտակային կոմիսար Վասիլի Իվանովիչ Չունակովը: Արտաշես Ղազարյանի վկայությամբ, դեկտեմբերի 15-ին Գրիգոր Հարությունյանն իր մոտ հրավիրեց դիվիզիայի ղեկավարությանը՝ անձամբ ծանոթանալու նրանց և դիվիզիայի առջև ծառայած խնդիրների վերաբերյալ հրահանգներ տալու նպատակով: Այդ խորհրդակցությանը ներկա էին նաև Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Արամ Փիրուզյանը, հանրապետության զինկոմ, գնդապետ Գարեգին Ասատրյանը և այլ պատասխանատու աշխատակիցներ: Դիվիզիայի հրամանատարությանը ներկաներին ծանոթացնելուց հետո Գ.Ա.Հարությունյանը առաջարկեց մինչև 1942թ. փետրվարի 20-ը, այսինքն երկու ամսվա ընթացքում, ավարտել միավորման և նրա զորամասերի կազմավորման ու նախնական պատրաստության աշխատանքները: Նա այդպիսի

⁴¹ Советская Военная Энциклопедия, т. 3, М., 1975, с. 585.

⁴² Մինչև 1942թ. հունվարի 5-ը դիվիզիան պայմանականորեն ուներ 474-րդ համարը:

կարճ ժամանակամիջոցը բացատրում էր առաջին հերթին նրանով, որ «Գերմանիայի հավատարիմ դաշնակից Թուրքիան Հայաստանի ու Վրաստանի սահմանների մոտ Կարսի և Սարիղամիշի շրջաններում կենտրոնացրել է չորս ուժեղացված կորպուսներ, իսկ Տրապիզոնում՝ մարտական պատրաստության վիճակում ռազմածովային նավատորմը: Հիտլերի ազդանշանով նրանք հարմար պահին ռազմական գործողություններ կսկսեն ընդդեմ ԽՍՀՄ-ի: Ինչպես հայտնի է, խորհրդային բոլոր մարտական դիվիզիաներն ու զորամասերը գործում են Արևմտյան ռազմաճակատում, ուստի պահանջվում է արագացնել նոր ստեղծվող զորամիավորումների կազմավորման գործընթացը»⁴³:

Այդ նպատակով Կենտկոմի առաջին քարտուղարը առաջարկում է սահմանված ժամկետի ընթացքում յուրաքանչյուր շաբաթը երկու անգամ Կենտկոմում անցկացնել խորհրդակցություններ, որտեղ լսել... դիվիզիայի և նրա զորամասերի կազմավորման վիճակի մասին: Արտաշես Ղազարյանի վկայությամբ, Գ.Հարությունյանը գնդապետ Ջաքիյանին և իրեն խորհուրդ տվեց զումարտակների, վաշտերի, մարտկոցների համալրման ժամանակ հաշվի առնել հետևյալ սկզբունքները. հրետանային ստորաբաժանումները գերազանցապես համալրել շիրակցիներով ու լոռեցիներով, քանի որ վերջիններս համեմատած հանրապետության մյուս շրջանների բնակչության հետ, ավելի ամրակազմ են, երկարահասակ, մի բան, որ նրանց հնարավորություն կտա անանցանելի տեղանքում զինամթերքը տեղափոխել իրենց ուսերի վրա, հրանոթները քաշել կրակակետեր: Գրիգոր Արտեմիչը ցանկալի էր համարում հետախուզական ստորաբաժանումները համալրել զանգեզուրցիներով ու դարաբաղցիներով, իսկ տեխնիկական ստորաբաժանումներն ու զինարհեստանոցները՝ դարբիններով, փականագործներով, խառատներով և այլն: Շտաբի պետի վկայությամբ, Կենտկոմի քարտուղարի խորհուրդները հաշվի առնվեցին դիվիզիայի համալրման ժամանակ, որը հետագայում մարտերի ժամանակ արդարացրեց իրեն: Այսպես, օրինակ, 1942թ. հոկտեմբերի 4-ին գերմանական 3-րդ տանկային կորպուսի և էսեսական «Վիկինգ» դիվիզիայի 200 տանկեր, ինչպես նաև 50-րդ հետևակային դիվիզիան, որոնք այստեղ էին փոխադրվել

⁴³ ՀՀ ԳԱԱ ՊԻ ՀՄՊՊԿԱ ԿԱ, ֆ. 322, գ.2, ք. 2:

Ֆրանսիայից, հաղթահարեցին թերեք գետը և կենտրոնացան նրա արևելյան ափին: Թշնամին ձգտում էր ամեն գնով ոչնչացնել 89-րդ հրաձգային դիվիզիան և գրավել Մալգոբեգ, Օրջոնիկիձե, Գրոզնի քաղաքները, շարժվել դեպի Թբիլիսի և Բաքու: Իրադրությունը չափազանց լուրջ էր և վտանգավոր: Հորդառատ անձրևը ճանապարհները անանցանելի էր դարձրել տեխնիկայի ու քարշող ուժի համար: Հարկավոր էր 24 հակատանկային հրանոթներ ամեն գնով 2,5 կմ քաշելով հասցնել առաջին գիծ և փակել թշնամու տանկերի ճանապարհը: Զորամասի անձնակազմը, որը Գ.Ա.Հարությունյանի խորհրդով հիմնականում համալրված էր շիրակցիներով ու լոռեցիներով, պատվով կատարեց մարտական առաջադրանքը: 40 րոպե հետո հրանոթները իրենց անձնակազմի հետ մարտական դիրքեր էին գրավել աղյուսի գործարանի մոտ: Նրանց հուժկու համազարկերից, երեք ժամ տևած մարտում, հակառակորդը կորցրեց 22 տանկ և նահանջեց⁴⁴:

Վերադառնալով 1941թ. դեկտեմբերի 16-ի Կենտկոմում կայացած խորհրդակցությանը, փոխգնդապետ Արտաշես Ղազարյանը հիշում է, որ Գրիգոր Արտեմիչը գործնական հանձնարարություններ տվեց ժողկոմխորհի նախագահին՝ կարճ ժամանակամիջոցում դիվիզիայի և նրա զորամասի շտաբների, զորանոցների, հրաձգարանների, վարժաիրապարակների համար շենքեր ու հողատարածություններ հատկացնելու վերաբերյալ: Գրիգոր Հարությունյանի անմիջական գիտությամբ Կենտկոմի պահեստներից ձեռք բերվեց տպարանի սարքավորումներ և թուղթ՝ զինվորական թերթ տպագրելու համար: 1942թ. հունվարի 12-ին Երևանում լույս տեսավ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի «Կարմիր զինվոր» պաշտոնաթերթը⁴⁵: Ըստ փոխգնդապետ Ա.Ա.Ղազարյանի վկայության, Կենտկոմի առաջին քարտուղարը յուրաքանչյուր 10 օրը մեկ, առավոտից երեկո լինում էր դիվիզիայի զորամասերի տեղաբաշխման վայրերում, մասնակցում մարտական և հրաձգային պարապմունքներին, անձամբ կազմակերպում ջրային արգելքների հաղթահարման վարժանքներ և այլն: Նշենք, որ Գրիգոր Հարությունյանը մինչև վերջ էլ հետաքրքրվում էր հայկական դիվիզիաների

⁴⁴ Նույն տեղում, թ. 3:

⁴⁵ Ա.Ա.Նալբանդյան, Մարտական «Կարմիր զինվորը» (1942 – 1956թթ.) Ե., 1981, էջ 11:

ճակատագրով: 1942թ. հունիսի 16-ին Երևանի Լենինի հրապարակում հանդիսավոր պայմաններում մարտական դրոշներ հանձնվեցին դիվիզիայի զորամասերին: Դրոշը դիվիզիայի և նրա գնդերի հրամանատարներին հանձնեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանը և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Օգոստոսի 8 – 11-ը դիվիզիայի զորամասերը Երևանից մեկնում էին ռազմաճակատ, ամեն օր կայարանում էր լինում Գ.Ա.Հարությունյանը և հաջողություն մաղթում հայ ռազմիկներին, օգնում խիստ անհրաժեշտ պարագաների ձեռք բերմանը, հետևում էր առանց ուշացման զինվորական գնացքակազմերի ճանապարհման ընթացքին: Դիվիզիայի զորամասերը ժամանակին փոխադրվեցին Գրոզնի և ակտիվորեն մասնակցեցին Կովկասի պաշտպանությանը:

Հայտնի է, որ դիվիզիան այդ մարտերում պատվով կատարեց հրամանատարության առաջադրանքը՝ թույլ չտալով հակառակորդին գրավել Գրոզնին: Դիվիզիայի շտաբի պետ, փոխգնդապետ (հետագայում գնդապետ) Արտաշես Ղազարյանի վկայությամբ, գերմանական 4-րդ տանկային կորպուսի հետ ունեցած կատաղի մենամարտում հայ զինվորները ոչնչացրին ավելի քան 30 գերմանական տանկ, մի քանի հարյուր հիտլերական⁴⁶: Այդ մարտերում զգալի կորուստներ կրեց նաև հայկական դիվիզիան, սակայն ոչ մի քայլ ետ չքաշվեց պաշտպանած բնագծից: Սեպտեմբերի վերջերին – հոկտեմբերի սկզբներին դիվիզիան դուրս բերվեց 9-րդ բանակի ռեզերվ, որտեղ սկսեց համալրվել նոր ուժերով: Հենց այդ օրերին էր, որ վերադաս հրամանատարության որոշ «հայասեր» աստիճանավորների կողմից փորձ արվեց պատրվակ ընդունել դիվիզիայի կորուստները և այն վերակազմավորել սովորական բրիգադի: Նրանց հաջողվեց նույնիսկ կազմել համապատասխան հրաման: Սակայն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար, Անդրկովկասյան ռազմաճակատի խորհրդի անդամ, գեներալ-մայոր Գր.Ա.Հարությունյանի ակտիվ միջամտությամբ այդ հրամանը մնաց միայն թղթի վրա: Գրիգոր Արտեմիչը անմիջապես դիմել էր Ի.Վ.Ստալինին, որը հաշվի էր առնում նրա կարծիքը. 1942թ.

⁴⁶ ՀՀ ԳԱԱ ՊԻ ՀՄՊԴԿԱ, ֆ. 322, գ. 2, թ. 17:

հոկտեմբերի 10-ի թիվ 170646 դիրեկտիվով Գլխավոր հրամանատարության Ձորակայանը չեղյալ համարեց Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան վերակազմավորելու հրամանը: Դրանից անմիջապես հետո՝ 1942թ. հոկտեմբերի 14-ին դիվիզիա ժամանեց Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պատվիրակությունը՝ Գրիգոր Հարությունյանի ղեկավարությամբ: Պատվիրակության անդամները եղան բոլոր զորամասերում, առաջին դիրքերում հանդիպումներ ունեցան հայ ռազմիկների ու սպաների հետ: Գրիգորի Հարությունյանը հոկտեմբերի 15-ին անձամբ եղավ 400-րդ հրաձգային գնդում, զրուցեց զինվորների, հրամանատարների և քաղաշխատողների հետ: Այդ զրույցները խորը տպավորություն թողեցին գնդի անձնակազմի վրա, բարձրացրին նրանց մարտական ոգին⁴⁷:

Այդ մասին հետագայում վկայում է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, որ այդ ժամանակ 400-րդ հրաձգային գնդի կոմերիտական բյուրոյի պատասխանատու քարտուղարն էր. «Հոկտեմբերի 15-ին մեզ մոտ էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Նա հանդիպումներ է ունենում զինվորների և հրամանատարների հետ, պատմում թիկունքի՝ Սովետական Հայաստանի գործերի մասին: Զինվորների հարցերին պատասխանում է հայերեն, բայց վրացական առոգանությամբ, թելավի հայերի բարբառով...»⁴⁸:

Գրիգոր Հարությունյանը մասնակցեց նաև Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային զորախմբի ռազմական խորհրդի նիստին, որտեղ լսվեց դիվիզիայի շտաբի պետ, դիվիզիայի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար, փոխգնդապետ Արտաշես Ղազարյանի զեկույցը: Հիշեցնենք, որ դեռևս 1942թ. փետրվարի 23-ին դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սիմեոն Զաքիյանը նշանակվել էր Կերչում կազմավորվող Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: Նրան այդ պաշտոնում փոխարինել էր փոխգնդապետ Անդրանիկ Սարգսի Սարգսյանը: 1942թ. հոկտեմբերի 1-ին վերջինս նշանակվել էր Հայաստանում կազմավորված 151-րդ հրաձգային դիվիզիայի

⁴⁷ ՈՂ ՊՆԿԱ, ֆ. 89-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 65, թ. 119:

⁴⁸ Խ. Հ. Բարսեղյան, Այսպես ապրեցին, Ե., 1985, էջ 215:

հրամանատար: Ռազմական խորհուրդը բարձր գնահատեց 89-րդ հրաձգային դիվիզիայի առաջին երկու ամիսների մարտական գործողությունների արդյունքները: Ռազմական խորհրդի նիստում ելույթ ունեցավ նաև Գրիգոր Յարությունյանը, որի առաջարկությամբ դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Արտաշես Վասիլյանը, նրա քաղաքով տեղակալ՝ ԴԿ(բ)Կ Կենտկոմի նախկին երկրորդ քարտուղար Խաչիկ Միսաքի Յակոբջանյանը, որը պատերազմի առաջին օրերին կամավոր մեկնել էր ռազմաճակատ և 324-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետն էր: 1942թ. հոկտեմբերի 17-ին Գրիգոր Յարությունյանը հեռագիր էր ուղարկել Կարմիր բանակի գլխավոր քաղաքական վարչության պետ, գեներալ-գնդապետ, ՅամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու Ա.Ս.Շչերբակովին՝ խնդրելով Խ.Ս.Յակոբջանյանին գործուղել Անդրկովկասյան ռազմաճակատի քաղվարչության տրամադրության տակ Յայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի քաղաքական գծով տեղակալի պաշտոնում նշանակելու համար⁴⁹: Ա.Ս.Շչերբակովը կատարել էր ԴԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի խնդրանքը. Խ.Ս.Յակոբջանյանը 1942թ. նոյեմբերի 7-ից նշանակվել էր Յայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի քաղգծով տեղակալ⁵⁰:

Գրիգոր Յարությունյանը ռազմաճակատից երևան վերադարձավ հայկական դիվիզիայից ստացած բարձր տրամադրությամբ: Նրա կարգադրությամբ հոկտեմբերի 29-ին 13 վազոն նվեր ուղարկվեց Յայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմին: Նվերների մեջ կային անհատական ծանրոցներ, զինի, ծխախոտ, միս, պանիր, յուղ, կարտոֆիլ, սոխ և այլն: Գնացքը ուղեկցում էր Գևորգ Յարությունի Ստեփանյանը, որն այն բարեհաջող տեղ հասցրեց Յոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 25-րդ տարեդարձի նախօրյակին և մեծ հանդիսավորությամբ հանձնեց դիվիզիայի հրամանատարությանը⁵¹:

⁴⁹ ԴԴ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 306, ք. 204:

⁵⁰ А.О.Арутюнян, К.А.Арутюнян и др., Боевой путь 89-и стрелковой Армянской Таминской орденов Красного Знамени, Кутузова II степени, Красной Звезды дивизии 1941 – 1942гг., Сборник документов и материалов, Е., 1985, с. 677.

⁵¹ ԴԴ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 306, ք. 182:

Հետագայում էլ, չնայած շատ զբաղված լինելուն, Գ.Ա.Հարությունյանը մշտապես իր տեսադաշտում էր պահում Հայկական 89-րդ դիվիզիան, ուրախանում նրա հաջողություններով, տխրում անհաջողություններով: Նրա ուշադրության կենտրոնում էին նաև հայկական մյուս դիվիզիաները: Հայտնի է, որ նրանցից առաջինը ռազմաճակատ մեկնեց Հայկական 76-րդ Կ.Ե.Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիան: Իրանում իր առաքելությունը հաջողությամբ կատարելուց հետո սեպտեմբերի սկզբներին այն մեկնել էր ռազմաճակատ և 1941թ. սեպտեմբերի 27-ից մարտերի մեջ մտել գերմանաֆաշիստական զավթիչների հետ Ուկրաինայի Պոլտավայի մարզում:

Մինչև դեկտեմբերի սկիզբը դիվիզիան Հարավարևմտյան ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում համառ մարտեր էր մղում Պոլտավա – Խարկով – Վոլչանսկ շրջանում և արժանի հակահարված հասցնում հակառակորդի համառորեն դեպի արևելք ձգտող զորքերին: Դիվիզիայի հրամանատարությունը, նույնիսկ նահանջի այդ ծանր օրերին, իր կապը չէր կտրում Հայաստանից: Այսպես, օրինակ, 1941թ. դեկտեմբերի 6-ին դիվիզիայի զինվորական կոմիսար, գնդային կոմիսար, ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Ա.Ն.Գերվասիևը ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին ուղարկած մամակում գրում է. «Հարգելի Գրիգոր Արտեմովիչ արդեն շուրջ երեք ամիս է մեր կարմրադրոշ միավորման զորամասերը հերոսական մարտեր են մղում գերմանական ֆաշիզմի դեմ, հանում մեր ժողովրդի երջանկության, պատվի և ազատության: Նենգ թշնամու դեմ մղվող այդ արյունահեղ կռիվներում դիվիզիայի մարտիկները, հրամանատարները և քաղաշխատողները պատվով և արիությամբ են կատարում իրենց պարտքը Հայրենիքի հանդեպ... գազազած ֆաշիզմի դեմ մղվող այդ մարտերում մեր միավորման անձնակազմը սրբորեն է պահպանում հայկական դիվիզիայի մարտական ավանդույթները, մարտնչում հերոսաբար, դրանով իսկ պաշտպանում արևավառ Հայաստանը՝ գերմանական զավթիչների ներխուժումից: Այժմ վրա հասնող սաստիկ սառնամանիքների հետևանքով, պայքարի պայմանները բարդանում են: Չնայած դրան, միավորման անձնակազմը շարունակում է նախկին համառությամբ ոչնչացնել գերմանական զավթիչներին: Ցրտերի վրա հասնելու կապակցությամբ, խնդրում են Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին և

անձամբ Ձեզ, Գրիգորի Արտեմովիչ, կազմակերպել հայ ժողովրդին՝ գործող բանակում գտնվող իր զավակների համար տաք հագուստներով ծանրոցներ ուղարկելու համար: Դա կլինի գերմանական ֆաշիզմի դեմ Կարմիր բանակի հերոսական պայքարին հայ ժողովրդի լավագույն նվերը: Ժողովրդի ցուցաբերած հայրական հոգատարության շնորհիվ դիվիզիայի անձնակազմը եռապատկված եռանդով կոչնչացնի մեր սիրելի Չայրենիքի ազատության և անկախության դեմ ոտնձգություն կատարած թշնամուն»⁵²: Ստանալով նամակը, Գրիգոր Չարությունյանը անմիջապես հանձնարարում է ում որ հարկն է մինչև նոր տարի կազմակերպել դիվիզիայի անձնակազմի համար նվերների պատրաստման և առաքման գործը: Շուտով զանազան նվերներ՝ չոր միրգ, խմիչք, ծխախոտ և բավականաչափ տաք հագուստ է հավաքվում, որոնք չորս մեծ վագոններով դիվիզիայի վետերան, կապիտան Սրապիոն Գրիգորի Վարդանյանի ուղեկցությամբ դեկտեմբերի վերջերին ուղարկվում է ռազմաճակատ: Դա մարտնչող զինվորների, հրամանատարների ու քաղաշխատողների համար նոր տարվա հաճելի անակնկալ էր: Նվերների հետ միասին դիվիզիայի հրամանատարը ստանում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի ստորագրությամբ նամակ, որտեղ մասնավորապես ասված է. «Թանկագին ընկերներ, խփեցեք, ոչնչացրեք և կործանեք մեր հողը սողոսկած զգվելի ֆաշիստներին... Գիտցեք, որ ամբողջ հայ ժողովրդի մտքերն ու զգացմունքները ձեզ հետ են, որ նա պատրաստ է իր հերոս պաշտպաններին տալ ոչ միայն այն բոլորը, ինչ անհրաժեշտ է, այլ ամեն իր պատրաստ է համալրելու ձեր շարքերը...»⁵³:

Ինչպես Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության, այնպես էլ Չայաստանի Չանրապետության նորագույն պատմության և Չասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի

⁵² ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 212, թթ. 77 – 78:

⁵³ Նույն տեղում, գ. 219, թթ. 14 – 17 (վերոհիշյալ երկու նամակները մենք հրապարակել ենք «Բանբեր Չայաստանի արխիվների» 1973թ. թիվ 2-ի, 77 – 78 և 85 – 87-րդ էջերում):

Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվներում մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր են պահպանվում, որտեղ արժեքավոր տվյալներ են պարունակում Գրիգոր Հարությունյանի պատերազմական տարիների գործունեության, հատկապես հայկական դիվիզիաների կազմավորման, ժողովրդական տնտեսությունը ռազմական ռելսերի փոխադրման, գերմանաֆաշիստական զավթիչների դեմ հանրապետության ռազմական արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտական, մշակութային կարողությունների համախմբման և կազմակերպման վերաբերյալ և այլն: Երբ 1942թ. հունվար-փետրվարին Կերչում ձևավորվում էր Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, Ղրիմում Գերագույն գլխավոր հրամանատարության Ջորակայանի ներկայացուցիչ, 1-ին կարգի կոմիսար Լև Ջախարովիչ Մեխլիսը դիմեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղարին՝ շտապ կարգով Ղրիմի ռազմաճակատ ուղարկել փորձված քաղաշխատողների և լրագրական, հրատարակչական փորձ ունեցող մասնագետների: Արխիվային փաստաթղթերից իմանում ենք, որ Ջորակայանի ներկայացուցչի պահանջը կատարվել է անմիջապես: Գ.Ա.Հարությունյանի ստորագրած 1942թ. հունվարի 25-ի թվակիր հեռագրից, որն ուղղված էր Ղրիմի ռազմաճակատի քաղվարչության պետ Սոլոմոնյին, երևում է, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հավաքագրմամբ ռազմաճակատի քաղվարչության տրամադրության տակ են ուղարկվել կուսակցական-քաղաքական աշխատանքի մեծ փորձ ունեցող 50 պատասխանատու գործիչներ, որոնց թվում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի օգնական Աղասի Հակոբի Չիլինգարյանը, Ազիզբեկովի (այժմ Վայքի), Դուզքենդի (այժմ Ախուրյան), Կոտայքի, Արթիկի շրջկոմների քարտուղարներ Նիկոլայ Կարապետի Ալեքսանյանը, Խաչատուր Գրիգորի Միքայելյանը, Սամվել Առաքելի Ոսկանյանը, Համբարձում Միսակի Միսակյանը, Տեքստիլ-տրիկոտաժի հայարդիտորհի վարչության նախագահ Հայկ Սարիբեկի Սոխիկյանը, Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության գործերի կառավարիչ Վլադիմիր Եգորի Պապոյանը, Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկայի տնօրեն Ամասիա Տիգրանի Աղաջանյանը և ուրիշներ: Բացի այդ ռազմաճակատի քաղվարչության տրամադրության տակ է ուղարկվում հայերեն լեզվով թերթ հրատարակելու համար մեկ տպարան իր սարքավորումներով, 4 գրաշարներով և

խմբագրության 2 աշխատակիցներով: Մեկնողների թվում էին «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ Արամայիս Նավասարդի Մնացականյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), տպարանի գրաշար Ստեփան Միհրանի Կուրտիկյանը (հետագայում անվանի գրող) և ուրիշներ⁵⁴: 1942թ. մարտի 13-ից հայերեն լեզվով սկսեց լույս տեսնել Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի «Հայկական սնայպեր» պաշտոնաթերթը: Միաժամանակ հայերեն լեզվով Ղրիմի ռազմաճակատում լույս էր տեսնում «Մարտական Ղրիմյան» թերթը⁵⁵: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի նախաձեռնությամբ Կերչում տեղի ունեցող թեժ մարտերի ընթացքում երկու անգամ դիվիզիայի մարտական դիրքեր ժամանեցին Հայաստանի կառավարական պատվիրակությունները: Առաջին պատվիրակությունը դիվիզիա ժամանեց 1942թ. ապրիլի 1-ին՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Սաղակ Պապյանի ղեկավարությամբ: Մերձճակատային գոտում, հանդիսավոր պայմաններում նա մարտական դրոշմեր հանձնեց դիվիզիայի զորամասերին: Դիվիզիայի անձնակազմը երդվեց արդարացնել Հայաստանի աշխատավորության վստահությունը՝ մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել ֆաշիստական զավթիչների դեմ: Երկրորդ պատվիրակությունը դիվիզիա ժամանեց 1942թ. ապրիլի վերջին՝ մասնակցելու մայիսնեկյան տոնակատարությանը: Այդ մասին իմանում ենք ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի՝ 1942թ. ապրիլի 23-ի հեռագրից՝ ուղղված ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի տեղակալ, Ղրիմում Գերագույն զլխավոր հրամանատարության զորակայանի ներկայացուցիչ, առաջին կարգի բանակային կոմիսար Լ.Ձ.Մելիխսին. «Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի որոշմամբ, մայիսյան օրերին Հայկական դիվիզիայի զորամասերում քաղաքական աշխատանքներ տանելու համար, դիվիզիա են գործուղվում Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Աղասի Սողոմոնի Սարգսյանը, Երևանի քաղկոմի ագիտացիայի և

⁵⁴ ՀՀ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 304, թթ. 303 – 306:

⁵⁵ Թերթը հրատարակվում էր նաև ռուսերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով:

պրոպագանդայի բաժնի վարիչ Ջավեն Տիգրանի Գրիգորյանը և ՉԿ(բ)Կ Կենտկոմի անդամ, սննդարդյունաբերության նախարար ընկ. Գուրգեն Արզումանյանը: Ընկերներին հանձնարարված է Չայկական դիվիզիայի գորամասերում անցկացնել զրույցներ և ժողովներ, որտեղ մարտիկներին ծանոթացնել երկրի պաշտպանության ամրապնդման գործին հանրապետության աշխատավորության ակտիվ մասնակցության, արդյունաբերական ձեռնարկություններում և կոլտնտեսություններում տիրող աշխատանքային էնտուզիազմի հետ»⁵⁶: Մայիսի 1-ին պատվիրակները այցելեցին դիվիզիայի գորամասերը, զրուցեցին մարտիկների հետ, զեկուցումներ կարդացին հայրենասիրական թեմաներով, պատմեցին թիկունքում տարվող հերոսական աշխատանքի մասին: Մայիսնեկյան տոնակատարության օրերին դիվիզիա ժամանեց նաև Մեղրու շրջանի կոլտնտեսականների պատվիրակությունը, որոնք իրենց հետ բերած մեկ վագոն նվերները (մրգեր, գինի, հագուստ) դիրքերում բաժանեցին զինվորներին⁵⁷: Դիվիզիայի անձնակազմի անունից հրամանատար, գնդապետ Չմայակ Գրիգորի Բաբայանը և կոմիսար, ավագ գումարտակային կոմիսար Թորգոմ Շահինյանը Չայաստանի պատվիրակների հետ զեկուցագիր ուղարկեցին ՉԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գ.Ա.Չարությունյանի և ՉԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Պ.Պապյանի անուններով, որտեղ շնորհակալություն էին հայտնում իրենց նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար և հավաստիացնում, որ հայ ռազմիկները պատվով կկատարեն հրամանատարության բոլոր առաջադրանքները, կջախջախեն ֆաշիստական զավթիչներին ու տուն կվերադառնան հաղթանակով⁵⁸: Հիշատակության է արժանի մեկ այլ փաստ, երբ 1942թ. մարտի 31-ին իր հրամանատարական կետում դիվիզիայի գործողությունները ղեկավարելիս թշնամու ռունքի բեկորներից մահացու վիրավորվեց և ապրիլի 2-ին ստացած վերքերից զոհվեց գնդապետ Ս.Գ. Ջաքիյանը, ապա Ղրիմի ռազմաճակատում զորակայանի ներկայացուցիչ, առաջին կարգի բանակային կոմիսար Լ.Զ.Մեխլիսը ապրիլի 3-ին հետևյալ բովանդակությամբ

⁵⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 304, թ. 191:

⁵⁷ Տես նույն տեղում, թ. 190:

⁵⁸ Տես նույն տեղում, գ. 302, թ. 136:

հեռագիր ուղարկեց ՅԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Յարությունյանի անունով. «Հայ ժողովրդի և խորհրդային Միության բոլոր ժողովուրդների թշնամիների դեմ մղվող մարտերում քաջի մահով ընկավ գնդապետ Սիմեոն Գևորգի Ջաքիյանը: Ջաքիյանի ղեկավարությամբ հայկական զորամասերը տոկունությամբ կռվում էին գերմանական զավթիչների դեմ, մարտի 20-ին ետ մղելով գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի գրոհը, որի ժամանակ հակառակորդը հսկայական կորուստներ կրեց: Բանակի մյուս զորամասերի հետ միասին հայ մարտիկներն այնպես ջախջախեցին հակառակորդին, որ նա կռվի դաշտում թողեց 47 տանկ: Ցավակցություն են հայտնում հայ ժողովրդին՝ Կարմիր բանակի ականավոր հրամանատար Սիմեոն Գևորգի Ջաքիյանի մահվան առթիվ: Հավատացած են, որ հայ ժողովրդի հավատարիմ զավակ Ջաքիյանին փոխարինելու համար ոտքի կենի խիզախների մի ամբողջ բանակ և վրեժ կլուծի թշնամուց: Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում իր ճակատագիրը հարազատորեն կապել է ռուս ժողովրդի հետ, հանդիսանալով նրա սիրելի կրտսեր եղբայրը: Մենք կրկնապատիկ ու եռապատիկ եռանդով պայքար կմղենք գերմանական զավթիչների դեմ և մեր սրբազան հողը կմաքրենք գարշ աղտեղությունից: Մահ գերմանական զավթիչներին»⁵⁹: Գ.Յարությունյանի միջնորդությամբ Ղրիմի ռազմաճակատի հրամանատարությունը թույլատրեց հերոս գնդապետի աճյունը փոխադրել Երևան: Հայաստանի կառավարության որոշմամբ գնդապետ Ս.Գ.Ջաքիյանին սգո հանդիսավոր արարողությունով թաղեցին Ս.Մ.Կիրովի անվան մանկական կենտրոնական զբոսայգում: Այդ նպատակով կառավարությունը հատկացրեց 32.720 ռուբլի, բացի այդ, զոհվածի ընտանիքին միանվագ հանձնվեց 6000 ռուբլի⁶⁰: Հանրապետական կենտրոնական թերթերում տպագրվեց «Հայ ժողովրդի խիզախ զավակ Ս.Գ.Ջաքիյանի վառ հիշատակին» մահախոսականը, որի տակ առաջինը դրված էր Գ.Ա.Յարությունյանի ստորագրությունը⁶¹: Երախտագետ հայ ժողովուրդը հետագայում հավերժացնելով իր հերոսի

⁵⁹ ՀՀ ԳԱԱ ՊԻ ՀՄՊՊԿԱ, ֆ. 3, գ. 1, թթ. 1 – 2:

⁶⁰ ՏԵՆ ՆՊՊԿԱ, ֆ. 113, գ. 24, գ. 276, թ. 1, գ. 278, թ. 1:

⁶¹ ՏԵՆ «Սովետական Հայաստան», «Коммунист», 5 ապրիլի, 1942թ.:

հիշատակը, նրա շիրիմի գրանիտե պատվանդանի վրա կանգնեցրեց բրոնզե կիսանդրի, որի հանդիսավոր բացում տեղի ունեցավ 1957թ. մայիսի 9-ին⁶²:

Նման վերաբերմունք ցուցաբերվեց նաև 1943թ. փետրվարի 10-ին Կրասնոդարի երկրամասի Նովո-Ջիրալևկայի մոտ հերոսաբար զոհված գնդապետ Արտաշես Վասիլյանի հանդեպ, որի աճյունը փոխադրվեց Լենինական (Գյումրի) և թաղվեց քաղաքային զբոսայգում⁶³:

Պատերազմի առաջին շրջանում Հայաստանում կազմավորված Հայկական 408-րդ, 409-րդ և 261-րդ հրաձգային դիվիզիաները նույնպես գտնվում էին Գրիգոր Հարությունյանի ուշադրության կենտրոնում: Երբ 1941թ. օգոստոսին սկսվեցին առաջին երկու դիվիզիաների կազմավորման աշխատանքները, Կենտկոմի առաջին քարտուղարի անմիջական կարգադրությամբ լուծվեցին այդ դիվիզիաներին շինություններ հատկացնելու խնդիրները: Այսպես, օրինակ, Կենտկոմի համապատասխան որոշման հիման վրա, 1941թ. օգոստոսի 19-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհը որոշում ընդունեց 408-րդ դիվիզիային ժամանակավորապես հատկացնել հանրակացարաններ. 1. Ալյունիճիճից երեք ստանդարտ տնակներ, յուրաքանչյուրում 29 բնակարան, 4 փայտաշեն բարաքներ, 5 ֆաներային բարաքներ՝ յուրաքանչյուրը 200քառ. մետր տարածքով, երկհարկանի տուն բաղկացած 8 սենյակից: Հատկացված բնակտարածության ցուցակում նշված էր մինչև 16 անուն, որոնց թվում ճաշարան, խանութ, հյուրանոց, վարսավիրանոց, կոշիկի վերանորոգման արհեստանոց, կարի արհեստանոց և այլն: Այդ որոշմամբ դիվիզիային տարածքներ էին հատկացնելու թիվ 447 գործարանը (10 բարաք, պեմզաբլոկից կառուցված եռահարկ շենք և ճաշարան), Մարմարի գործարանը և այլն⁶⁴: 409-րդ հրաձգային դիվիզիային շինություններ հանձնվեցին սկզբում Ստեփանավանում, ապա՝ Լենինականում: 261-րդ դիվիզիան կազմավորվեց ավելի ուշ՝ 1942թ. աշնանը, որին հանձնվեցին ռազմաճակատ մեկնած 408-րդ և 89-րդ հրաձգային դիվիզիաների զորանոցներն ու մյուս շինությունները: ՀԿ(բ)Կ Կենտկոմի

⁶² Տես նույն տեղում, 10 մայիսի 1957 թ.:

⁶³ Տես նույն տեղում, 25 փետրվարի 1943:

⁶⁴ Տես ՀՀ ԼՊԿԱ, ֆ. 114, ց. 26, գ. 174, թ. 1:


ուղեգրերով այդ դիվիզիաներ իսկական զինվորական ծառայության ուղարկվեցին ամենալավագույն կադրերը: Այսպես, օրինակ, 408-րդ դիվիզիայի շտաբի կոմիսար նշանակվեց Երևանի ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտի տնօրեն, ավագ քաղղեկ Անդրանիկ Արմենակի Իսահակյանը, քաղբաժնի պետի տեղակալ՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ավագ քաղղեկ Գարեգին Բախշիի Պետրոսյանը, քաղբաժնի պրոպագանդիստներ՝ Արմֆանի և համալսարանի գիտաշխատողներ ու դասախոսներ, ավագ քաղղեկներ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը (հետագայում Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս), Սմբատ Բադալյանը, Գևորգ Քացախյանը, Իշխան Բաղդասարյանը, Միքայել Մարկոսյանը: 670-րդ գնդի կոմիսար նշանակվեց գումարտակային կոմիսար Գուրգեն Սահակի Մարինոսյանը, որը մինչև պատերազմը Լենինականի պետական դրամատիկական թատրոնի տնօրենն ու գլխավոր ռեժիսորն էր, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, 851-րդ առանձին կապի գումարտակի կոմիսար՝ ավագ քաղղեկ Եղիշե Կարապետի Յովհաննիսյանը (մինչև պատերազմը եղել է ՀԽՍՀ կապի նախարարության վարչության պետ), 485-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակի կոմիսար՝ ավագ քաղղեկ Երվանդ Մկրտչի Խալեյանը (մինչև պատերազմը Հայաստանի հեղափոխության թանգարանի տնօրենն էր, պատերազմից հետո՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաթինետի վարիչ, ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու) և շատ ուրիշներ, որոնց անձամբ ճանաչում և վստահում էր Գրիգոր Հարությունյանը: 1942թ. մարտի 15-ից հայերեն լեզվով սկսեց լույս տեսնել դիվիզիայի «Հանուն Հայրենիքի» պաշտոնաթերթը, որի խմբագիր է նշանակվում ԶԿ(Բ)Կ Կենտկոմի պրոպագանդիստ, Արմֆանի պատմության ինստիտուտի գիտաշխատող, ավագ քաղղեկ Արշավիր Մնացականի Հակոբյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), պատասխանատու քարտուղար՝ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, ավագ քաղղեկ Սուրեն Երվանդի Հակոբյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր), որին հետո փոխարինեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մամուլի սեկտորի վարիչ, ավագ քաղղեկ Գևորգ Արմենակի Հայրյանը (հետագայում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անվանի գրականագետ, գրող, պետական, կուսակցական ականավոր գործիչ): Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան ռազմաճակատ է մեկնել 1942թ. սեպտեմբերի 11-ին և նույն ամսվա 18-ից մինչև նոյեմբեր մարտերի մեջ մտել Տուալսեի պաշտպանական շրջանում՝ ծանր կորուստներով թույլ չտալով թշնամուն գրավելու Անդրկովկաս տանող լեռնանցքները: Հենց այդ դժվարին օրերին դիվիզիայի հրամանատար, գնդապետ Պավել Նիկոլակիչ Կիցուկը հեռագրով խնդրում է Գրիգոր Հարությունյանից շտապ իրենց մոտ գործուղել կուսակցական աշխատանքի մեծ փորձ ունեցող ընկերների՝ փոխարինելու մարտերում ընկածներին: Հոկտեմբերի 2-ին Գ.Ա.Հարությունյանը հեռագրում է դիվիզիայի հրամանատարին. «Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի որոշմամբ 408-րդ հրաձգային դիվիզիա է գործուղվում Կենտկոմի ռազմական բաժնի վարիչ ընկ. Աշոտ Աղաբեկի Սկրտչյանը և 10 հոգուց բաղկացած մի խումբ, կազմված կուսակցական-խորհրդային ակտիվից՝ մեկ ամիս ժամանակով 408-րդ հրաձգային դիվիզիայում կուսակցական-քաղաքական աշխատանքներ տանելու համար»⁶⁵: Գ.Հարությունյանի կողմից Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբի, որի կազմում մարտնչում էր Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, ռազմական խորհրդի անդամ Լազար Մոյսեսեիչ Կազանովիչին նույն ամսվա 9-ին ուղարկած մեկ այլ հեռագրից պարզվում է, որ բացի վերոհիշյալ 10 հոգուց, դիվիզիա է գործուղվել նաև 29 հոգուց բաղկացած կուսակցական-խորհրդային աշխատանքի մեծ փորձ ունեցող մի խումբ ևս, որը հոկտեմբերի 7-ին ժամանել է դիվիզիա: Խումբը իր հետ ռազմաճակատ էր տարել նաև թերթեր, գրքույկներ, հանդեսներ (250 օրինակ «խորհրդային Հայաստան» թերթ, 50 օրինակ «Սովետական գրականություն» հանդես, 1942թ. օգոստոսի 23-ին Թբիլիսիում կայացած Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգի դիմում-կոչի 2000 օրինակ և այլն): Գ.Ա.Հարությունյանը Ռազմական խորհրդի անդամին հավաստիացնում է, որ ռազմաճակատ ուղարկվող

⁶⁵ ՀՀ ՀԵԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 306, ք. 229:



Գրիգոր Հարությունյան, Թբիլիսի 1936թ.







Համ Կ(ք)Կ 17-րդ համագումարի (1934թ.) մի խումբ պատգամավորներ Անդրկովկասից (վերևից՝ աջից շորրորդը՝ Գրիգոր Հարությունյան, հինգերորդը՝ եղբայրը՝ Սերգեյ Հարությունով)



«Մասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի
տոնակատարության ժամանակ:



Գ. Հարությունյանը աղջկա՝ Նամիի հետ





Գրիգոր Հարությունյանը Անդրկովկասյան գինվորական օկրուգի
հրամանատարության հետ, 1940թ.



Գրիգոր Հարությունյանը զինվորականների հետ





Նամի Հարությունյանը և Նինա Գրիգորևնան 1949թ.




Գրիգոր Հարությունյան



Սերգեյ Արտեմի Հարությունովը
(Գրիգոր Հարությունյանի եղբայրը)



Գ. Հարությունյանը հայկական դիվիզիայի հրամանատարության հետ



Առանձնատուն Կոնդում, որտեղ պատերազմի տարիներին բնակվել է Գ. Հարությունյանի ընտանիքը




Գրիգոր Հարությունյանը խորհրդակցում է Ջերմուկի առողջարանի տեղը որոշելու համար, 1944թ.



Գրիգոր Հարությունյանը Հայաստանի Գերագույն Խորհրդի պատգամավորների հետ



Գ. Հարությունյանը Մ. Կալինինի հետ





Գ. Հարությունյանը Ուզբեկստանի պատվիրակության
նվիրած ազգային տարազով



Մայիսնեկյան շքերթի ժամանակ



Լ.Շահումյանը, Նինա Գրիգորյանան, Նամի Հարությունյանը,
Գրիգոր Հարությունյանը, Հ.Թումանյանը



Գ.Հարությունյանը Անաստաս Միկոյանի հետ






Մայիսյան շքերթի ամբիոնում. Գրիգոր Հարությունյանը
իր ուսուցիչ Միմակ Սահակյանի հետ



Գրիգոր Հարությունյան 1949թ.



Գրիգոր Հարությունյան 1950թ.






Նոյեմբերյան շքերթի տոնակատարության ժամանակ



Գ. Հարությունյանի և Ա. Միկոյանի հանդիպումը ընտրողների հետ





Գ. Հարությունյանը կնոջ հետ



ԽՍՀՄ հայ պատգամավորները Մոսկվայում

թերթերի, հանդեսների, գեղարվեստական գրականության առաքումը այսուհետև կդառնա ավանդույթ⁶⁶:

ՉԿ(Բ)Կ Կենտկոմի և անձամբ նրա առաջին քարտուղարի անմիջական ուշադրության կենտրոնում են եղել նաև Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմավորման, համալրման, մարտական պատրաստության աշխատանքները, չնայած դրանք կատարվում էին մայրաքաղաքից ավելի քան 120 կմ հեռավորության վրա: Կենտկոմը հատկապես զգալի գործ կատարեց դիվիզիան փորձված քաղաշխատողներով համալրելու հարցում՝ կուսակցական հավաքագրմամբ այնտեղ ուղարկելով իր լավագույն կադրերին: Այսպես, օրինակ, դիվիզիայի կոմիսար նշանակվեց ավագ գումարտակային կոմիսար Արշալույս Նահապետի Հայրապետյանը, քաղբաժնի պետ՝ գումարտակային կոմիսար Լիպարիտ Սերոբի Վարդանյանը, նրա տեղակալ՝ գումարտակային կոմիսար Գևորգ Ստեփանի Եղիազարյանը, դիվիզիայի կուսակցական հանձնաժողովի նախագահ՝ գումարտակային կոմիսար Սկրտիչ Գուլյանը, 534-րդ հրաձգային զնդի կոմիսար, գումարտակային կոմիսար Աշոտ Հովսեփի Հարությունյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) և ուրիշներ, որոնք մինչև պատերազմը վարում էին կուսակցական, պետական, գիտամանկավարժական պատասխանատու աշխատանք: Կենտկոմի առաջին քարտուղարի անմիջական հսկողությամբ համալրվեց նաև դիվիզիայի «Մարտական դրոշ» պաշտոնաթերթի խմբագրության կազմը: Թերթի խմբագիր նշանակվեց «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագիր, գրականագետ, ավագ քաղղեկ Հարություն Գաբրիելի Սկրտչյանը (հետագայում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), քարտուղար՝ Հայաստանի լուսժողկոմատի արվեստի վարչության տեսուչ, քաղղեկ Գարեգին Բեսը (Գարեգին Բախշիի Սարինյան), գրական աշխատող՝ «Կոլտնտեսական» հանդեսի խմբագիր, քաղղեկ Վախթանգ Ստեփանի Անանյանը (հետագայում անվանի գրող): Թերթը կոչվում էր «Մարտական դրոշ»: Նրա առաջին համարը լույս տեսավ 1942թ. փետրվարի 23-ին հայերեն:

Մինչև 1942թ. դեկտեմբերի սկիզբը Հայկական 409-րդ

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 207:

հրաձգային դիվիզիան տեղավորված էր Խորհրդային Հայաստանի տարածքում և մարտական պատրաստության հետ մեկտեղ պաշտպանում էր խորհրդա-թուրքական սահմանը Ախուրյան գետի տեղամասում, կառուցում պաշտպանական ամրություններ: Այդ աշխատանքները հաջողությամբ կատարելու համար դիվիզիան արժանացավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի փոխանցիկ Կարմիր դրոշին⁶⁷: 1942թ. դեկտեմբերի 2-ին դիվիզիան Լենինականից 17 զնաքակազմերով մեկնեց գործող բանակ: Դիվիզիան ռազմաճակատ ճանապարհողների թվում էին Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական պատասխանատու աշխատողներ՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի գլխավորությամբ⁶⁸:

զ) ՈԱԶՄԱՆԱԿԱՍԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԸ

Ռազմաճակատ մեկնելուց հետո էլ հայկական դիվիզիաները ոչ միայն մշտական կապ էին պահպանում Խորհրդային Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և կառավարության հետ, այլև հրատապ շատ հարցերի լուծման համար անմիջականորեն դիմում էին Գրիգոր Հարությունյանին: Հատկապես հայկական, ինչպես նաև ինտերնացիոնալ կազմ ունեցող բազմաթիվ միավորումների համար, որոնց շարքերում ծառայում էին հազարավոր հայեր, խիստ պահանջ էր զգացվում հայ ժողովրդի հերոսական անցյալն ու ներկան պատկերող հանրամատչելի գրականության: Գ.Հարությունյանի նախաձեռնությամբ 1943թ. մարտի 3-ին Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության հանձնաժողով ստեղծելու մասին, որի հիմնական խնդիրն էր գերմանաֆաշիստական զավթիչների դեմ խորհրդային ժողովրդի ազատագրական պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ նյութերի հավաքումը, մշակումը, գիտահանրամատչելի գրքույկների հրատարակման գործի կազմակերպումը⁶⁹:

⁶⁷ Տե՛ս ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 409-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թթ. 2 – 3:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

⁶⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 98, թ. 21:

Այդ որոշման հիման վրա Արմֆանի նախագահությունը հանձնարարեց վերակառուցել պատմության ինստիտուտի աշխատանքի պլանը՝ ինստիտուտի հիմնական խնդիրներից մեկը համարելով Հայրենական մեծ պատերազմի պատմության, մասնավորապես Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող նյութերի հավաքումը, ուսումնասիրությունը և հրատարակումը⁷⁰: Հարկ ենք համարում նշել, որ մինչև վերոհիշյալ որոշումը, Արմֆանի նախագահ, ակադեմիկոս Յովսեփ Օրբելու նախաձեռնությամբ, որը միաժամանակ գլխավորում էր պատմության ինստիտուտը, դեռևս 1942թ. ինստիտուտում ստեղծվել էր Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության կաբինետ, որտեղ հավաքվում էին հայ ռազմիկների սխրանքների մասին նյութեր: Ինստիտուտի աշխատակիցների ջանքերով պատերազմի տարիներից հրատարակվեցին ավելի քան 30 անուն գիտահանրամատչելի գրքույկներ, նվիրված ինչպես Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած հայ հերոսների, գեներալների սխրանքներին, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական պայքարի, ռուսական բանակի հայ գեներալների կյանքին ու գործունեությանը: Այդ մատենաշարով հրատարակվեցին «Նելսոն Ստեփանյան», «Ավագ լեյտենանտ Պատրիկ Գազազյան», «Սերգեյ Օհանյան», «Ղուկաս Մադոյան», «Մամիկոն Խաչանյան», «Վարդան Մամիկոնյան», «Սմբատ Բագրատունի», «Գեներալ Լոռիս-Սելիքով», «Գեներալ Վասիլի Բերուտով», «Գեներալ Արշակ Տեր-Ղուկասով», «Գեներալ Իվան Լազարև», «Գեներալ Բ.Մ.Շելկովնիկով», «Հայ քաջորդիներ», «Անմահություն», «Ձանգեզուրի որդին (օդաչու Սամսոն Մկրտումյան)», «Գեներալ Ի.Բ.Բաղրամյան», «Գեներալ Սարգիս Մարտիրոսյան», «Գեներալ Նվեր Սաֆարյան», «Գեներալ Իսահակ Գասպարյան» և բազմաթիվ այլ գրքույկներ, որոնք լայն տարածում գտան ինչպես հանրապետությունում, այնպես էլ ռազմաճակատում: Գրիգոր Հարությունյանի ցուցումով այդ գրքույկներն ուղարկվում էին Անդրկովկասյան, Հյուսիս-Կովկասյան, Ղրիմի, Հարավարևմտյան, Ստալինգրադյան և այլ ռազմաճակատներ, որտեղ

⁷⁰ Տե՛ս Կ.Ա.Հարությունյան, Մ.Գ.Սահակյան, *Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի*, Ե., 1988, էջ 23:

քաղաշխատողները դրանք օգտագործում էին որպես ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի նյութ: Բացի այդ, Կենտկոմին կից ստեղծվեց հայ պատմաբանների դասախոսական մի խումբ, որը դրվեց Անդրկովկասյան ռազմաճակատի քաղվարչության տրամադրության տակ⁷¹:

Պատերազմի ամենաթեժ պահերին անգամ երբեք չէր ընդհատվում Գ.Ա.Չարությունյանի կապը ոչ միայն Անդրկովկասյան ռազմաճակատի, այլև Կովկասի սահմաններից բավականաչափ հեռու մարտնչող այլ ռազմաճակատների հրամանատարությունների հետ: Այնքան մեծ էր նրա հեղինակությունը, որ մշտապես տարբեր ռազմաճակատներից, բանակներից ու զորամիավորումներից նամակներ ու հեռագրեր էին ստացվում Գ.Ա.Չարությունյանի անունով, որոնց մեջ տեղյակ էր պահվում հայկական դիվիզիաների, մարտերում իրենց սխրանքներով աչքի ընկած հայ ռազմիկների մասին: Չաճախ այդ նամակներում բարձրացվում էին նախ այնպիսի հարցեր, որոնք կոնկրետ, հրատապ լուծումներ էին պահանջում: Արխիվներում պահպանված այդ փաստաթղթերի վրա Գրիգոր Չարությունյանի կատարած հակիրճ, բայց գործնական իմաստ ունեցող մակագրություններից ավելի է պարզվում նրա պարտաճանաչությունը, ինչու չէ, նաև մարդկային բարձր հատկանիշները: Այսպես, օրինակ, 1944թ. հունիսի 2-ին Չայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետ փոխգնդապետ Չակոբյանը դիմում է ՉԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին՝ դիվիզիայի 531-րդ հրետանային գնդի կուսկազմակերպիչ, կապիտան Արմենակ Կարապետի հառատյանի երևանաբնակ ընտանիքին՝ կնոջը, ուսանող որդուն և մանկապարտեզի հասակ ունեցող երկու տղաներին դրամական ու նյութական օգնություն ցույց տալու խնդրանքով: Գրությունն ստանալուն պես Գրիգոր Չարությունյանը մակագրում է ՉԿ(բ)Կ Կենտկոմի ռազմական բաժնի վարիչ Բաբայանին՝ անմիջապես օգնել ճակատային քաղաշխատողի ընտանիքին և զեկուցել: Որոշ ժամանակ անց Գ.Ա.Չարությունյանին հայտնվում է, որ կապիտան Ա.Կ.հառատյանի ընտանիքին ցույց է տրված նյութական և դրամական օգնություն, մասնավորապես հատկացվել է՝ «սննդամթերք, նախաճաշի օրդերներ (2 հատ), 50 կգ կարտոֆիլ,

⁷¹ Տե՛ս Չայ ժողովրդի պատմություն, հ. 8, է., 1970, էջ 178:

2 խորանարդ մետր վառելափայտ, 10 լիտր նավթ, մի զույգ կոշիկ, 4 զույգ երեխայի գուլպա, կինը ստանում է 600ռ.»⁷²: Ինչպես մեզ հաջողվեց պարզել, այդ օգնությունը ստացած երեխաներից ավագը այժմ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆրունզե Խառատյանն է, միջնեկը՝ ճանաչված մասնագետ ատամնաբույժ-վիրաբույժ Ռազմիկ Խառատյանը, կրտսերը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ հասարակական-քաղաքական մտքի ու մամուլի պատմության թեմատիկ խմբի ղեկավար, «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը: 1944թ. նոյեմբերի 13-ին ռազմաճակատից Գ.Ա.Հարությունյանին է դիմում 159-րդ բանակային թնդանոթաիրետանային գնդի հրամանատարի տեղակալ փոխգնդապետ Սարգսյանը՝ Երևանի Տպագրիչների փողոցի 8-րդ շենքի 34-րդ բնակարանում ապրող իր 4 հոգուց բաղկացած ընտանիքին (կնոջը և 3 անչափահաս երեխաներին) օգնություն ցույց տալու խնդրանքով: Նոյեմբերի 18-ին, դիմումը ստանալու օրը Գրիգոր Հարությունյանը մակագրել է՝ ապահովել և զեկուցել⁷³: 1943թ. մարտի 26-ին Թբիլիսիում տեղաբաշխված թիվ 367 հոսպիտալի պետի քաղզոմ տեղակալ, գնդապետ Գուրկովսկին և հոսպիտալի կուրսյուրոյի քարտուղար, լեյտենանտ Տինչուկը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին ուղարկած իրենց նամակով խնդրում են կազմակերպել հոսպիտալում բուժվող հայ վիրավոր զինվորների ու սպաների համար հայերեն գրքերի, թերթերի և հանդեսների առաքման գործը: Ապրիլի 6-ին Գրիգոր Հարությունյանը նամակն ուղարկել է Կենտկոմի ազիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Գրիգորյանին հետևյալ մակագրությամբ՝ «կազմակերպել թերթերի և գրականության առաքումը և զեկուցել»⁷⁴:

Հաճելի ավանդույթ էր դարձել ռազմաճակատում աչքի ընկած հայ ռազմիկների սխրանքների մասին զորամասերի հրամանատարների կողմից ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին զեկուցելը: Շատ հաճախ նրան էին դիմում նաև

⁷² ՀՀ ՀԲԿՓ, ՊԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 377, թթ. 145 – 146:

⁷³ Տե՛ս նույն տեղում, թ. 89:

⁷⁴ Նույն տեղում, ց. 032, գ. 403, թ. 10:

ռազմաճակատների, բանակների, կորպուսների, դիվիզիաների հրամանատարներ, նրանք ոչ միայն պատմում էին հայ ռազմիկների կամ հայկական միավորումների կատարած սխրանքների մասին, այլև շնորհակալություն հայտնում ռազմաճակատին ցույց տված այս կամ այն օգնության համար: Ռազմաճակատում հայ մարտիկների կատարած սխրանքների մասին ստացված հետաքրքիր նյութերն անմիջապես ուղարկվում էին Կենտկոմի պաշտոնաթերթերին, որոնք տպագրում էին դրանք: Այդ մասին հաղորդումներ էր տալիս նաև հանրապետական ռադիոն: ԳԳ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվում պահվում է Հյուսիս-Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ-գնդապետ Պետրովի՝ 1943թ. հոկտեմբերի 9-ի հեռագիրը՝ ուղղված ԶԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանին, որտեղ պատմվում էր Թամանի թերակղզին գերմանաֆաշիստական զավթիչներից լրիվ ազատագրելու մարտերին Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի գործուն մասնակցության մասին և այդ առթիվ մարտական ողջույններ հայտնում Հայաստանի աշխատավորությանը⁷⁵: Թամանի թերակղզին ազատագրելու մարտերին գործուն մասնակցություն ունենալու համար Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիային Գերագույն զխավոր հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Ի.Վ.Ստալինի՝ 1943թ. հոկտեմբերի 9-ի հրամանով շնորհվեց «Թամանյան» պատվավոր անվանում⁷⁶:

Հոկտեմբերի 10-ին Գ.Ա.Հարությունյանն այդ առթիվ գեներալ-գնդապետ Ի.Վ.Պետրովին ուղղված հեռագրում շնորհավորում է ռազմաճակատի հրամանատարությանը ձեռք բերած հաջողության առթիվ և հավաստիացնում, որ Հայաստանի աշխատավորությունը, ոգևորված հայկական դիվիզիայի մարտական հաջողություններով, աշխատանքային նորանոր սխրանքներով կնշի այդ հաղթանակը⁷⁷:

Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվի՝ Գ.Ա.Հարությունյանի ֆոնդում (ֆ. 52) պահվում է նաև Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային զորախմբի

⁷⁵ Տե՛ս ԳԳ ԳԱԱ ՊԻ ՀՄՊՊԿԱ, ֆ. 52, գ. 1, ք. 5:

⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», 10 հոկտեմբերի 1943թ.:

քաղբաժնի պետ, բրիգադային կոմիսար Նադորշինի՝ 1942թ. դեկտեմբերի 1-ի թիվ 0536 նամակն ուղղված Գրիգոր Յարությունյանին, որտեղ պատմվում է մարտերում իրենց սխրանքներով աչքի ընկած հայ ռազմիկների մասին⁷⁸:

Գ.Ա.Յարությունյանի անունով ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկների ու սպաների կողմից ուղարկվող նամակներն ու հեռագրերն ավելի շատացան, երբ Կովկասյան ռազմաճակատի ամենալարված շրջանում՝ 1943թ. փետրվարին հայ ժողովուրդը հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում մարտնչող իր զավակներին: Նամակը ստորագրել էին 335.316 մարդ, որոնց թվում նաև ՅԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարը: Նամակը վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթների մասին, կոչ անում տուն վերադառնալ միայն հաղթանակով⁷⁹: Նամակը հրատարակվեց բազմահազար օրինակներով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով ու տարածվեց բոլոր ռազմաճակատներում: Այն հրապարակվեց նաև “Правда”, “Известия”, “Комсомольская Правда”, բազմաթիվ այլ հանրապետական ու ռազմաճակատային թերթերում: Նամակը լայն արձագանք գտավ ոչ միայն Կովկասյան, այլև մյուս ռազմաճակատներում մարտնչող հայ ռազմիկների սրտերում, որոնք իրենց պատասխան նամակներում երդվում էին տուն վերադառնալ միայն հաղթանակով: Այդ առումով հատկանշական է 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանի՝ 1943թ. ապրիլի 5-ի նամակն՝ ուղղված ՅԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Յարությունյանին, որտեղ մասնավորապես ասված էր. «Ռազմաճակատում մարտնչող յուրաքանչյուր հայ զինվոր հուզմունքով կարդալով հայ ժողովրդի կոչը, պարտավոր է երդվել իր ժողովրդին, որ ավելի մեծ ուժով կհարվածի թշնամուն և վրեժխնդիր կլինի նրանից կատարած ոճրագործությունների համար... Ես անձամբ երդվում եմ մինչև արյանս վերջին կաթիլը մարտնչել թշնամու դեմ և չարատավորել իմ Յայրենիքի պատիվը: Մինչև վերջ հավատարիմ կլինեմ մեր ժողովրդին, հերոս Գևորգ

⁷⁸ Տե՛ս ԴԴ ԳԱԱ ՊԻ ՊՊԿԱ, ֆ. 52, գ. 1, ք. 4:

⁷⁹ Տե՛ս Յայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, Ե., 1943:

Մարզպետունու խոսքերին՝ «Երդվում եմ իմ հայրենիքի արևով, որ ես այլևս չեմ վերադառնա իմ ընտանիքի գիրկը, չեմ մտնի իմ հարկի տակ, մինչև վերջին թշնամուն դուրս չվճռո՞ւն հայրենի սահմաններից»⁸⁰: Գրիգոր Չարուքյունյանը այդ նամակի վրա մակագրել է. «Ընկեր Չ.Տ.Գրիգորյանին, տպագրել թերթերում»:
Ավելի ուշ՝ 1943թ. հոկտեմբերի 21-ին Չայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի անձնակազմը նամակ-գեկույց ուղարկեց Գ.Ա.Չարուքյունյանին, որտեղ տրված էին հայ ժողովրդի նամակը ստանալուց հետո, անցած յոթ ամիսների ընթացքում դիվիզիայի մարտական գործողությունների արդյունքները. «Յոթ ամիս է անցել այն օրից, ինչ մենք ձեզանից ստացանք հայ ժողովրդի նամակ-նակազը՝ ուղղված հայ ռազմիկներին: Այդ նամակն ամբողջությամբ գրված էր մեր եղբայրների, քույրերի, մայրերի, հայրերի ու երեխաների սրտից ու հոգուց և այն անցնելով խրամատից խրամատ, բլինդաժից բլինդաժ, հասավ ռազմաճակատում գտնվող յուրաքանչյուր հայ ռազմիկի սրտի ու հոգու խորքը: Ստանալով ձեր նակազը, մենք երդվեցինք պատասխանել ձեր նամակին հերոսական սխրագործություններով և այսօր գեկուցում ենք ձեզ, թե ինչպես գնդապետ Նվեր Սաֆարյանի դիվիզիայի անձնակազմը, իրագործելով ձեր նակազը, կատարեց իր պարտքը հզոր խորհրդային Միության հանդեպ, Չայրենիքի հանդեպ: Մենք գեկուցում ենք ձեզ, որ ձեր պատգամները կատարված են... Սակայն մենք չենք հանգստանում ձեռք բերած մեր նվաճումներով: Մեր առջև գերմանական զավթիչների լծի տակ գտնվող դեռ շատ գյուղեր ու քաղաքներ կան: Թշնամին դեռ ուժեղ է և խարդախ: Մենք մեր առջև դնում ենք սրբազան խնդիր – գալիք ճակատամարտերում հասնել էլ ավելի մեծ հաղթանակների...»⁸¹:
Նամակը ստորագրել էին դիվիզիայի բոլոր հրամանատարական, քաղաշխատողների և սերժանտական կազմը, բոլոր մարտիկները: ՉԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի ցուցումով այն հրատարակվեց հանրապետական թերթերում, ինչպես նաև տպագրվեց առանձին գրքույկով⁸²:

Չայտնի է, որ պատերազմի տարիներին հաճելի ավանդույթ էր դարձել թիկունքից ռազմաճակատ և հակառակը

⁸⁰ ՉԳԳԱ ՊԻ ՉՄՊՊԿԿ, ֆ. 52, գ. 1, թ. 7:

⁸¹ «Կարմիր զինվոր», 21 հոկտեմբերի 1943թ.:

⁸² Տե՛ս Չայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին, Ե., 1944:

պատվիրակությունների կամ առանձին պատվիրակների ուղարկումը, որոնց հանդիպումները հանրապետության աշխատավորների հետ, որպես կանոն, վեր էին ածվում բանակի և ժողովրդի միասնության վառ տոնախմբությունների, ամրապնդում թիկունքի և ռազմաճակատի անխախտ կապը: Գրիգոր Չարությունյանն անձամբ այդ կարևոր միջոցառումների ջատագովմ էր: Չնայած անչափ զբաղվածությանը, նա այնուամենայնիվ ժամանակ էր գտնում ընդունելու հանրապետություն ժամանած պատվիրակություններին: Մեր հաշվումներով պատերազմի տարիներին ռազմաճակատից Չայաստան են ժամանել հայկական դիվիզիաների ավելի քան 15 պաշտոնական պատվիրակություններ: Չամարյա նույնքան պատվիրակություններ էլ Չայաստանից մեկնել են ռազմաճակատ: Միայն 51-րդ գվարդիական (նախկին Չայկական 76-րդ) հրաձգային դիվիզիան պատերազմի տարիներին Չայաստան ուղարկեց 6, Չայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան՝ 7, Չայկական 409-րդ հրաձգային դիվիզիան՝ 2 պատվիրակություն և այլն:

Այսպես, օրինակ, 1943թ. ապրիլի 22-ին Երևան է ժամանում 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի պատվիրակությունը՝ դիվիզիայի «Վորոշիլովեց» թերթի խմբագրի տեղակալ, ավագ լեյտենանտ Չրաչյա Քոչարի ղեկավարությամբ: Գվարդիականները լինում են Երևանի և հանրապետության մի շարք շրջանների գործարաններում, կոլտնտեսություններում, հանդիպումներ են ունենում աշխատավորության և մտավորականության լայն զանգվածների հետ: Ապրիլի 27-ին պատվիրակությանը ընդունում են ՉԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գ.Ա.Չարությունյանը և ՉԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Պ.Պապյանը⁸³: Ողջույնի խոսքով պատվիրակներին է դիմում Գրիգոր Չարությունյանը. «Չաճելի և ուրախալի է հանդիպել այն մարդկանց, որոնք բարձրացրել են ոչ միայն իրենց դիվիզիայի պատիվը, մարտիկի պատիվը, այլև իրենց ժողովրդի պատիվը, – նշել է նա: – Չերոսական շատ գործեր կատարած ձեր դիվիզիայի ուժը կայանում է նաև նրանում, որ նրա շարքերում գոյություն ունի ժողովուրդների ամրակուռ, անխախտ բարեկամությունը: Այդ

⁸³ Գ.Ա.Չարությունյան, *51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին*, Ե., 1980, էջ 72:

բարեկամության ճիշտ ըմբռնումն ու իրականացումը ոգևորող ամենաուժեղ գործոնն է թշնամու՝ ֆաշիստական ավազակների դեմ մղած մեր պայքարում, ավազակներ, որոնք փորձում են ստրկացնել ամբողջ Սովետական Միության ազատասեր ժողովուրդներին: Ըստ երևույթին ազգային ամրակուռ բարեկամության ոգին է սավառնում ձեր դիվիզիայի վրա և ձեր վերահաս հաղթանակների լավագույն երաշխիքն է: Ես կցանկանայի, որ դուք ռազմաճակատ վերադառնալով հաղորդեիք ձեր ընկերներին, որ հայ ժողովուրդը հաստատապես որոշել է մարտնչել իր ատելի թշնամու՝ գերմանաֆաշիստական հորդանների դեմ, մինչև նրանց բացարձակ, լիակատար ջախջախումը: Մեր ամբողջ բնակչությունը՝ մեծից մինչև փոքրը, համակված է նույն այդ խորունկ գիտակցությամբ, այդ աննկուն վճռականությամբ: Դա խանդավառում, ոգևորում է մեր բանվորներին, կոլտնտեսականներին և մտավորականներին: Այդ գիտակցությամբ նրանցից յուրաքանչյուրը դուրս է գալիս իր աշխատանքային ճակատը, դա ժողովրդական մեծ ոգևորությունն է և մարդկանց առաջ է մղում դեպի արտադրական քաջագործությունների՝ ռազմաճակատի, հարազատ Կարմիր բանակի կարիքները բավարարելու համար:

Հայտնեցեք ձեր ընկերներին, որ հայ ժողովուրդը պատրաստ է տանելու բոլոր դժվարությունները, բոլոր տեսակի զրկանքները, բայց թույլ չի տա, որ Կարմիր բանակը ռազմաճակատում որևէ բանի կարիք զգա: Ահա թե ինչ գաղափարներով է ղեկավարվում մեր թիկունքը: Սովետական Հայաստանի աշխատավորները, որոնք խորապես համոզված են, որ հաղթանակը մերը պիտի լինի, միաժամանակ գիտակցում են, որ հաղթանակը պիտի կռվով տանել, որ այն չի կարող ինքն իրեն գալ: Ուստի հայ ժողովուրդը սրբազան պատվեր է տալիս իր մարտիկներին, իր քաջարի զավակներին, աշխատել ամեն կերպ մոտեցնել այդ ցանկալի հաղթանակի երջանիկ ժամը՝ իսկ դրա համար անհրաժեշտ է, որ մեր զինվորները ամրապնդեն զինվորական կարգապահությունը, առանց որի դժվար է հաղթել դեռ ուժեղ ու նենգ թշնամուն: Մեր մարտիկները պիտի տիրապետեն զենքին, պետք է գերազանց յուրացնեն ռազմական հարուստ և հզոր տեխնիկան, որ տալիս է նրանց մեր ողջ երկիրը: Դա թշնամուն հաղթելու կարևորագույն պայմաններից մեկն է: Ահա

թե ինչ է պահանջում հայ ժողովուրդը իր մարտիկ զավակներից»⁸⁴։ Որպես կանոն այդ պատվիրակությունները Հայաստան էին բերում նաև իրենց միավորումների անձնակազմների զեկույց-նամակները հայ ժողովրդին, հաճախ նաև հրատապ լուծում պահանջող խնդրագրեր՝ ուղղված անձամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանին։ Այդ պահանջները միշտ էլ ստանում էին անհապաղ լուծում։ Այսպես, օրինակ, 1943թ. նոյեմբերին Հայաստան ժամանեց Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի հերթական պատվիրակությունը, որն իր հետ բերել էր դիվիզիայի հրամանատար, գնդապետ Նվեր Սաֆարյանի և քաղբաժնի պետ Գրիգոր Հակոբյանի նամակն՝ ուղղված Գրիգոր Հարությունյանին։ Նամակում նախ շնորհակալություն էր հայտնվում դիվիզիա ուղարկված Հայաստանի պատվիրակության համար, որոնք մեծ դեր կատարեցին միավորման անձնակազմի բարոյական-մարտական ոգու բարձրացման, թիկունքի հետ ռազմաճակատի սերտ կապերի ամրապնդման ուղղությամբ։ Սակայն այդ կապերն ավելի ամրապնդելու համար դիվիզիայի հրամանատարությունը խնդրում է Գրիգոր Հարությունյանին աջակցել դիվիզիայում մշտապես հանրապետական մամուլի («Սովետական Հայաստան» և «Коммунист» թերթերի) մշտական թղթակից և լուսանկարիչ ունենալու, գրելու թուղթ, տետր, փոստային ծրարներ, ծոցատետրեր, մատիտներ ձեռք բերելու հարցում։ Միաժամանակ խնդրվում էր անձնակազմի համար ձեռք բերել սափրվելու պարագաներ, թել ու ասեղներ, զինվորական վերնաշապիկի օձիքներ, կոճակներ, օճառ, արևելյան նվագախմբի գործիքներ, քաղբաժնի համար մեկ սարքին գրամեքենա, գրականություն և այլն։ Նոյեմբերի 23-ին ստանալով նամակը Գրիգոր Հարությունյանը հակիրճ մակագրել է՝ բավարարել բոլոր պահանջները⁸⁵։ Փաստերը ցույց են տալիս, որ դիվիզիայի պատվիրակությունը ռազմաճակատ վերադարձավ իր հետ տանելով ոչ միայն նամակում պահանջված բոլոր պարագաները, այլև զանազան այլ նվերներ։

Հայտնի է, որ պատերազմի տարիներին Հայաստանից ռազմաճակատ էին մեկնում նաև համերգային խմբեր, որոնք

⁸⁴ Նույն տեղում։

⁸⁵ Տե՛ս 77 ՀԶԿՊ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 403, ք. 36։

հաճախ ելույթներ էին ունենում նաև առաջավոր գծում, ոգևորում մարտիկներին: 1944թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Առաջին Մերձբալթյան ռազմաճակատում 100-ից ավելի համերգներ տվեց Հայաստանի երգի ու պարի անսամբլը՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ: Անսամբլի համերգները մեծ ընդունելություն գտան ռազմաճակատում մարտնչող ոչ միայն հայ, այլև ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի և այլ ազգության պատկանող ռազմիկների շրջանում: «Հիշում եմ երգի ու պարի անսամբլի ելույթները պատերազմի տարիներին մեր ռազմաճակատում, – իր հուշերում գրել է մարշալ Ի.Ք.Բաղդամյանը: – Դրանք անմոռանալի, հուզիչ հանդիպումներ էին: Պատկերացնում եք, չորս կողմը կռիվ է, պայթյուն, ճիշտ է, մեր զորքերը հաղթականորեն թշնամուն քշում էին մեր հողից, բայց բոլոր դեպքում ռազմաճակատը մնում է ռազմաճակատ: Ու մի պահ պատկերացրեք ռուսների ու արկերի պայթյունների ներքո հնչում է սրտառուչ ու քնքուշ հայկական երգը: Մեր հուզմունքն ու ապրումները բառերով դժվար է նկարագրել: Պետք է լինել ռազմաճակատում, որպեսզի զգալ այն ամենը, ինչ մենք էինք զգում այդ պահին: Համերգից հետո կարճատև հանդիպում ունեցանք անսամբլի հետ, միասին նկարվեցինք: Դա 1944թ. աշնանն էր»⁸⁶: Ռազմաճակատի հրամանատարությունը բարձր գնահատեց Հայկական երգի ու պարի անսամբլի ելույթները և անսամբլի 28 անդամներից 18-ին պարգևատրեց շքանշաններով ու մեդալներով⁸⁷: Անսամբլի ելույթները բարձր էին գնահատվել նաև ռազմաճակատի տարբեր միավորումների հրամանատարների կողմից: Այսպես, օրինակ, Շյաուլյայ քաղաքում (Լիտվա) տեղաբաշխված թիվ 64339 ավիացիոն զորամիավորման հրամանատար, քաղաքի զորքերի կայազորի պետ, գվարդիայի գնդապետ Վասիլի Ստալինը, իր 1944թ. հոկտեմբերի 17-ի թվակիր նամակում ուղղված ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանին, գրել է. «Կարմիր բանակի հարձակողական մարտերի պատմական օրերին ռազմաշունչ հնչեղությամբ տեղի ունեցան Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի ճակատային բրիգադի հիասքանչ համերգները, գործող բանակի

⁸⁶ Կ.Ա.Հարությունյան, *Մարշալ Բաղդամյան, Ե., 1997, էջ 120 – 121:*

⁸⁷ *Տես նույն տեղում, էջ 121:*

մեր միավորման օդաչուների համար, ոգևորելով նրանց մարտական նոր սխրանքների գերմանաֆաշիստական գազանի դեմ մղվող պայքարում: Համերգային բրիգադի լավ կազմակերպված ելույթները մեր Հայրենիքի ժողովուրդների անխախտ բարեկամության, թիկունքի և ռազմաճակատի միջև եղած սերտ կապի վառ ապացույց են: Արևավառ Հայաստանի բազմակողմանի արվեստը համընդհանուր հիացմունք առաջացրեց մեր միավորման անձնակազմի և ազատագրված Շյաուլյայ քաղաքի բնակչության մեջ, որոնք անկեղծ շնորհակալություն են հայտնում հայ ժողովրդին՝ անսամբլի բրիգադի սքանչելի համերգների համար: Շյաուլյայ քաղաքի ավիակայազորի անձնակազմի անունից Ձեզ և ողջ հայ ժողովրդին հայտնում են գվարդիական շնորհակալություն մեր բազմերկն պարզևած կուլտուր-մարտական հանգստի համար, բազեներ, որոնք վճռական մարտեր են մղում գերմանական տականքների դեմ, մեր եղբայրական ողջույնը հաղորդեք հայ ժողովրդին»: Այս հուզիչ նամակի վրա կա Գրիգոր Հարությունյանի՝ 1944թ. նոյեմբերի 1-ի մակագրությունը՝ «հրապարակել»⁸⁸:

Նման բովանդակության հեռագիր Գ.Ա.Հարությունյանի անունով ավելի վաղ ուղարկվել էր Թավրիզից՝ 15-րդ հեծյալ կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Մելնիկի կողմից: Հեռագրում շնորհակալություն էր հայտնվում Իրանում տեղաբաշխված զորամասերում Հայաստանի պետական ջազ-նվագախմբի (ղեկավար՝ Արտեմի Այվազյան) տված 30 համերգների համար, որոնք մեծ ընդունելություն էին գտել խորհրդային զինվորների շրջանում⁸⁹: Բացի այդ, Հայաստանի պետական ջազ-նվագախումբը մեծ հաջողությամբ 14 համերգ էր տվել Թեհրանում, քաղաքի բնակչության և խորհրդային դիվանագիտական ներկայացուցչության համար, արժանացել ջերմ ընդունելության: Այդ մասին մեկ այլ գրությամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին էր հայտնում Իրանում ԽՍՀՄ դեսպան Ա.Ա.Սմիռնովը, նշում, որ համերգները մեծ ոգևորություն առաջ բերեցին իրանահայության, հատկապես հայ երիտասարդության շրջանում: Յուրաքանչյուր համերգի ավարտից հետո բազմաթիվ հայ երիտասարդներ դիմում էին խորհրդային դեսպանատուն՝

⁸⁸ ՀՀ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 033, գ. 337, ք. 102:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 031, գ. 304, ք. 194:

իրենց խորհրդային Հայաստան մշտական բնակության ուղարկելու խնդրանքով⁹⁰:

Մինչև պատերազմի հաղթական ավարտը Լենինականում էր տեղաբաշխված Վրացական 349-րդ հրաձգային դիվիզիան: Պատերազմն ավարտվելուց որոշ ժամանակ անց, այն վերադարձավ Վրաստան: Դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Սիլադաձեն և քաղբաժնի պետ փոխգնդապետ Ուրուշաձեն այդ առթիվ նամակ են գրել ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին, որտեղ խորին շնորհակալություն են հայտնել երեք տարիների ընթացքում հայ ժողովրդի և անձամբ Գրիգոր Հարությունյանի կողմից դիվիզիային ցույց տված անշահախնդիր օգնության և հոգատար վերաբերմունքի համար⁹¹:

Պատերազմի տարիներին Գրիգոր Հարությունյանի գործունեության մեջ հատուկ տեղ էր գրավում երիտասարդության շրջանում տարվող աշխատանքը: ՀԼԿԵՄ Կենտկոմի 1-ին քարտուղար Գեղամ Բագրատի Ալեքյանի վկայությամբ, Գրիգոր Հարությունյանը պատերազմի տարիներին ելույթներ էր ունենում կոմերիտմիության Կենտկոմի պլենումներում, հանդիպում կոմերիտականների, սպորտսմենների, պիոներների հետ: Երբ ընտրվեցին Անդրկովկասի երիտասարդության հակաֆաշիստական միտինգի մասնակիցները՝ թվով 19 մարդ, սահմանված կարգով մինչև Կենտկոմի 1-ին քարտուղարին ներկայացնելը, պատգամավորների ցուցակին պետք է ծանոթանային Կենտկոմի գաղափարական բաժնուն: Այնտեղ հավանության չարժանացավ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր 32-ամյա Գագիկ Ստեփանի Դավթյանի (հետագայում ակադեմիկոս) թեկնածությունը, քանի որ նրա քույրը՝ նշանավոր արվեստաբան, մանկավարժ, կուսակցական աշխատող Սերիկ Դավթյանը 1937թ. բանտարկված էր որպես ժողովրդի թշնամի: Այդ առարկության մասին տեղյակ են պահում Գր.Հարությունյանին: Վերջինս գտնում է, որ եթե կոմերիտմիության Կենտկոմը պատգամավորության կազմում առաջադրել է այնպիսի մարդու, ինչպիսին Գագիկ Դավթյանն է, որը հայտնի գիտնական է և լավ անձնավորություն, ապա նա պետք է պատգամավորության հետ մեկնի Ռբիլիսի և մասնակցի Անդրկովկասի հակաֆաշիստական միտինգին: Այդպես

⁹⁰ *Տե՛ս նույն տեղում, թթ. 195 – 196:*

⁹¹ *Տե՛ս նույն տեղում, գ. 034, գ. 387, թ. 10:*

էլ եղավ. Գագիկ Ղավթյանը՝ Ալ. Սպենդիարյանի անվան պետական օպերայի և բալետի թատրոնի երգչուհի (հետագայում ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհի) Տաթևիկ Սազանդարյանի, երիտասարդ նկարիչ Էդվարդ Իսաբեկյանի (հետագայում՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ), Ալավերդու հանքերի հանքափոր Խաչիկ Շախկյանի, Իջևանի մեքենատրակտորային կայանի բրիգադավար Արաքսյա Իսկանդարյանի և մյուսների հետ մեկնեց Թբիլիսի և մասնակցեց սեպտեմբերի 28-ին Շոթա Ռուսթավելու անվան պետական դրամատիկական թատրոնի շենքում տեղի ունեցած հակաֆաշիստական միտինգին⁹²:

Գրիգոր Հարությունյանի մախաձեռնությամբ էր, որ ռազմաճակատից Երևան հրավիրվեց լեգենդար օդաչու, Խորհրդային Միության հերոս (հետագայում կրկնակի հերոս) Նելսոն Ստեփանյանը: Գ.Բ.Ալեքյանի վկայությամբ, 1943թ. փետրվարի վերջին «մի օր երեկոյան, հերթական զեկույցից հետո, ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Գ.Հարությունյանն ասաց. «Ի՞նչ եք կարծում, լավ չի՞ լինի երիտասարդության հայրենասիրական դաստիարակության նպատակով մի քանի օրով Նելսոն Ստեփանյանին հրավիրել Երևան: Նա հայրենական պատերազմի նշանավոր հայ հերոսն է և նրա փառքը, որպես գրոհային օդաչուի, տարածվել է ամբողջ երկրում»⁹³: Այդ միտքը շատ դուր եկավ բոլորին, և հաջորդ օրը Գեղամ Ալեքյանը հեռախոսով կապվեց օդաչուի հոր՝ Գևորգ Ստեփանյանի հետ, որին վաղուց ծանոթ էր: Պարզվեց, որ Նելսոնը վիրավորվել է մարտերից մեկում, գտնվում է հոսպիտալում, սակայն վիճակը վատ չէ, և հրամանատարությունը թույլատրել է նրան հետագա բուժումը շարունակել Երևանում: Մարտի 20-ին Նելսոն Ստեփանյանը եկավ Երևան: Կայարանում նրան դիմավորեցին աննկարագրելի ցնծությամբ: Երկու օր հետո՝ մարտի 22-ին հերոս օդաչուն իր առաջին ելույթն ունեցավ ՀԼԿԵՄ Կենտկոմի 8-րդ պլենումում: Այնուհետև նա բազմաթիվ հանդիպումներ ունեցավ գործարաններում, ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում, բուհերում, դպրոցներում, մայրաքաղաքին մոտ մի շարք

⁹² Տե՛ս Գ.Բ.Ալեքյան, *Հայաստանի երիտասարդությունը Սեժ Հայրենականին, Ե., 1979, էջ 32*:

⁹³ Նելսոն Ստեփանյանի կատարած սխրանքների մասին «Որսածա» թերթը հետաքրքիր հաղորդում էր տվել դեռևս 1942թ. օգոստոսի 17-ին:

շրջաններում, եղավ Լեւոնականում: Հերոսի հանդիպումները ժողովրդի հետ ամենուրեք անցնում էին խանդավառ, սրտառուչ և ջերմ մթնոլորտում, լեփ լեցուն դահլիճներում: Երբ Նելսոնը վերադարձավ ռազմաճակատ, նա այնտեղից հեռագիր ուղարկեց Գրիգոր Հարությունյանի անունով. «Թանկագին Գրիգոր Արտեմիչ, հայ ժողովրդիջերմ սերը և անձամբ Ձեր հոգատարությունը իմ նկատմամբ, ինձ պարտավորեցնում են նոր սխրանքներ կատարելու, ավելի բարձր պահելու հայ ռազմիկների պատիվը, որոնք ռուս մեծ ժողովրդի հետ միասին մարտնչում են հանուն մեր ընդհանուր գործի: Եվ Ձեզ հավաստիացնում եմ, որ այդ վստահությունը ես կարդարացնեմ մինչև վերջ, քանի դեռ բաբախում է սիրտս: Դուք դրանում կհանոզվեք մոտ ժամանակներս, հենց որ վերադառնամ իմ սիրելի Լեւոնգրադ, որը պաշտպանել եմ 16 ամիս: Ընդունեք իմ կողմից անկեղծ մարտական ողջույններ, Ձեզ ցանկանում եմ առողջություն. Նելսոն Ստեփանյան»⁹⁴: Լեզենդար օդաչուն պատվով կատարեց իր տված խոստումը և մարտերում բազմապատկեց թշնամուն հասցրած կորուստները, արժանացավ նոր պարգևների, առաջ քաշվեց 47-րդ գրոհիչ ավիագնդի հրամանատարի պաշտոնում, 1944թ. օգոստոսի 20-ին ներկայացվեց կրկնակի հերոսի կոչման: Ավադ, 1944թ. դեկտեմբերի 14-ին Լատվիայի Լիբավա (Լիեպայա) նավահանգստի մատույցներում հակառակորդի նավախմբի ոչնչացման մարտում Նելսոն Ստեփանյանը զոհվեց հերոսաբար: Քաջ հայորդու զոհվելու հանգամանքների մասին թիվ 49334 զորամասի հրամանատար մայոր Ֆոլկինը և նրա քաղգծով տեղակալ կապիտան Կաբիզովը հեռագրեցին Երևան՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գր.Հարությունյանին: Պարզվում է, որ երբ հակառակորդի կործանիչի կրակահերթից այրվեց Նելսոնի ինքնաթիռը, վերջինս պրաշյուտով փրկվելու և թշնամու ձեռքն ընկնելու անպատվաբեր հեռանկարը գերադասեց այրվող ինքնաթիռը թշնամու նավախմբի վրա ուղղելը և հերոսաբար զոհվելը⁹⁵: Գր.Հարությունյանը խորը կսկիծով ընդունեց հայ ժողովրդի քաջարի զավակի մահվան բոթը և ցավակցություն հայտնեց նրա հարազատներին: Այդ մասին հանրապետական

⁹⁴ ՀՀ ԼՊՊԿԱ, ֆ. 236, ց. 1, գ. 7, թ. 32:

⁹⁵ Տե՛ս ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 034, գ. 386, թ. 97:

թերթերը տպագրեցին համապատասխան հաղորդագրություններ: 1945թ. մարտի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Նելսոն Ստեփանյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում: Գոյություն ունեցող կարգի համաձայն, հերոսի կիսանդրին կանգնեցվեց նրա ծննդավայրում՝ Շուշի քաղաքում: Նելսոնի հայրը ցանկացավ, որ որդու կիսանդրին կանգնեցվի նաև Երևանում, որտեղ նա ընտանիքով ապրում էր 1915 թվականից, սովորել և ավարտել էր մայրաքաղաքի Մաքսիմ Գորկու անվան յոթնամյա դպրոցը, պիոներ պալատում հաճախել ավիանոդելիստների և սպորտային խմբեր: Այս հարցում դարձյալ կարևոր դեր խաղաց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղարի միջնորդությունը՝ Մոսկվա-Կրեմլ: Առաջ անցնելով նշենք, որ Խորհրդային Միության կրկնակի հերոս, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանի բրոնզաձույլ հուշարձանի բացման արարողությունը կայացավ 1950թ. նոյեմբերի 8-ին՝ մայրաքաղաքի կենտրոնական մանկական զբոսայգում⁹⁶: Երևանի թիվ 40 մանկապարտեզը, որտեղ նախադպրոցական տարիներն անց էր կացրել Նելսոնը, դեռևս 1943թ. մարտին կոչվել էր հերոսի անունով: Մանկապարտեզն իր խնամքի-տակ վերցրեց Նելսոնի 3 տարեկան տղային՝ Վիլիկին: Հարկ է նշել, որ հանրապետության կառավարությունը՝ Գրիգոր Հարությունյանի նախածննդությամբ, պատերազմի տարիներին ակտիվ աշխատանքներ ծավալեց պատերազմի մասնակիցների և ծնողազուրկ, անօթևան երեխաներին օգնություն կազմակերպելու համար: Կառավարության կողմից հատկացվող միջոցներից բացի, երեխաների օգնության ֆոնդին գումարներ էին տրամադրում արդյունաբերական ձեռնարկությունները, կոլխոզ-սովխոզները, տնտեսական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունները, առանձին քաղաքացիներ: Բարոյականության, մարդասիրության լավագույն օրինակ է այն փաստը, որ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանը իր աշխատած տարիներին (1937թ. հոկտեմբեր – 1953թ. նոյեմբեր) գրած հոդվածներից, տպագրված ճառերից ու զեկուցումներից ստացած հոնորարներն ամբողջությամբ տրամադրել է սկզբում մանկատներին, օթևան չունեցողներին, իսկ 1941թ. հունիսի

⁹⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 9 նոյեմբերի 1950:

22-ից հետո Հայրենական մեծ պատերազմում զոհվածների երեխաներին օգնելու ֆոնդին⁹⁷:

Կարելի է բերել մեծ շատ օրինակներ, որոնք բացահայտում են պատերազմի տարիներին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի՝ ռազմաճակատում մարտնչող ինչպես հայկական զորամիավորումների, այնպես էլ Հայաստանի տարածքում տեղավորված զորամասերի ու ամրացված շրջանների անձնակազմերի հետ ունեցած սերտ կապի վերաբերյալ: Չնայած աշխատանքային ծանրաբեռնվածությանը, նա երբեք աչքաթող չէր անում ռազմաճակատից ստացված նամակները, գրությունները, հեռագրերը և այլն:

դ) Ի.Վ.ՍՏԱԼԻՆԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԴԻՍՈՒՄՆԵՐ, ՆԱՍԱԿՆԵՐ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գրիգոր Հարությունյան–կուսակցական–պետական–ազգային գործչի կերպարն ավելի ցայտուն է երևում, երբ ծանոթանում ենք Ի.Վ.Ստալինին ուղարկած նրա դիմումների, նամակների և պաշտոնական գրությունների հետ: Նա չէր երկյուղում այն տարիներին արգելված թեմաներով առաջնորդի ուշադրությունը գրավելու, Ստալինի միջոցով հայ ժողովրդի համար կարևոր, ճակատագրական հարցեր լուծելու նպատակով համարձակ դիմումներ ուղարկելուց: Այդ դիմումներից մի քանիսը դրական ընթացք են ստացել:

Այսպես, օրինակ, պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1945թ. մայիսի վերջերին, Բեռլինից մի քանի կիլոմետր արևմուտք տեղակայված Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան, երբ հաղթողի իրավունքով, կազմ ու պատրաստ, իր ամբողջ սպառազինությամբ և ձեռք բերած հարուստ ավարով սրտատրոփ պատրաստվում էր Հայաստան վերադառնալու, ստացվեց Գլխավոր շտաբի չարագույժ հրամանը՝

⁹⁷ Տե՛ս Գ.Բ.Ալեքյան, «Անձնվեր հայրենասերն ու քաղաքացին» հոդվածը՝ «Գրիգոր Հարությունյան, կյանքը և գործունեությունը» գրքում, Ե., 2000, էջ 254 – 255:

Բեռլին հասած միակ ազգային զորամիավորումը կազմացրելու մասին: Բնական է, որ այդ անարդարացի հրամանը մեծ վրդովմունք առաջ բերեց ինչպես դիվիզիայի հրամանատարության, այնպես էլ նրա ողջ անձնակազմի շրջանում: Հիշեցնենք, թե ինչ փառապանծ մարտական ուղի էր անցել հայկական դիվիզիայի անձնակազմը Կովկասի նախալեռներից հասնելով Թաման, այնուհետև Կերչ ու Սևաստոպոլ, Լեհաստան-Գերմանիա, ամենաակտիվ մասնակցությունն ունեցել Բեռլինի գրավմանը և հայկական զուռնայի հաղթական հնչյունների տակ քոչարի պարել պարտված ռայխստագի ավերված շենքի բակում: Այդ մարտական ուղին հաշվվում էր 7250 կմ, որից 3640 կմ-ը՝ համառ մարտերով: Դիվիզիայի զորամասերը ֆաշիստական զավթիչներից ազատագրել էին ավելի քան 900 բնակավայր, 30 քաղաք, աչքի ընկել իրենց անձնակազմերի խիզախությամբ: Մարտական գործողությունների ընթացքում կատարած քաջագործությունների համար դիվիզիայի անձնակազմի ավելի քան 12.000 մարտիկներ ու սպաներ պարգևատրվել էին շքանշաններով ու մեդալներով: Նրանցից 9-ը արժանացել էին Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձել Փառքի շքանշանի բուրբ երեք աստիճանների լրիվ ասպետ: Թամանի թերակղզին գերմանաֆաշիստական զավթիչներից մաքրելու մարտական գործողությանն ամենաակտիվ մասնակցություն ունենալու համար Գերագույն Գլխավոր հրամանատարի՝ 1943թ. հոկտեմբերի 9-ի հրամանով դիվիզիան արժանացել էր «Թամանյան» պատվավոր անվանման: Կերչ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում հրամանատարության առաջադրանքներն օրինակելի կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած արիության ու քաջության համար դիվիզիան 1944թ. ապրիլի 24-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել էր Կարմիր աստղի շքանշանով: Սևաստոպոլի ազատագրման համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1944թ. մայիսի 24-ի հրամանագրով պարգևատրվել էր Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերը՝ Գերագույն գլխավոր հրամանատարի նույն օրվա հրամանով արժանացել էին «Սևաստոպոլյան» պատվավոր անվանմանը: Այնուհետև Բեռլինի գրավման մարտերի ժամանակ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու և ցուցաբերած սխրանքների համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն

խորհրդի նախագահության՝ 1945թ. մայիսի 28-ի հրամանագրով պարզևատրվել էր Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով:

Չարագույժ հրամանը ստանալուց հետո դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանն անմիջապես դիմեց Առաջին Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Թեոդորոսի Գալաշևին, խնդրելով նրան օգնել հրամանը փոխելու հարցում: Քաղվարչության պետը դիմեց ռազմաճակատի հրամանատարությանը՝ հաշվի առնել ազգային դիվիզիայի առանձնահատկությունը և չցրել այն: Գալաշևը Նվեր Սաֆարյանին խորհուրդ տվեց այդ հարցով անմիջապես դիմել Չայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Չարությունյանին: Դիվիզիայի հրամանատարությունը կատարեց հայազգի զորավարի խորհուրդը և հունիսի 2-ին հեռագրեց Երևան՝ ՉԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին:

Պատասխանը չուշացավ: 1945թ. հունիսի 4-ին Գ.Ա.Չարությունյանը հետևյալ բովանդակությամբ հեռագիր ուղարկեց դիվիզիայի հրամանատարությանը. «Չայաստանի կոմկուսի Կենտկոմը ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատի առջև հանդես է եկել Ձեր դիվիզիան պահպանելու և այն Չայաստանում վերատեղաբաշխելու միջնորդությամբ»⁹⁸:

Չայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի միջնորդությունը դիվիզիան չցրելու և այն Չայաստանում վերատեղաբաշխելու վերաբերյալ դրական լուծում ստացավ Ի.Վ.Ստալինի⁹⁹ կողմից: Այդ լուրը ցնծությամբ ընդունվեց հայկական դիվիզիայի կողմից: 1945թ. օգոստոսի 8-ից Չայկական թամանյան փառապանծ դիվիզիայի զորամասերը, ամբողջ սպառազինությամբ և հարուստ ավարով, երկներ երկաթուղային կայարանից (Բեռլինից 8կմ հարավ-արևելք) սկսում են փոխադրվել Չայաստան և տեղաբաշխվել Երևանում, Քանաքեռում և Էջմիածնում: Չայ ժողովուրդը ցնծությամբ է դիմավորում իր հերոսներին: Երևանի երկաթուղային կայարանում դիվիզիայի անձնակազմին դիմավորողների մեջ էին նաև Չայաստանի

⁹⁸ ՀՀ ՉԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 34, գ. 385, թ. 169:

⁹⁹ Մինչև 1947թ. Ի.Վ.Ստալինը միաժամանակ հանդիսանում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարար:

կոմկուսի Կենտկոմի և կառավարության անդամները՝ Գրիգոր Չարությունյանի զխավորությամբ:

Չարկ է նշել, որ Գրիգոր Չարությունյանը մեկ անգամ չէ, որ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցերով համարձակորեն դիմել է Ի.Վ.Ստալինին և համոզիչ փաստերով նրա ուշադրությունը գրավել այդ հիմնահարցերի վրա: Դրանց թվում էին թուրքերի կողմից զավթված Արևմտահայաստանի և Արևելահայաստանի որոշ մարզեր Չայաստանին միացնելու, Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին վերադարձնելու, ինչպես նաև արտասահմանում սփռված բազմահազար հայերի հայրենադարձության հարցերը:

Այսպես, օրինակ, 1944թ. սեպտեմբերի 16-ին Չամկ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ի.Վ.Ստալինին ուղարկած գրության մեջ Գրիգոր Չարությունյանը նշում է, որ պատերազմի տարիներին արտասահմանում ապրող հայերը ստեղծել են մի շարք առաջադեմ կազմակերպություններ ու միություններ՝ մայր հայրենիքին օժանդակելու ֆաշիզմի դեմ մղվող պայքարում: Այդպիսի կազմակերպություններից էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրող հայերի «Չայկական առաջադիմական լիգան» և «Ամերիկահայերի ազգային խորհուրդը», Սիրիայում, Լիբանանում և Իրանում ապրող հայերի կազմակերպած Խորհրդային Միության բարեկամների միությունները, որոնք հետևողական քաղաքականություն են վարում ԽՍՀՄ հանդեպ: Այդ առաջադեմ կազմակերպությունները դիմում էին Չայաստանի տարբեր կազմակերպություններին ու անձանց՝ Խորհրդային Չայաստանի առօրյա կյանքին ու ձեռք բերած հաջողությունների մասին փաստեր ուղարկելու խնդրանքով, որպեսզի դրանք տպագրեն արտասահմանում: Պատերազմի տարիներին այդ կազմակերպությունների հասցեներով հանրապետության մի շարք գիտական հիմնարկներ, թերթերի ու հանդեսների խմբագրություններ, անվանի գրողներ, արվեստի ու մշակույթի երևելի գործիչներ ուղարկել են բազմաթիվ նյութեր, Չայաստանում տպագրվել են սփյուռքահայ անվանի գրողների ստեղծագործություններ, որոնք դրական դեր են խաղացել արտասահմանում բնակվող հայերի՝ մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման գործում. «Որպեսզի արտասահմանյան հայերի հետ մշակութային կապերին տրվի կազմակերպված և նպատակային բնույթ, – նշված

է Ի.Վ.Ստալինին ուղղված գրության մեջ, – Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն նպատակահարմար է գտնում խնդրել ՀամԿ(Բ)Կ Կենտկոմին թուլլատրելու Հայաստանում կազմակերպել Արտասահմանի հետ կուլտուրական կապերի հայկական ընկերություն»¹⁰⁰: Ի.Վ.Ստալինը տվեց իր համաձայնությունը: Նույն թվականի սեպտեմբերին Հայաստանում կազմակերպվեց «Արտասահմանի հետ կուլտուրական կապերի հայկական ընկերություն», որը 1957թ. վերանվանվեց «Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապերի հայկական ընկերություն»¹⁰¹: Նույն ձևով 1945թ. դեկտեմբերին Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին կից ստեղծվեց «Ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե», որը մեծ դեր խաղաց ավելի քան 100.000 հայերի հայրենադարձության գործում¹⁰²: Ուշագրավ է, որ Գրիգոր Հարությունյանը, որն իր մաշկի վրա մոտիկից զգացել էր չարագուշակ 1937 թվականի բռնաճնշումները (հիշենք, որ այդ ժամանակ Բերիայի սաղրանքներին զոհ էին գնացել նրա մերձավոր ընկեր և կնոջ եղբայր Արտաշես Գեուրկովը (Գևորգյան), որը հանդիսանում էր Վրաստանի ժողկոմխորհի նախագահի տեղակալը, հարազատ եղբայր Սերգո Արուֆնովը և շատ ուրիշներ), առանց երկյուղելու Ստալինի առջև առաջինը բարձրացրեց թուրքիայի կողմից զավթած հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու և հայրենադարձության հարցերը, որոնք հայ ժողովրդի համար ունեին ճակատագրական նշանակություն: Այսօր քչերին է հայտնի, որ 1945թ. մարտին կենտրոնական մամուլում հրապարակվել էր ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության ինֆորմացիոն հաղորդագրությունը 1925թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի չեղյալ հայտարարելու մասին: Ի.Վ.Ստալինին 1945թ. հուլիսի 6-ին ուղարկած իր մամակում Գ.Ա.Հարությունյանը հայտնում է, որ վերոհիշյալ պայմանագրի չեղյալ համարելը հանրապետության բնակչության շրջանում խոսակցությունների առիթ է տվել այն մասին, որ խորհրդային կառավարությունը դրանով իսկ մտադրություն ունի

¹⁰⁰ Տե՛ս ՀՀ ՀԵԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 41, ք. 460:

¹⁰¹ Տե՛ս ՀՀ ՆՊԿԱ, ֆ. 709, պատմական տեղեկանք, ք. 1:

¹⁰² Տե՛ս ՀՀ ՆՊԿԱ, ֆ. 362, պատմական տեղեկանք, ք. 1:

Հայաստանին վերադարձնել Թուրքիային անցած հայկական տարածքները: Հայ ժողովրդի լայն զանգվածները, ինչպես նաև արտասահմանում ապրող հայերի մեծամասնությունը, հավատացած էր, որ ինչպես լուծվեց ուկրաինական, բելոռուսական և այլ ժողովուրդների վերամիավորման հարցը, այնպես էլ խորհրդային կառավարությունը կլուծի հայկական հողերի խորհրդային Հայաստանին միացնելու և աշխարհի տարբեր երկրներից հայերին այնտեղ վերաբնակեցնելու խնդիրը: Գրիգոր Հարությունյանը Ստալինին հանգամանորեն պարզաբանում է ինչպես խորհրդային Հայաստանի, այնպես էլ արտասահմանի հայության արդարացի պահանջները՝ 1914թ. ռուս-թուրքական սահմանի վերականգնման հարցում: Այդ հարցը բարձրացվեց նաև Հայ եկեղեցական ժողովի պատվիրակների կողմից՝ ՀԽՍՀ ժողկոմխորհում տեղի ունեցած ընդունելության ժամանակ: Նրանք խնդրեցին Հայաստանի կառավարությունից կազմակերպել արտասահմանյան հայերի հայրենադարձության հարցը, հույս հայտնեցին, որ խորհրդային կառավարությունը կլուծի նաև հայկական հողերի տարածքային միավորման խնդիրը: Եթե խորհրդային Հայաստանի կառավարությունը հանձն առավ մասնակիորեն լուծել հայրենադարձության հարցը, ապա տարածքային հարցերի լուծումը հանդիսանում է միութենական կառավարության խնդիրը, որի համար էլ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարը այս մասին հարկ է համարում տեղյակ պահել Ի.Վ.Ստալինին¹⁰³: Մեկ այլ գրությամբ Գրիգոր Հարությունյանը Ի.Վ.Ստալինին դիմում է Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանին միացնելու պահանջով, համոզիչ փաստեր ներկայացնում հօգուտ այդ հարցի: Ստորև բերում ենք այդ դիմումի ամբողջական տեքստը. «Իոսիֆ Վիսարիոնովիչ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, որը սահմանակից է Հայաստանին, 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմը: Այդ մարզի բնակիչները հիմնականում հայեր են: 153.000 բնակչությունից 137.000-ը հանդիսանում են հայեր: Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը համանման է Հայաստանի լեռնային շրջանների գյուղատնտեսությանը: Լեռնային Ղարաբաղի մուտքը Հայաստանի կազմի մեջ շատ բանով կնպաստի նրա

¹⁰³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թթ. 40 – 43:

զարգացմանը և կբարելավվի տնտեսության ղեկավարումը: Մայրենի լեզվով բնակչության կուլտուր-մասսայական և քաղաքական սպասարկումը կուժեղանա, եթե այն ղեկավարվի Հայաստանի հանրապետական մարմինների կողմից: Լեռնային Ղարաբաղի մարզը Հայաստանին միացնելը հնարավորություն կտա տեղական կադրերին իրենց մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանալ Հայաստանի բուհերում: Բացի այդ, Հայկական ԽՍՀ-ն կարող է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից ստանալ ազգային կադրեր, որոնք աչքի են ընկնում իրենց գործունակությամբ և նրանք ներկայումս բնականորեն չեն կարող լիովին օգտագործվել Ադրբեջանում:

Ելնելով դրանից և Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունից, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմխորհը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ-ի մեջ որպես ղարաբաղյան մարզ մտցնելու հարցը: Դրական լուծում ստանալուց հետո Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմխորհը միութենական կառավարության առջև հարց կբարձրացնեն վերականգնել Ղարաբաղի նախկին կենտրոն Շուշին, որն ավերվել էր մինչև խորհրդային կարգերը:

Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր.Հարությունով, 1 նոյեմբերի 1945թ.»¹⁰⁴:

Մի քանի օր անց՝ 1945թ. նոյեմբերի 9-ին Գրիգոր Հարությունյանը արտասահմանում ապրող հայերի՝ խորհրդային Հայաստան հայրենադարձելու հարցով դիմում է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Գ.Մ.Մալենկովին, որտեղ ասված է. «Գեորգի Մաքսիմիլյանովիչ: Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության համար Հայաստանում անցկացված եկեղեցական համաժողովի ժամանակ մասնակիցները հարց բարձրացրեցին արտասահմանում ապրող հայերին հայրենիք՝ խորհրդային Հայաստան վերադառնալու թույլտվություն ստանալու վերաբերյալ: Այդպիսի դիմումներ տարբեր ժամանակների ընթացքում ստացվել են ԽՍՀՄ-ում՝ Ֆրանսիայի, Իրանի, Ռումինիայի, Բուլղարիայի և արտասահմանյան այլ երկրների

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 74:

դեսպանատների առաքելությունների միջոցով:

Ներկայումս Խորհրդային Միության սահմաններից դուրս ապրում է շուրջ 1 միլիոն հայ: Ամենախոշոր հայկական գաղութներում՝ Սիրիայում և Լիբանանում ապրում են 200.000, Իրանում՝ 120.000, Ֆրանսիայում՝ 80.000, ԱՄՆ-ում՝ 150.000, Ռումինիայում՝ 30.000, Բուլղարիայում՝ 35.000, Հունաստանում՝ 25.000; Եգիպտոսում՝ 40.000 հայեր և այլն:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմխորհը հնարավոր են համարում ընդունել արտասահմանյան հայերին և տեղավորել նրանց գոյություն ունեցող ձեռնարկություններում, սովխոզներում և տեխնիկական կուլտուրայի շրջաններում, որտեղ բանվորական ուժի կարիք է զգացվում:

Արտասահմանյան հայերի՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու բոլոր դիմումներին չենք կարող դրական պատասխան տալ, միութենական կառավարության համաձայնության բացակայության պատճառով:

Խորհրդային Հայաստանի 25-ամյակի առթիվ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմխորհը անհրաժեշտ են համարում ընդունել համապատասխան որոշում՝ հրապարակելով այն մամուլում:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշման նախագիծը կցում ենք:

Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր.Հարությունով»¹⁰⁵:

Ինչպես արդեն նշեցինք, հայրենադարձության հարցը լուծվեց դրականորեն, իսկ տարածքային հարցերը մնացին չլուծված:

Գրիգոր Հարությունյանի կողմից Ի.Վ.Ստալինին ուղղված դիմումներից կարելի է հիշատակել 1944թ. սեպտեմբերի 6-ի գրությունը, որով խնդրվում էր իրավունք տալ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից կատարել «Կովկասի պաշտպանության համար» մեղալով պարզատրումներ¹⁰⁶: Բանը նրանում էր, որ երբ 1944թ. մայիսի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հիմնադրել էր վերոհիշյալ մեղալը, դրանով պարզատրելու իրավունք էր տրված միայն Վրաստանին

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, ք. 75:

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 033, գ. 41, քք. 423 – 424:

ու Ադրբեջանին: Գ.Ա.Յարությունյանի դիմումը ստանալուց հետո Ստալինի ցուցումով Յայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը ևս իրավունք ստացավ կատարել «Կովկասի պաշտպանության համար» մեղալով պարգևատրում: Ավելի ուշ Յայաստանի Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք տրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից կատարել պարգևատրում նաև «1941 – 1945թթ. Յայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեղալով: Յանրապետության թիկունքի աշխատավորներից ավելի քան 361.000 մարդ պարգևատրվեց վերոհիշյալ երկու մեղալներով¹⁰⁷:

Գրիգոր Յարությունյանի կողմից Ստալինին ուղարկված գրություններից հիշատակենք ևս մեկը: Դա 1945թ. ապրիլի 6-ին Մոսկվա-Կրեմլ՝ Ի.Վ.Ստալինին ուղարկած գրությունն է, որը վերաբերում էր հայ անվանի գրողներ Ավետիք Իսահակյանի և Դերենիկ Դեմիրճյանի պարգևատրմանը. «Իոսիֆ Վիսարիոնովիչ, – գրել է Գ.Ա.Յարությունյանը, – ընթացիկ տարում լրանում է հայ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 70 և դրամատուրգ-գրող Դերենիկ Դեմիրճյանի գրական-ստեղծագործական գործունեության 50-ամյակը: Ա.Իսահակյանը և Դ.Դեմիրճյանը մեծ ծառայություններ ունեն հայ գրականության և դրամատուրգիայի զարգացման բնագավառում:

Յայրենական մեծ պատերազմի տարիներին նրանք իրենց ստեղծագործություններով, ինչպես նաև խորհրդային ու արտասահմանյան հայկական մանուլի էջերում տպագրած հոդվածներով ակտիվ մասնակցություն են ունեցել հասարակական-քաղաքական կյանքին, կոչ արել հայերին պաշտպանել խորհրդային Միությանը: Յայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը խնդրում է.

1. Ծննդյան 70-ամյակի առթիվ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի բացառիկ ծառայությունը հայ գրականության զարգացման բնագավառում նշել նրան Լենինի շքանշանով պարգևատրելով:

2. Դրամատուրգ-գրող Դերենիկ Կարապետի Դեմիրճյանի գրական-ստեղծագործական գործունեության 50-ամյակը լրանալու առթիվ նրա բացառիկ վաստակը նշել Աշխատանքային կարմիր դրոշով պարգևատրելով. նախկինում նա պարգևատրվել

¹⁰⁷ Տե՛ս Յայ ժողովրդի պատմություն, հ. 8, էջ 146:

եր Լենինի շքանշանով»¹⁰⁸:

Ի.Վ.Ստալինը հարգեց ՅԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Յարությունյանի միջնորդությունը. Ավետիք Իսահակյանը պարգևատրվեց Լենինի, իսկ Դերենիկ Դեմիրճյանը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով¹⁰⁹:

3. ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրվանից Հայաստանի կոմկուսի Կենտկոմը՝ Գ.Ա.Յարությունյանի ղեկավարությամբ, հսկայական աշխատանք կատարեց հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու, ռազմաճակատի կարիքների համար զենքի ու զինամթերքի թողարկումը յուրացնելու, գործող բանակի համար տաք հագուստ արտադրելու ու հավաքելու ուղղությամբ: Շնորհիվ ձեռնարկված համապատասխան օպերատիվ միջոցառումների, կարճ ժամանակամիջոցում լուծվեց ռազմաճակատ մեկնած բանվորների ու գյուղական աշխատավորների փոխարինման հարցը՝ կանանց, մեծահասակների, հաշմանդամների, Հայաստան էվակուացվածների, ուսանողների և նույնիսկ դպրոցականների հաշվին: Շնորհիվ նրանց հերոսական աշխատանքի, հանրապետությունը վերածվեց ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքակազմեր էին մեկնում գործող բանակի համար տանելով զենք, զինամթերք, հանդերձանք, սնունդ, մարդկային համալրումներ և այլն:

Այժմ համառոտակի ցույց տանք, թե ինչ կոնկրետ գործ

¹⁰⁸ ԴԴ ԴԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 11 (Դ.Դեմիրճյանը Լենինի շքանշանով էր պարգևատրվել 1939թ.):

¹⁰⁹ Գրական տեղեկատու, Ե., 1986, էջ 152, 209:

կատարեց Գ.Ա.Հարությունյանը հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների աշխատանքը ռազմական ռելսերի վրա փոխադրելու, և ի՞նչ արդյունքի հասան Հայաստանի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը պատերազմի տարիներին:

ա) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի հենց առաջին իսկ օրվանից Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հանրապետության կուսակցական կազմակերպությունների ռազմատնտեսական գործունեությունն առաջին հերթին նպատակաուղղեց արդյունաբերության բնագավառում գործող բոլոր ձեռնարկությունների աշխատանքը պատերազմական պայմանների համապատասխան վերակառուցելու, որպեսզի նրանք կարողանային ռազմաճակատի օր օրի աճող կարիքների համար արտադրել զենք, զինամթերք, հանդերձանք և անհրաժեշտ այլ արտադրանք: Այս հիմնահարցը հրատապ էր նաև նրանով, որ պատերազմի առաջին շրջանում հակառակորդը զավթել էր ԽՍՀՄ զգալի տարածքներ (Ուկրաինա, Բելոռուսիա, Մոլդովա, Մերձբալթյան հանրապետություններ, Ռուսաստանի արևմտյան, կենտրոնական և հարավային մարզեր), որտեղ մինչև պատերազմը բնակվում էր երկրի բնակչության 40 %-ը, արտադրվում էր ածխի 63, չուգունի 71, պողպատի 57, ալյումինի 60 տոկոսը և այլն¹¹⁰: Ուստի այդ բացը պետք է լրացվեր այն հանրապետությունների հաշվին, որոնք գտնվում էին պատերազմական գործողությունների գոտուց դուրս: Հետևաբար այդ հանրապետությունների, այդ թվում և Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական մարմինների առջև լուրջ պետական խնդիր էր դրվում, որի լուծումը պահանջում էր կարճ ժամանակամիջոցում մոբիլիզացնել ձեռքի տակ եղած բոլոր միջոցները և ամեն գնով կատարել ռազմաճակատի պահանջները: Հայաստանում ռազմական արտադրանք առաջինը սկսեցին թողարկել Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական և արհեստական կաուչուկի գործարանները, Ձեթ-օճառի

¹¹⁰ История Коммунистической партии Советского Союза, т. 5, кн. 1, М., 1970, с. 288.

կոմբինատը, մի շարք այլ ձեռնարկություններ: Պատերազմի առաջին ամիսներին ամբողջությամբ պաշտպանական արտադրանք սկսեցին թողարկել նաև քիմիական արդյունաբերության մնացած բոլոր ձեռնարկությունները, պղնձածուլական և փայտամշակման կոմբինատները, տեքստիլ, կարի և կաշվի ֆաբրիկաները, մեխանիկական գործարանը և այլն: Պատերազմի պայմաններում անչափ մեծացավ տրանսպորտի աշխատողների դերը, որոնք առաջինների թվում վերակառուցեցին իրենց աշխատանքները՝ ռազմաճակատի պահանջներին համապատասխան: Տրանսպորտայինների առաջին գծում էին երևանի և Լենինականի երկաթուղայինները:

Հանրապետության արդյունաբերության վերակառուցման բոլոր հանգուցային հարցերը մշտապես գտնվում էին Գրիգոր Հարությունյանի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Նրա ղեկավարությամբ գումարվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի բազմաթիվ նիստեր, որոնք հիմնականում նվիրված էին արդյունաբերությունը շտապ ռազմական ռելսերի վրա փոխադրելու հիմնահարցին: Այդ հիմնահարցին էր նվիրված պատերազմական պայմաններում առաջին անգամ հրավիրված ՀԿ(բ)Կ Կենտկոմի 8-րդ պլենումը, որը տեղի ունեցավ 1941թ. հոկտեմբերին: Ելույթ ունենալով պլենումում, Գր.Հարությունյանը պահանջեց կուսակցական կազմակերպություններից ամենակարճ ժամկետում ավարտել բոլոր խորհրդային ու տնտեսական մարմինների գործունեության վերակառուցումը պատերազմական պայմաններին համապատասխան, անշեղորեն բարձրացնել տնտեսական ղեկավարների դերն ու պատասխանատվությունը ռազմական պատվերների բոլոր պետական առաջադրանքների կատարման գործում¹¹¹:

Պլենումը հատուկ որոշում ընդունեց «Տեղական արդյունաբերության արտադրանքի վիճակի և արտադրական նոր ֆոնդեր ստեղծելու մասին»¹¹²: Որոշմամբ պարտավորեցվում էր բոլոր քաղկոմներին, շրջկոմներին, տեղական, տեքստիլ, սննդի և մսի-կաթի արդյունաբերության նախարարություններին, տեղական արդյունաբերության բոլոր ձեռնարկությունների աշխատանքը վերակառուցել պատերազմական պայմաններին

¹¹¹ Տե՛ս ԳԳ ԴՔԿԾ ՊԿԱ, ֆ. 1, ց. 30, գ. 17, թ. 8:

¹¹² Տե՛ս Նույն տեղում, թ. 13:

համապատասխան, այնպես, որ ապահովվի ռազմական պատվերների կատարումը պահանջվող ժամկետներին: Այդ նպատակով պետք է լայնորեն օգտագործել տեղական բոլոր հումքային միջոցները՝ Կարմիր բանակի կարիքները հոգալու համար անհրաժեշտ ապրանքներ արտադրելու¹¹³:

1941թ. նոյեմբերի երկրորդ կեսին տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 9-րդ պլենումը, որտեղ զեկուցումով հանդես եկավ Գ.Ա.Հարությունյանը¹¹⁴: Նա հանգամանորեն վերլուծեց պատերազմի առաջին 5 ամիսների ընթացքում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու գործընթացը, ցույց տվեց այն գործնական միջոցները, որոնք անհրաժեշտ էին հետագայում էլ ավելի բարձրացնելու ռազմաճակատին ցույց տրվող համա-ժողովրդական օգնությունը: Առաջին քարտուղարի զեկուցումից հստակ երևում էր, որ հանրապետությունում ժողովրդական տնտեսության վերակառուցումն ընթացել է բարձր տեմպերով, և ամսեամիս ավելի են մեծացել ռազմական պատվերների ընդհանուր ծավալները համախառն արտադրանքի մեջ: Այսպես, օրինակ, ռազմական պատվերների տեսակարար կշիռը թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում եթե 1941թ. հուլիսին կազմել է 8 տոկոս, ապա՝ օգոստոսին՝ 12, սեպտեմբերին՝ 28, հոկտեմբերին՝ 32, նոյեմբերին՝ 53 տոկոս: Տեքստիլ արդյունաբերության մեջ ռազմական պատվերների ծավալը հուլիսին կազմել է 12, իսկ նոյեմբերին՝ 28 տոկոս: Տեղական արդյունաբերության մեջ այն կազմել է՝ հուլիսին 0,5, իսկ նոյեմբերին՝ 40 տոկոս, անտառարդյունաբերության բնագավառում՝ հուլիսին 25, իսկ նոյեմբերին՝ 88 տոկոս, տնայնագործական կոոպերացիայի համակարգում՝ հուլիսին՝ 0,8, իսկ նոյեմբերին՝ 38 տոկոս և այլն: Ձեկուցումից երևաց, որ նոյեմբերին հանրապետության արդյունաբերական այնպիսի ձեռնարկություններում, ինչպիսիք են Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանը, Լենինականի տեքստիլ կոմբինատը, Ալավերդու պղնձաձուլական կոմբինատը, Երևանի 1-ին և 3-րդ կարի ֆաբրիկաները, կաշվի գործարանը,

¹¹³ Տես նույն տեղում:

¹¹⁴ Տես նույն տեղում, գ. 30, թթ. 17 – 19:

Կիրովականի, Լեոնիդականի մի շարք գործարաններ ու փայտամշակման կոմբինատներ արդեն ամբողջովին կան 80 տոկոսով անցել են ռազմական պատվերների կատարմանը: Պլենումը մեծ ուշադրություն դարձրեց պղնձի և քիմիական արդյունաբերության հետագա զարգացմանը, որոնց դերը անչափ կարևոր էր ռազմավարական այնպիսի արտադրանքների թողարկման գործում, ինչպիսիք էին պղինձը, կաուչուկը, կարբիդը և այլն: Որոշվեց կարճ ժամանակամիջոցում հանրապետության բոլոր փոքր և մեծ ձեռնարկություններն ամբողջությամբ փոխադրել ռազմական պատվերների կատարման: Մեքենաշինական և մեխանիկական գործարանները կարճ ժամանակամիջոցում պետք է ձեռնամուխ լինեն Անդրկովկասյան ռազմաճակատի խորհրդի պատվերների՝ զենքի, զինամթերքի և նրանց առանձին տարրերի արտադրությանը: Թեթև, տեքստիլ արդյունաբերությունների, ինչպես նաև արտադրական կոոպերացիայի բոլոր ձեռնարկությունները փոխադրել զինվորական իշխանությունների առաջադրանքով համազգեստի, հանդերձանքի և ուսապարկերի և այլ պատվերների կատարմանը: Սննդարդյունաբերության և մսի, կաթի արտադրության ժողկոմատների ձեռնարկությունները ամբողջությամբ փոխադրել Կարմիր բանակի համար սննդամթերքի անխափան արտադրության և այլն: Գ.Չարությունյանը պլենումի մասնակիցներին պատվիրեց յուրաքանչյուր բանվորի, ինժեների և տեխնիկի գիտակցությանը հասցնել այն կարևոր գաղափարը, որ նրանց թողարկած ռազմավարական արտադրանքը օրեցօր էլ ավելի է բարձրացնելու Կարմիր բանակի մարտական հզորությունը, մոտեցնելու հաղթանակի ժամը: Նա երկաթուղային տրանսպորտի և հաղորդակցության ճանապարհների աշխատողներին կոչ արեց արմատապես բարելավել իրենց աշխատանքը, ապահովել ռազմական փոխադրումների անխափան գործընթացը, վերացնել խաղաղ ժամանակներին յուրահատուկ խոտանն ու պարապուրդները, հասնել այն բանին, որ ժամանակին կատարվեն վագոնների բարձման կամ բեռնաթափման աշխատանքները և այլն¹¹⁵: Այս պլենումում Գրիգոր Չարությունյանը կարևոր խնդիրներ դրեց նաև հանրապետության գյուղատնտեսության աշխատողների և մտավորականության առջև, որոնց

¹¹⁵ *Տես նույն տեղում:*

մասին կանդրադառնանք ավելի ուշ:

Պլենումի որոշումների կատարումը նշտապես գտնվում էր կոմկուսի առաջին քարտուղարի անմիջական տեսադաշտում: Պարբերաբար հրավիրվող Կենտկոմի բյուրոյի նիստերում քննարկվում էր այս կամ այն արդյունաբերական ձեռնարկության կամ շրջանային կուսակցական կազմակերպության գործունեությունը՝ ռազմական պատվերների կատարման բնագավառում, ժամանակին վեր էին հանվում թերությունները, օգնում դրանց վերացման և դժվարությունների հաղթահարման հարցում: Այսպես, օրինակ, 1942թ. հունվարի 20-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն անդրադարձավ Երևանի մեխանիկական գործարանում, նույն թվականի փետրվարին՝ Լենինականի տեքստիլ կոմբինատում, ապրիլի 21-ին՝ հանրապետության պահածոների գործարաններում, մայիսի 12-ին թեթև արդյունաբերության նախարարության համակարգի կարի ֆաբրիկաներում ռազմական պատվերների կատարման հարցերին, ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնք մեծ չափով նպաստեցին նկատված թերությունների վերացմանը, ռազմաճակատի համար անհրաժեշտ ռազմավարական արտադրանքի թողարկմանը: Բացի գործող ձեռնարկություններից, որոնք պատերազմի առաջին տարվա վերջում արդեն հիմնականում փոխադրվել էին ռազմական ռելսերի վրա, հանրապետությունում արագ թափով սկսվեցին կառուցվել նոր գործարաններ և արտադրամասեր: Այդ գործընթացը նույնպես գտնվում էր Կենտկոմի առաջին քարտուղարի անենօրյա տեսադաշտում և հսկողության ներքո: Շնորհիվ ժամանակին ձեռնարկված միջոցների, Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին ոչ միայն կանգ չառավ, այլև շարունակեց զարգանալ արագ թափով: Ռազմական նպատակների համար արտադրանք տալու հետ մեկտեղ շարունակվում էին արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցման աշխատանքները, ընդլայնվում եղած կարողությունները:

Պատերազմի տարիներին շահագործման հանձնվեցին 30 նոր ձեռնարկություններ, որոնց թվում Երևանի ավիացիոն, կոմպրեսորային, ժամացույցի, շարժիչավերանորոգման, ավտոդողերի, Ալավերդու ծծմբաթթվի, ցեմենտի (ԱՄԻ), Երևանի սոսնձի, Հոկտեմբերյանի պահածոների գործարանները և այլն, Երևանի

կորդի (մակաշերտավոր բրդե գործվածքի), Խարբերդի մանվածքային, սայլաշինական, թամբագործական ֆաբրիկաները և այլն: Շահագործման հանձնվեցին 110 նոր արտադրամասեր, այդ թվում՝ ապակու, ավտոկորդի, ձեռքի օճառի, լվացքի փոշու, կրկնակոշիկների արտադրամասերը և այլն:

Պատերազմի տարիներին յուրացվեց 300 նոր տեսակի ապրանքների, այդ թվում 10 տեսակի զինամթերքի, 2 տեսակ զենքի, 6 տեսակ կապի միջոցների, 47 տեսակ սայլագումակային, տնտեսական և ուսապարկերի, 20 տեսակ քիմիական նյութերի, 3 տեսակ ինժեներական և 6 տեսակ հրետանային գույքի, հրակայուն աղյուսի, ցեմենտի փոխակերպիչի, էլեկտրահալման եղանակով ստացվող ապակյա իրերի, ռետինատեխնիկական իրերի արտադրությունը և այլն¹¹⁶: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում արտադրվեց 233.000 հատ 82 միլիմետրանոց բեկորային ական, 203.000 հատ ավիացիոն ռումբի պատյան, 167.000 հատ ձեռքի նռնակի պատյան, 150.000 հակատանկային ականի պատյան, 90.000 հատ դյուրավառ հեղուկով լցված շիշ և այլն¹¹⁷:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողովուհատի Երևանի թիվ 447 գործարանը (հետագայում՝ Հայէլեկտրամեքենաշինական գործարան) սկզբում կատարում էր մարտերում վնասված ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ, ապա ձեռնամուխ եղավ արտադրելու «Յակ-3» կործանիչի թևեր և գետնի վրա շարժվելու անվահամակարգ, որոնք այնուհետև ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան՝ վերջնական հավաքման համար: Պատերազմի վերջին տարում Երևանի թիվ 447 գործարանը սկսեց արտադրել «ՈՒՏ-2Ս» թեթև ինքնաթիռներ, որոնք տեղում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ¹¹⁸:

Հայաստանի վաստակավոր շինարար Լևոն Երզնկյանի վկայությամբ Գր.Հարությունյանը մեծ կարևորություն էր տալիս այս գործարանի կառուցմանը, ուստի հաճախ էր լինում շինհրապարակում, հետևում կառուցման ընթացքին, օգնում կառույցի ղեկավարներին ձեռք բերելու անհրաժեշտ շինանյութեր,

¹¹⁶ Տե՛ս 4 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, թթ. 33 – 34:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, ք. 3:

¹¹⁸ Տե՛ս ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 313, գ. 1, գ. 8, թթ. 103 – 104:

հազվագյուտ սարքավորումներ: Պատահական չէ, որ թիվ 447 գործարանի շինարարները Գրիգոր Չարությունյանին համարում էին իրենց «ավագ աշխույժ»¹¹⁹:

Պատերազմի առաջին տարում Երևանի Ձերժնսկու անվան մեքենաշինական գործարանում յուրացվեց 50 միլիմետրանոց վաշտային ականանետի սերիական արտադրությունը¹²⁰:

Երկրի պաշտպանության գործի համար կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի գունավոր մետաղագործության արդյունավետ զարգացումը: Շնորհիվ նախապատերազմյան տարիներին իրագործված երկրաբանական-հետախուզական աշխատանքների, հանրապետության պղնձարդյունաբերության համար հայտնաբերվել էր հարուստ հունքային բազա, որը հնարավորություն տվեց արդեն պատերազմի տարիներին կտրուկ ավելացնել պղնձի և մյուս գունավոր մետաղների արտադրությունը, որոնց անհրաժեշտությունը խիստ մեծացել էր. Հայաստանում պատերազմի տարիներին տարեկան արդյունահանվում էր 450.000 տոննա պղնձի հանքանյութ, արտադրվում 8.000 տոննա պղինձ¹²¹:

Բացի այդ, պատերազմի տարիներին Հայաստանում տարեկան արտադրվում էր շուրջ 100.000 տոննա ցեմենտ, 90.000 տոննա կարբիդ, 5.000 տոննա կաուչուկ, 15.000 լրակազմ ավտոդող և ավտոկամերա, 800.000 զույգ կոշիկ, 25 միլիոն մետր գործվածք, 20 միլիոն տուփ պահածո, 40.000 դեկալիտր կոնյակ, 600.000 դեկալիտր գինի, 3.000 տոննա ծխախոտ, 75.000 տոննա միս ու երշիկեղեն, շուրջ 60.000 տոննա քարածուխ և այլն¹²²:

Արդյունաբերական գործող ձեռնարկությունների արտադրական կարողությունների մեծացման, ռազմական արտադրանքի թողարկման, նոր գործարանների կառուցման և արտադրանասերի շահագործման գործընթացը մշտապես գտնվում էր Գրիգոր Չարությունյանի ուշադրության կենտրոնում և հատուկ հսկողության տակ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում քիմիական արդյունաբերության զարգացմանը: Այսպես, օրինակ,

¹¹⁹ Տե՛ս Գրիգոր Չարությունյան, *Կյանքը և գործունեությունը*, Ե., 2000, էջ 303:

¹²⁰ Տե՛ս ԳԳ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 8:

¹²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 75, թթ. 32 – 33:

¹²² Տե՛ս նույն տեղում:

1942թ. մարտին ՅԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ պլենում հրավիրեց՝ նվիրված Ս.Ս.Կիրովի անվան քիմիական կոմբինատի աշխատանքին¹²³: Մեկ ամիս անց Կենտկոմը որոշում ընդունեց ռեզինատեխնիկական արտադրանքի թողարկումն ապահովելու և «Արդտեքռեզին» գործարանի շինարարական և մոնտաժային աշխատանքներն ավարտելու միջոցառումների վերաբերյալ¹²⁴: Մինչ այդ՝ 1942թ. փետրվարի 2-ին ՅԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ որոշում էր ընդունել Ալավերդու և Ղափանի լեռնահանքային ձեռնարկությունների մասին¹²⁵: 1942թ. սեպտեմբերի 16-ին ՅԿ(բ)Կ Կենտկոմում կայացավ Երևան քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների տնօրենների, տեխնիկական ղեկավարների և սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների խորհրդակցություն՝ արդյունաբերական ձեռնարկությունների ժողկոմատների, ժողկոմների և տրեստների ղեկավարների մասնակցությամբ, նվիրված արդյունաբերական ձեռնարկությունների կողմից արտադրական պլանների կատարման հարցերին: Օգոստոս ամսվա արտադրական պլանների կատարման վիճակի և ձեռնարկությունների ղեկավարման գործում տեղ գտած թերությունների մասին զեկուցումով հանդես եկավ Գ.Յարությունյանը: Նա մանրամասն կանգ առավ հանրապետության արդյունաբերության արտադրական պլանների կատարման վրա և Երևան հանեց մի շարք ձեռնարկությունների ետ մնալու պատճառները: Գրիգոր Յարությունյանը խիստ քննադատության ենթարկեց այն ձեռնարկությունների ղեկավարների գործունեությունը, որոնք բոլոր պայմաններն ունենալով արտադրական պլանները կատարելու համար, շարունակում էին վատ աշխատել և չկատարել պետական առաջադրանքները: Այդպիսի ձեռնարկությունների թվում Կենտկոմի առաջին քարտուղարը նշեց Երևանի քրոմպիկի և կարի գործարանների, Կիրովականի մորթեղեն-մուշտակեղենի ֆաբրիկայի, Լենինականի տեքստիլ կոմբինատի և մանվածքային ֆաբրիկայի, Ալավերդու հանքերի, Երևանի և Կիրովականի կղմինդր-աղյուսի գործարանների, մայրաքաղաքի ալրադաց կոմբինատի, մի շարք այլ ձեռնարկությունների անունները: «Այդ

¹²³ Տե՛ս ԴԴ ԴԶԿԾ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 3, ք. 17:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թթ. 94 – 95:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 25, ք. 31:

ձեռնարկությունների ղեկավարներն իրենց ետ մնալը պատճառաբանում են հումքի և վառելանյութի բացակայությամբ, բանվորական ձեռքի պակասությամբ և այլ «օբյեկտիվ» պատճառներով, – իր զեկուցման մեջ նշել է Գր.Չարությունյանը, – մինչդեռ իրականում այդ ձեռնարկություններն ապահովված են եղել անհրաժեշտ ամեն ինչով, ոչ մի հիմք չեն ունեցել պլանները չկատարելու համար: Միայն ղեկավարների անհոգությամբ և արտադրությունը կազմակերպելու նրանց անկարողությամբ կարելի է բացատրել այդ ձեռնարկությունների ետ մնալը:

Ետ մնացող մի շարք ձեռնարկությունների ղեկավարները հանդես չեն բերում նախաձեռնություն և պատերազմական պայմանների հետևանքով առաջացած դժվարությունները հաղթահարելու կարողություն, հոգ չեն տանում դրսից բերվող նյութերը ժամանակին տեղական նյութերով փոխարինելու մասին, միջոցներ չեն ձեռնարկում եղած սարքավորման ամբողջ կարողությունը լիովին օգտագործելու, կադրերի պատրաստումը, աշխատանքային տեղի ճիշտ կազմակերպումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և բոլոր բանվորների կողմից արտադրական նորմաների կատարումն ապահովելու համար»¹²⁶:

Այնուհետև, Գրիգոր Չարությունյանը խոսեց այն մասին, որ թշնամին իր բոլոր հիմնական ուժերը նետելով հարավ, ձգտում է դեպի Ստալինգրադ ու Կովկաս, սպառնում Անդրկովկասին: Այդպիսի ճակատագրական պահին Կենտկոմի առաջին քարտուղարը արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների առաջ խնդիր դրեց էլ ավելի ուժեղացնել ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը և համախմբել բոլոր հնարավորությունները՝ առավելագույնս ավելացնելու ռազմամթերքի, զենքի, հանդերձանքի, թշնամու վերջնական ջախջախման գործն արագացնելու համար անհրաժեշտ ամեն ինչի արտադրությունը: Նա ժողկրմատների, ձեռնարկությունների վարչատեսխիկական ղեկավարների և մասնավորապես Չայաստանի Պետպլանի անհետաձգելի խնդիրն էր համարում կարճ ժամանակամիջոցում արդյունաբերության համար վառելիքի հայթայթման հարցը, մի շարք ձեռնարկություններում էլեկտրաէներգիայի փոխարեն կարծր

¹²⁶ «Սովետական Չայաստան», 17 սեպտեմբերի 1942թ.:

վառելանյութի, այդ նպատակով նաև տեղական հումքի օգտագործումը: Գր.Չարությունյանը ներկաներից պահանջեց արտադրության մեջ հաստատել երկաթյա կարգապահություն, աշխատանքի արտադրողականության բարձրացում, նորմաների կատարում և գերակատարում¹²⁷:

Չայտնի է, որ 1942թ. աշնանը ԽՍՀՄ եվրոպական մասի ածխային շրջանները գտնվում էին գերմանական զավթիչների ձեռքին, որի հետևանքով ծանր վիճակ էր ստեղծվել: Քարածխի խիստ կարիք էր զգում հատկապես Չայաստանի արդյունաբերությունը: Չարկավոր էր օգտագործել տեղական հումքը: Դա էլ նկատի ուներ Գր.Չարությունյանը, երբ վերոհիշյալ խորհրդակցությունում պահանջեց հանրապետության արդյունաբերության մեջ վառելիքի խիստ կարիքը լրացնել տեղական միջոցների հաշվին: Ուստի պատահական չէր, որ խորհրդակցությունից երկու շաբաթ անց՝ սեպտեմբերի 28-ին ՅԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց Ջաջուռի ածխահանքի և Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիսի) տորֆային կոքսի հանույթն ավելացնելու վերաբերյալ¹²⁸: Այդ միջոցառումները շուտով տվեցին իրենց դրական արդյունքները: Երևանի արդյունաբերական ձեռնարկությունները սկսեցին օր օրի ավելի շատ տեղական վառելիք ստանալ, որը մեծ չափով բարելավեց նրանց արտադրողականությունը:

Չայրենական մեծ պատերազմի տարիներին Գրիգոր Չարությունյանը մեծ ուշադրություն էր դարձնում նաև Անդրկովկասյան հանրապետությունների միջև արտադրական կոոպերացիայի ուժեղացման և ընդլայնման հիմնահարցին: Նա լավ էր հասկանում, որ պատերազմի հետևանքով Անդրկովկասյան հանրապետությունների՝ կենտրոնի հետ ունեցած տնտեսական կապերի խզման պայմաններում խիստ անհրաժեշտ ու հրատապ էր դարձել երկրամասի արդյունաբերական ձեռնարկությունների միջև ավելի հստակ ու նպատակաուղղված համագործակցություն հաստատելը, որից կշահեր ընդհանուր գործը: Այդ էր պատճառը, որ Չայաստանի կոմկուսի Կենտկոմը, հանրապետության կառավարությունը Վրաստանից ու Ադրբեջանից ստացված բոլոր պահանջագրերը քննարկում էին օպերատիվ կարգով, դրանք լուծում ժամանակին:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում:

¹²⁸ Տե՛ս ԳԳ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 26, քք. 117 – 118:

Այսպես, օրինակ, 1942թ. մարտի 30-ին Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Մ.Բաղիրովը դիմեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գր.Հարությունյանին՝ խնդրելով Ադրբեջանի նավթարդյունաբերությանը օգնություն ցույց տալ Հայաստանի քիմիական արդյունաբերության համապատասխան արտադրանքով, առանց որոնց կիրառման կոադարեր ռազմավարական կարևոր հուճքի՝ նավթի արդյունահանման, բենզինի (հատկապես ավիաբենզինի) ու կերոսինի ստացման գործը: Իր հերթին Ադրբեջանը պարտավորվում էր Հայաստանին առավելագույն չափով օգնել վառելանյութով և այլ նավթամթերքներով¹²⁹:

Գր.Հարությունյանի նախաձեռնությամբ ապրիլի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն հատուկ քննարկեց այդ նամակը և որոշեց անհապաղ ձեռնամուխ լինել Ադրբեջանի նավթարդյունաբերությանը անհրաժեշտ արտադրանքով օգնելուն և այդ որոշման մասին հայտնեց Բաղիրովին¹³⁰:

Հայաստանի քիմիական արդյունաբերությունը կարճ ժամանակամիջոցում կարողացավ անցել նավթարդյունաբերությանն անհրաժեշտ բոլոր արտադրատեսակների թողարկմանը և ժամանակին դրանք ուղարկել պատվիրատուին: Թվարկենք դրանցից մի քանիսը: Այսպես, օրինակ, առանց կաուստիկ սոդայի հնարավոր չէր բենզինի ստացումը: Նախկինում այն Ադրբեջանը ստանում էր Ուկրաինայից, որի տարածքը այդ ժամանակ գրավված էր գերմանական զավթիչների կողմից: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ արտադրանքի թողարկման և Ադրբեջանի նավթարդյունաբերությանը դրանով ապահովելու ողջ ծանրությունն ընկավ Հայաստանի քիմիական գործարանների վրա, որոնք պատվով կատարեցին իրենց գործը: Նավթարդյունաբերության համար խիստ անհրաժեշտ էին հատուկ հազորդափոկեր, առանց որի հնարավոր չէր գործի գցել նավթահան պոմպերը: Երևանի «Սովպրեն» քիմիական կոմբինատի և «Արդտեխռետին» գործարանի ջանքերով լիովին բավարարվեցին Ադրբեջանի նավթարդյունահանող արդյունաբերության կարիքները: Բացի դրանից Ադրբեջան էր

¹²⁹ Տե՛ս նույն տեղում, թթ. 75 – 77:

¹³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 33, թ. 80:

ուղարկվում նաև ծծմբական թթու՝ օրական 70 տոննա, քլորացված ալյումին՝ օրական 4 տոննա, որոնք խիստ անհրաժեշտ էին ոչ միայն բարձր օկտանային թիվ ունեցող ավիաբեմզինի ստացման ժամանակ, այլև հանդիսանում էին պայթուցիկ նյութ՝ տրոտիլ ստանալու հիմնանյութ¹³¹:

Պատերազմի տարիներին աշխատանքային համագործակցության նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև Հայաստանի ու Վրաստանի միջև եղած արտադրական կոոպերացիայի վերաբերյալ:

Այսպես, օրինակ, 1942թ. փետրվարի 21-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Հարությունյանը Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Ն.Չարկվիանուն ուղարկած հեռագրում նշում է, որ փետրվարի 12-ից Տղվիբուլին դադարեցրել է Երևանի «Սովպրեն» կոմբինատի համար քարածխի մատակարարումը, որը սպառնում է ռազմավարական արտադրանք թողարկող այդ կարևոր ձեռնարկության կանգնեցնելուն: Խնդրվում էր օգնել այդ հարցում: Փետրվարի 22-ին Կ.Ն.Չարկվիանին՝ Գր.Հարությունյանին ուղարկած հեռագրում պատասխանում է, որ հարցը կարգավորված է¹³²:

Սեկ այլ հեռագրով Գրիգոր Հարությունյանին էր դիմել Վրաստանի Կ(Բ)Կ Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղարը, խնդրելով շտապ կարգով Թբիլիսիի գինագործարանին ապահովել քրոմի անհիդրիդով՝ Շպագինի մակնիշի ինքնաձիգ հրացանի փողը քրոմապատելու համար: Գ.Ա.Հարությունյանի կարգադրությամբ Հայաստանի տեղական արդյունաբերության ժողկոմատը կարճ ժամանակամիջոցում ապահովեց անհրաժեշտ քանակությամբ քրոմի անհիդրիդի ուղարկումը Թբիլիսի¹³³: Պատերազմի տարիներին Հայաստանի քիմիական արդյունաբերությունը Ինզուրիի թղթի-ցելյուլոզի կոմբինատին մատակարարում էր քլորակիր, որն առաջ բերվում էր Ուկրաինայից: Միության մեջ կոֆեին արտադրող միակ գործարանը, որը գտնվում էր Բաթումում, անգործության էր մատնվել քլորոֆորմի բացակայության հետևանքով, որն առաջ բերվում էր Մոսկվայից:

¹³¹ *Տե՛ս նույն տեղում, թթ. 80 – 81:*

¹³² *Տե՛ս* В.А.Мурадян, *Компартия Армении в годы Великой Отечественной войны, Е., 1984, с. 171 – 172.*

¹³³ *Տե՛ս նույն տեղում, էջ 172:*

Կոֆեինը հանդիսանում էր այն կարևորագույն դեղորայքը, որն օգտագործվում էր Կարմիր բանակի դաշտային ու թիկունքային բժշկասանիտարական հաստատությունների, Առողջապահության ժողկոմատի հոսպիտալների և այլ կազմակերպությունների կողմից: Քլորոֆորմ կարելի էր ստանալ նաև Երևանի «Սովպրեն» քիմիական կոմբինատում: Այդ կարևոր խնդիրը լուծվեց առանց ավելորդ քաշքշուկների: Բաթումի գործարանը սկսեց կրկին թողարկել կոֆեին: Նույն ձևով լուծվեց նաև Վրաստանի թեթև արդյունաբերության նախարարության կաշվի գործարանների և կոշիկի ֆաբրիկաների աշխատանքի համար խիստ անհրաժեշտ մոնոքրոմատ մատակարարելու հարցը: 1942թ. նոյեմբերի 10-ին այդ հարցով ՅԿ(Բ)Կ Կենտկոմին դիմեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմը: Նոյեմբերի 17-ին Գրիգոր Չարությունյանը հեռագրով հայտնեց Կ.Ն.Չարկվիանուն, որ հարցը լուծվել է դրականորեն, ամեն ինչ արված է անհրաժեշտ ապրանքն ուղարկելու համար¹³⁴: Իր հերթին Վրաստանը Երևանի և Կիրովականի քիմիական կոմբինատների համար ուղարկեց անհրաժեշտ քանակությամբ հրակայուն աղյուս, որոնք նախկինում այդ ձեռնարկությունները ստանում էին Ուկրաինայից: Վրաստանից ժամանակին հրակայուն աղյուսի առաքումը ապահովեց քիմիական երկու խոշոր կոմբինատների անխափան աշխատանքը: 1943թ. հունիսի 12-ին ՅԿ(Բ)Կ Կենտկոմը դիմեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմին՝ Երևանի ավտոդողերի գործարանի համար խիստ անհրաժեշտ հումք՝ տալի և կավիճ առաքելու խնդրանքով: Վրացական կողմը այդ հարցը լուծեց առանց ձգձգման՝ Երևանի ավտոդողերի հասցեով ուղարկելով անհրաժեշտ քանակությամբ հումք¹³⁵:

Կարելի է բերել նման շատ օրինակներ, որոնք ցույց են տալիս պատերազմի տարիներին երեք հարևան հանրապետությունների արդյունաբերական ձեռնարկությունների միջև եղած արտադրական սերտ կապերը, դրանք ամրապնդելու գործում ՅԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Չարությունյանի կատարած դերը, սակայն բավարարվեցնք այսքանով և այժմ փորձենք ընդհանրացնել Չայրենական մեծ պատերազմի տարիներին Չայաստանի արդյունաբերության ավանդը

¹³⁴ Տե՛ս 77 7թԿԳ ՊԿԱ, ֆ. 1, ց. 031, գ. 33, թթ. 20, 30:

¹³⁵ Տե՛ս В.А.Мурадян, *Компартия Армении в годы Великой Отечественной войны*, Е., 1984, с. 174.

հայրենիքի պաշտպանության գործում: Քանի որ այդ ամփոփումը հստակ կերպով տրված է Հայաստանի Կ(բ)Կ 14-րդ համագումարում Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի հաշվետու զեկուցման մեջ, նպատակահարմար ենք գտնում մեջբերում կատարել զեկուցման տեքստից. «1941թ. հունիսից Հայրենական մեծ պատերազմի տարիներին, կուսակցական կազմակերպությունների ամբողջ ուշադրությունն ուղղված էր հանրապետության արդյունաբերության վերակառուցման՝ պատերազմի կարիքները բարելավելու համար: Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվեցին նոր արտադրություններ ռազմական արտադրանքի՝ զինամթերքի և ռազմական գույքի թողարկման գծով: Հանրապետության ձեռնարկությունները ռազմաճակատի կարիքների համար պատրաստում էին ականանետներ, ականներ և արկեր, նռնակներ և զինամթերքի ու հանդերձանքի այլ տեսակներ: Թեթև, տեքստիլ, տեղական արդյունաբերության միլիստրությունների ձեռնարկությունները և Արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկություններն սկսեցին զանգվածաբար արտադրել շինելներ, կիսամուշտակներ, տելոգրեյկաներ, զինվորական կոշիկեղեն, սպիտակեղեն ու այլ հագուստ:

Հատուկ ծառայություններ մատուցեցին հանրապետության կարբիդի գործարանների կուլեկտիվները, որոնք իրենց հերոսական աշխատանքով երկրի ռազմական արդյունաբերությանն անընդմեջ մատակարարում էին կարբիդ-կալցիում:

Վատ չէին աշխատում լեռնահանքային արդյունաբերության կուլեկտիվները, պատերազմի տարիներին ավելացնելով պղնձի հանքաքարի հանույթը և պղնձի մատակարարումը ռազմական արդյունաբերության կարիքների համար:

Պատերազմական պայմանների կապակցությամբ, 1942 և 1943 թվականներին համախառն արտադրանքի թողարկման որոշ նվազումից հետո, 1944 թվականին հանրապետության արդյունաբերությունը նորից բարձրացրեց արտադրանքի թողարկումը և 1943 թվականի համեմատությամբ արտադրանքի թողարկումն աճեց 14,4 տոկոսով, իսկ բանվորների աշխատանքի արտադրողականությունը՝ 7,3 տոկոսով:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ամբողջապես կամ մասնակիորեն շահագործման հանձնվեցին Էլեկտրամեքե-

նաշինական գործարանը, Երևանի ավտոդողերի գործարանը, Յոկտեմբերյանի պահածոների գործարանը, Երևանի կոմպրեսորների և ժամացույցի գործարանները, Ալավերդու քիմիական գործարանը, Ստեփանավանի գուլպայի ֆաբրիկան, գյուղատնտեսական գործիքների գործարանը, Ստալինի անվան գուլպատրիկոտաժի ֆաբրիկան և Կիրովականի մորթեղեն-մուշտակեղենի ֆաբրիկան:

Հանրապետության շրջաններում կազմակերպվեցին տեղական և սննդի արդյունաբերության մինիստրությունների շրջանային արտադրական կոմբինատներ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերն աճեցին 31,4 տոկոսով: Միաժամանակ վերսկսվեցին աշխատանքները Սևան-ձինուծ, Ալյումին-ձինուծ և արդյունաբերական այլ շինարարություններում:

Արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական կազմակերպությունները կազմակերպչական և մասսայական մեծ աշխատանք կատարեցին կառավարության առաջադրանքների կատարման համար արտադրական կոլեկտիվներին մոբիլիզացնելու ուղղությամբ:

Կուսակցական կազմակերպությունները հաջող աշխատանք կատարեցին արդյունաբերության մեջ կանանց ներգրավելու ասպարեզում: Եթե 1941 թվականին կանայք կազմում էին արդյունաբերության մեջ աշխատող բանվորների և ծառայողների թվի 37,3 տոկոսը, ապա արդեն 1942 թվականին կանանց թիվը կազմում էր բոլոր բանվորների 54,4 տոկոսը: Արդյունաբերության մեջ ներգրավված կանայք ոչ միայն արագությամբ յուրացրին արտադրական պրոֆեսիաները, այլև թիկունքի վճռական ուժը հանդիսացան ռազմաճակատի կարիքներն անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու գործում:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, հանրապետության արդյունաբերությունը 1946 թվականին ավարտեց վերակառուցումը և անցավ քաղաքացիական արտադրանքի թողարկման»¹³⁶:

¹³⁶ Գ.Ա.Հարությունյան, *Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(Բ)Պ 14-րդ համագումարում ԴԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Ե., 1948, էջ 17 – 20:*

բ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի առաջին իսկ օրվանից Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և նրա առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը մշտապես իրենց տեսադաշտում էին պահում նաև հանրապետության գյուղատնտեսությունը պատերազմական պայմաններում ղեկավարելու, ռազմաճակատի համար գյուղատնտեսական կարևոր ապրանքների արտադրությունը կազմակերպելու, ինչպես նաև հանրապետության բնակչությանը հացով ու անհրաժեշտ այլ գյուղատնտեսական մթերքներով ապահովելու հիմնահարցերը: Հարկ է նշել, որ այդ ամենը կապված էին մեծ դժվարությունների հետ: Նախ գյուղի աշխատավորության զգալի մասը՝ տղամարդիկ զորակոչվել էին բանակ, որոնց փոխարինել էին կանայք, ծերերն ու երեխաները, որի հետևանքով բավականաչափ ընկել էր աշխատանքի թափը: Երկրորդ, Ուկրաինայի հացառատ շրջանների ու ԽՍՀՄ գյուղատնտեսական այլ տարածքների գրավման պատճառով երկիրը զրկվել էր գյուղատնտեսական արժեքավոր մթերքների արտադրության աղբյուրներից, որոնք պետք է լրացվեին այլ հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի հաշվին: Հասկանալի է, որ ռազմաճակատի աճող պահանջները բավարարելու համար հարկավոր էր կտրուկ բարձրացնել գյուղատնտեսական մթերքների և հումքի արտադրությունը: Պատերազմական պայմանները պահանջում էին, որ Հայաստանը, բացի ավանդական գյուղատնտեսական կուլտուրաներից, մեծ չափով մշակեր բամբակ, ճակնդեղ, ծխախոտ և այլ տեխնիկական կուլտուրաներ, կարտոֆիլ, զգալի չափով զարգացներ անասնապահությունը, որոնք խիստ անհրաժեշտ էին ռազմաճակատի և բնակչության կարիքները հոգալու համար: Բացի այդ, մեծ դժվարություններ էին ստեղծվել տրակտորների, ավտոմեքենաների, ծիերի զգալի մասը բանակի կարիքների համար մոբիլիզացնելու, ինչպես նաև գոյություն ունեցած մեքենատրակտորային պարկը կենտրոնից ստացվող պահեստամասերի մատակարարման խզման հետևանքով: Այդպիսի ծանր պայմաններում ՀԿ(Բ)Կ Կենտկոմը Գ.Ա.Հարությունյանի ղեկավարությամբ իրականացրեց մի շարք կարևոր

միջոցառումներ, որոնք նպաստելու էին բանակը և բնակչությանը սննդամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով ապահովելուն: Ամենից առաջ մեծ ուշադրություն դարձվեց գյուղական կուսակցական և խորհրդային մարմինների ամրապնդմանը, նրանց իրավունքների ընդլայնմանը: Վար ու ցանքի, բերքահավաքի, պետական մթերումների պլանների կատարման, գյուղի աշխատավորի կուլտուր-կենցաղային պահանջների բավարարման և կենսական կարևորություն ունեցող շատ հարցեր դարձան այդ մարմինների ուշադրության առարկան:

Շնորհիվ պատերազմի առաջին ամիսներին ձեռք առնված միջոցառումների, ժամանակին անկորուստ կատարվեցին բերքահավաքի աշխատանքները, պետությանը հանձնվեցին պլանով նախատեսված գյուղատնտեսական մթերքները:

Պատերազմի պայմաններում հանրապետության գյուղատնտեսության զարգացման ծրագրային որոշումներ ընդունվեցին 1941թ. նոյեմբերի 20-ին կայացած ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումում: Գյուղական շրջանների կուսակցական կազմակերպություններին, ՀԽՍՀ Հողժողկոմատին հանձնարարվեց ընդլայնել տեխնիկական կուլտուրաների բամբակի, ծխախոտի, ճակնդեղի ցանքատարածությունները: Այդ կուլտուրաները կարևոր հումք էին հանդիսանում արդյունաբերության համար: Հաշվի առնելով ամասնապահության կարևոր նշանակությունը պատերազմի պայմաններում, պահանջվում էր ուշադրության կենտրոնում պահել անասունների խնամքի, պահպանման և կերակրման աշխատանքները: Ձմեռային շրջանը առավելագույն չափով օգտագործել կին մեխանիզատորների (տրակտորիստներ, կոմբայնավարներ), բրիգադավարների (ագրոտեխնիկների) և նման այլ մասնագետների պատրաստման համար և այլն¹³⁷: 1941թ. դեկտեմբերի սկզբին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը և ՀԽՍՀ Ժողկոմխորհը որոշում ընդունեցին՝ «1942թ. գյուղատնտեսական աշխատանքների պլանի մասին»¹³⁸, 1942թ. մարտին տեղի ունեցավ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը, որը քննարկեց «Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին»¹³⁹, նույն թվականի նոյեմբերի 23-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը և

¹³⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 030, գ. 20, թ. 18:

¹³⁸ «Սովետական Հայաստան», 10 դեկտեմբերի 1941թ.:

¹³⁹ «Коммунист». 21 марта 1942г.

ՀԽՍՀ Ժողկոմխորհը կարևոր որոշում ընդունեց՝ Կարմիր բանակի համար մասնաբերքի առանձին ֆոնդ ստեղծելու մասին և այլն: Այդ որոշումները կենսագործելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծվեց աշխատունակ բնակչությանը գյուղատնտեսական աշխատանքների համար մոբիլիզացնելու հատուկ բաժին, որի պետ նշանակվեց Ռ.Բ.Ազիզբեկյանը: Նման բաժիններ ստեղծվեցին նաև շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեներում: Հանրապետության քաղաքներում և շրջկենտրոններում կազմակերպվեցին գյուղատնտեսական ուսուցման դասընթացներ, որոնց շրջանավարտները ուղարկվում էին կոլտնտեսություններում, սովխոզներում և մեքենատրակտորային կայաններում աշխատելու¹⁴⁰: Վերոհիշյալ որոշման հիման վրա գյուղական և քաղաքային դպրոցների 6 – 10-րդ դասարանների աշակերտները, ինչպես նաև բուհերի ու տեխնիկումների ուսանողները ամառային արձակուրդների շրջանում հավաքագրվում էին գյուղատնտեսական աշխատանքներում: Գյուղատնտեսական աշխատանքի մեջ հավաքագրվեցին նաև աշխատունակ բնակչության այն մասը, որը չէր աշխատում արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում, ինչպես նաև պետական հիմնարկներում ծառայողների մի մասը: Գյուղերում տասնյակ հազարավոր կանայք, ծերունիներ և անչափահասներ, ովքեր նախկինում չէին աշխատել հասարակական արտադրության ոլորտում, հավաքագրվեցին գյուղատնտեսական աշխատանքների մեջ: Կանայք դարձան կոլտնտեսային արտադրության վճռական ուժը:

Գյուղատնտեսության զարգացման հարցերը պարբերաբար քննարկվում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումներում, նրա բյուրոյի նիստերում: Այսպես, օրինակ, 1943թ. հուլիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 15-րդ պլենումը քննարկեց «Բերքահավաքի և գյուղատնտեսական մթերքների մթերման մասին» և «Կոլտնտեսություններում և սովխոզներում անասունների գլխաքանակի ավելացման և նրանց մթերատվության բարձրացման ընթացքի մասին» հարցերը, ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնց իրականացումը դրական ազդեցություն ունեցավ հատկապես անաս-

¹⁴⁰ Միայն 1943 – 1944թթ. պատրաստվեցին և վերապատրաստվեցին 29.210 մեխանիզատորներ, մեկամսյա դասընթացներով անցան 565 կոլտնտեսության նախագահներ, 350 կուսակցական քարտուղարներ և այլն:

նապահության զարգացման վրա: Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հարցը քննարկվեց նաև 1944թ. փետրվարի 4-ին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմում: Ընդունված որոշման մեջ նշվեց, որ Հայաստանի կուլտնտեսությունները հաջողությամբ են հաղթահարել պատերազմական շրջանի դժվարությունները, ժամանակին ու լրիվ կատարել պետությանը գյուղատնտեսական մթերքների հանձնման իրենց պարտավորությունները: Հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացման նպատակով առաջարկվում էր ավելացնել տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները ի հաշիվ նոր հողերի յուրացման, վերսկսել պատերազմի հետևանքով դադարեցված ոռոգման համակարգի շինարարական աշխատանքները և այլն¹⁴¹:

Գրիգոր Հարությունյանի նախածնունդությամբ այդ հարցերը քննարկվեցին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1944թ. փետրվարի վերջին – մարտի սկզբին տեղի ունեցած 17-րդ պլենումում: Որոշվեց վերականգնել ոռոգման ցանցի շինարարական աշխատանքները, որոնք կանգ էին առել պատերազմի սկզբին: 1944թ. սկսվեց ստորին Ջանգվի, Գառնիի, Ադյամանի (այժմ՝ Գառնովիտ, Թալիմի շրջան), Ուզունլարի (այժմ՝ Օծուն, Թումանյանի շրջան) ինչպես նաև Կոտայքի ջրհան կայանների շինարարությունը: Ջրանցքների կառուցման աշխատանքներին մասնակցում էին հազարավոր աշխատողներ¹⁴²:

Ձեռք առնված միջոցառումների շնորհիվ Հայաստանի գյուղատնտեսությունը կարողացավ պատերազմի տարիներին իր միջոցներով կատարել ոչ միայն ռազմաճակատին անհրաժեշտ պետական մթերույաների պլանները, այլև հանրապետության բնակչությանը ապահովել հացով և մյուս սննդամթերքներով: Այդ ամենը կատարվեց գյուղի աշխատողների ամենօրյա հերոսական աշխատանքի շնորհիվ, որոնք, չնայած գյուղական աշխատանքին յուրահատուկ ծանր պայմաններին, ռազմաճակատից ստացվող չարագուշակ «սև թղթերին», վաղ ծեփց մինչև ուշ մայրամուտ աշխատում էին հանրային դաշտերում և կատարում հայրենիքի հանդեպ ունեցած իրենց սրբազան պարտքը: Այդ մասին շատ

¹⁴¹ Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 543:

¹⁴² Տե՛ս նույն տեղում:

պատկերավոր է ասված ռազմաճակատում գտնվող իր զավակներին՝ հայ ժողովրդի՝ 1943թ. փետրվարին ուղարկած նամակում. «Մեր կոլտնտեսային դաշտերում գիշեր ու ցերեկ եռում է աշխատանքը: Մեր կոլտնտեսային հողն ավելի առատ է ծնեցնում իր բերքը մայր երկիրը պաշտպանող մարտիկների համար: Պատերազմի ընացքում մեր դաշտերից հավաքում ենք շատ ավելի բերք, քան պատերազմից առաջ: Կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները անցյալ տարի 10 տոկոսով ընդարձակեցին մեր ցանքերի տարածությունը, ժամանակից շուտ ավարտեցին բերքի հավաքումը: Եթե մինչև պատերազմը մեկ հնգօրյակում բերք էին հավաքում ամենաշատը 30.000 հեկտար տարածությունից, ապա անցած տարվա մեկ հնգօրյակում բերքահավաք են կատարել 39.000 հեկտար տարածությունից: Հաջողությամբ կատարեցին նաև աշնանացանը: Նախանցյալ տարվա համեմատությամբ ցանված է 6.000 հեկտարով ավելի: Հայաստանի կոլտնտեսային գյուղը պատվով կատարեց անցյալ տարվա պետական բոլոր պարտավորությունները, պետական պարտավորություններից դուրս ռազմաճակատին ավելի քան 30.000 փութ հացահատիկ տալով պաշտպանական հեկտարներից...»¹⁴³:

Ամփոփելով Հայրենական մեծ պատերազմի տարիներին գյուղատնտեսության բնագավառում կատարված աշխատանքների արդյունքները ՀԿ(Բ)Կ 14-րդ համագումարում տված իր հաշվետու զեկուցման մեջ Գ.Ա.Հարությունյանը բերել է այնպիսի թվեր ու փաստեր, որոնք հստակ ապացուցում են պատերազմի դժվարին տարիներին հանրապետության գյուղի աշխատավորների ձեռք բերած հաջողությունները՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանը իրագործելու ասպարեզում: Այդ փաստերից երևում է, որ պատերազմի տարիներին ոչ միայն չնվազեցին, այլև ավելացան հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները: Այսպես, օրինակ, եթե 1940թ. հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը կազմում էր 334.483 հեկտար, ապա 1945թ. այդ տարածությունը կազմեց 353.859 հեկտար, այսինքն, պատերազմի տարիներին այն աճեց շուրջ 20.000 հեկտարով:

¹⁴³ Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, էջ 21 – 22:

Ցորենի տեսակարար կշիռը այդ ցանքերի մեջ կազմեց 68 տոկոս¹⁴⁴: Պատերազմի տարիներին աճեց նաև տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը: Եթե 1940թ. տեխնիկական կուլտուրաների ընդհանուր ցանքատարածությունը կազմում էր 35.000 հեկտար, ապա 1945թ. այն աճեց շուրջ 5.000 հեկտարով՝ հասնելով 40.000 հեկտարի: Ընդ որում, եթե 1940թ. ժխախտտի աճեցմանը հատկացված էր 5.029 հեկտար, ապա 1945թ. այն հասավ 7.803 հեկտարի, 1940թ. համեմատ 1.400 հեկտարով ավելացավ նաև շաքարի ճակնդեղին հատկացված ցանքատարածությունը՝ 1945թ. կազմելով 3.000 հեկտար: Պատերազմի տարիներին նվազեց միայն բամբակի ցանքատարածությունը՝ 1940թ. 15.900 հեկտարի դիմաց 1945թ. կազմելով 13.500 հեկտար: Զգալիորեն ընդարձակվեցին բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածությունները՝ 1940թ. 12.000 հեկտարից 1945թ. հասնելով ավելի քան 23.000 հեկտարի: Կրկնակի չափով ավելացան կարտոֆիլի՝ երկրորդ հացի, ցանքատարածությունները՝ 1940թ. 7.080 հեկտարից 1945թ. հասնելով 14.600 հեկտարի¹⁴⁵:

Հացահատիկային, տեխնիկական, բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածությունների աճման հետ միասին ընդարձակվեցին նաև խաղողի և պտղատու այգիների տարածությունները: Չնայած այն դժվարություններին, որ պատերազմն առաջացրեց խաղողի և պտղատու այգիների մշակման գործում, չնայած քիմիկատների և այլ բուժանյութերի պակասությանը, ոչ միայն պահպանվեց խաղողի ու պտղատու այգիների նախապատերազմյան տարածությունը, այլև այդ արժեքավոր կուլտուրաների մշակմամբ զբաղված տարածությունները զգալիորեն աճեցին: Այսպես, օրինակ, եթե խաղողի այգիների ընդհանուր տարածությունը կոլտնտեսություններում ու պետական տնտեսություններում 1939թ. կազմում էր 15.600 հեկտար, ապա 1945թ. այն աճեց 3.000 հեկտարով՝ հասնելով 18.600 հեկտարի: 3.000 հեկտարով աճեց նաև պտղատու այգիների տարածությունը՝ 1939թ. 15.800 հեկտարից հասնելով 18.800 հեկտարի:

¹⁴⁴ Տե՛ս Գ.Ա.Հարությունյան, *Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(Բ)Կ 14-րդ համագումարում ՀԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքների մասին*, էջ 41:

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 41 – 43:

Ցանքատարածությունների ընդարձակմանը զուգընթաց պատերազմի տարիներին աճեց նաև հացահատիկի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի և այլ կուլտուրաների բերքատվությունը: Այսպես, օրինակ, եթե 1940թ. յուրաքանչյուր հեկտարից ստացվում էր 8,3 ցենտներ հացահատիկ, ապա 1945թ. ստացվում էր 9 ցենտներ, եթե 1940թ. մեկ հեկտարից ստացվում էր 79,7 ցենտներ կարտոֆիլ, ապա 1945թ.՝ 100 ցենտներ, եթե 1940թ. մեկ հեկտարից ստացվում էր 114 ցենտներ շաքարի ճակնդեղ, ապա 1945թ.՝ 161 ցենտներ և այլն: Համեմատաբար նվազել էր մեկ հեկտարից ստացվող բամբակի բերքատվությունը՝ 1940թ. 16,7 ցենտներից 1945թ. հասնելով 11,6 ցենտների: Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս պատերազմի տարիներին հիմնական գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության անշեղ աճը¹⁴⁶:

Պատերազմի տարիներին հանրապետությունում շարունակում էր զարգանալ նաև համայնական անասնապահությունը: 1941թ. հունվարի 1-ից մինչև 1945թ. հունվարի 1-ը խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացավ 11.200-ով և կազմեց 340.000 գլուխ, ոչխարների ու այծերի գլխաքանակն ավելացավ 196.135-ով և կազմեց ավելի քան 360.000 գլուխ: Անասունների գլխաքանակի ավելացման հետ մեկտեղ բարձրացավ նրանց մթերատվությունը, բարելավվեց անասնահոտի ազնվացեղությունը: Պատերազմի տարիներին յուրաքանչյուր կաթնատու կովի մթերայնությունը ավելացավ 77 լիտրով, իսկ ոչխարինը՝ 3 լիտրով¹⁴⁷:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում գոյություն ունեին 1035 կուլտնտեսություններ, 15 պետական տնտեսություններ և մեքենատրակտորային կայաններ, որոնք դժվարին պայմաններում ոչ միայն հաջողությամբ կատարեցին ռազմաճակատին անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքների մթերման պլանները, հանրապետության բնակչությանը ապահովեցին հացամթերքներով, կաթնամթերքով, մսով, բանջարաբոստանային կուլտուրաներով, զանազան պտուղներով և այլն, այլև պլանից դուրս իրենց խնայողությունների հաշվին միլիոնավոր ռուբլիներ, հազարավոր լրացուցիչ ցենտներ հացահատիկ ու միս տվեցին հայրենիքին: Այսպես, օրինակ, հանրապետության գյուղատնտեսության աշխատողները

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 43 – 44:

¹⁴⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», 11 նոյեմբերի 1945թ.:

«Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուն կառուցելու համար հատկացրին 46 միլիոն ռուբլի, իսկ «Խորհրդային Հայաստան» ավիատեխնիկայի համար՝ 21 միլիոն ռուբլի: Բոլոր տեսակի պետական պարտավորությունները 100 տոկոսով կատարելուց հետո նրանք միայն 1943թ. երկրի պաշտպանության ֆոնդին հատկացրին 130.000 փութ հացահատիկ, մեծ քանակությամբ միս ու գյուղատնտեսական այլ մթերքներ: Իսկ ընդհանուր առմամբ, Հայաստանի աշխատավորները պատերազմի տարիներին Պաշտպանության ֆոնդի համար հավաքեցին 45.206.000 ռուբլի, Կարմիր բանակի ֆոնդի համար՝ 85.941.000 ռուբլի, ռազմաճակատ ուղարկեցին 1.136.000 տաք հագուստ, 206.323 անհատական ծանրոց, 45 վազոն զանազան մթերքներ և այլն, որոնց զգալի մասը գյուղի աշխատավորների խնայողություններն էին¹⁴⁸: Արձագանքելով գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրված Ուկրաինայի գյուղի աշխատավորների հայրենասիրական կոչին, Հայաստանի կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները 1944թ. պլանից դուրս Կարմիր բանակի ֆոնդ նուծեցին 200.000 փութ հացահատիկ: Բացի այդ նրանք հսկայական միջոցներ հատկացրին ավերակների վերածված Ստալինգրադի, ինչպես նաև թշնամուց ազատագրված Լենինգրադի, Օդեսայի և այլ քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդին:

Գյուղի աշխատավորության անձնուրաց աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին բավականաչափ աճեց հանրապետության կոլտնտեսությունների դրամական եկամուտները: 1944թ. վերջերին դրանք կազմեցին 483,2 միլիոն ռուբլի՝ 1940թ. 225 միլիոն ռուբլու դիմաց: Դաշտավարության համախառն արտադրանքը այդ ժամանակաընթացքում ավելացավ 635.000 ցենտներով: 1944թ. հանրապետության 155 կոլտնտեսություն ստացավ յուրաքանչյուրը կես միլիոնից մինչև մեկ միլիոն ռուբլու եկամուտ, իսկ 130 կոլտնտեսություն՝ մեկ միլիոն ռուբլուց ավել եկամուտ: Մի քանի տասնյակ կոլտնտեսությունների եկամուտները կազմում էին 5 միլիոն ռուբլուց ավել¹⁴⁹:

¹⁴⁸ Советская Армения в годы Великой отечественной войны (1941 – 1945). Сборник документов и материалов, с. 311 – 312.

¹⁴⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 11 նոյեմբերի 1945թ.:

Պատերազմի տարիներին գյուղատնտեսության աճը, դրա հիման վրա կոլտնտեսությունների կողմից պարենամթերքի և հումքի հանձնման պետական պլանների կատարումն ու գերակատարումը, տարեցտարի բարձրացրեց նաև կոլտնտեսություններին աշխօրերի դիմաց տրվող մթերքների քանակը: Հայաստանի կոմկուսի 14-րդ համագումարում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին իր հաշվետու զեկուցման մեջ Գ.Ա.Հարությունյանի բերած տվյալները վկայում են այդ մասին: Այսպես, օրինակ, եթե 1940թ. յուրաքանչյուր աշխօրի դիմաց տրվել էր 1 կգ 727 գրամ հացահատիկ, ապա 1945թ. տրվել էր 2 կգ 63 գրամ: Եթե 1940թ. յուրաքանչյուր աշխօրի դիմաց տրվել էր 232 գրամ կարտոֆիլ, ապա 1945թ. տրվել էր 597 գրամ: Համապատասխանաբար կրկնապատկվել էր աշխօրերի դիմաց տրվող յուղի, պանրի, բանջարեղենի և այլ մթերքների քանակը: 35 տոկոսով ավելացել էր նաև աշխօրի դիմաց տրվող դրամական վարձատրությունը¹⁵⁰:

Խոսելով պատերազմի տարիներին հանրապետության գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունների մասին, չենք կարող չնշել այդ գործում Գրիգոր Հարությունյանի ներդրած անձնական ավանդի մասին: Գյուղատնտեսական աշխատանքների ամենաթեժ պահերին նա ոչ միայն օպերատիվ հսկողության տակ էր վերցնում իրավիճակը, այլև գործնական օգնություն կազմակերպում այս կամ այն շրջանին, կամ նույնիսկ առանձին կոլտնտեսությանը: Երբ 1941թ. վերջերին մեքենատրակտորային կայաններում ստեղծվեցին քաղբաժիններ, առաջին քարտուղարը անձամբ էր ծանոթանում և ընտրում կադրերին, որոնք պետք է պատասխանատու աշխատանք տանեին գյուղատնտեսության ճակատում: Նրա նախաձեռնությամբ 1943 – 1944թթ. հանրապետության կուսակցական մարմինները մի շարք կարևոր միջոցառումներ ձեռնարկեցին կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները մասնագետներով և ղեկավար աշխատողներով ամրապնդելու համար: 1944թ. հունիսի 8 – 9-ը կայացած ՀԿ(Բ)Կ 18-րդ պլենումը հատուկ որոշում ընդունեց կադրերի հետ տարվող աշխատանքի վերաբերյալ,

¹⁵⁰ Տե՛ս Գ.Ա.Հարությունյան, *Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(Բ)Կ 14-րդ համագումարում ՀԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքների մասին, էջ 46:*

խստացվեց կադրերի անհարկի տեղափոխությունները, մեծ տեղ տրվեց կանանց ղեկավար աշխատանքի մեջ ներգրավելուն: 700 մարդ առաջ քաշվեցին որպես կոլտնտեսությունների նախագահներ, որոնց զգալի մասին անձամբ գիտեր Կենտկոմի առաջին քարտուղարը: Գյուղ ուղարկվեցին 214 մասնագետներ՝ գյուղատնտեսներ, զոոտեխնիկներ, անասնաբույժներ, ինչպես նաև զգալի թվով որակյալ բանվորներ: Սեկանյա դասընթացներ անցան կոլտնտեսությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունների 350 քարտուղարներ և 565 նախագահներ: Պատրաստվեցին և վերապատրաստվեցին 29.210 մեխանիզատորներ, որոնց զգալի մասը կանայք էին¹⁵¹: Գրիգոր Չարությունյանի նախաձեռնությամբ հանրապետության կոլտնտեսություններում կազմակերպվեցին պաշտպանական հեկտարներ, որտեղից ստացվող ամբողջ բերքը հատկացվում էր միայն պաշտպանության ֆոնդին: Սեկ այլ օրինակ ևս: Ինչպես հայտնի է երկրի արևմտյան, կենտրոնական և հարավային շրջանների զգալի մասը գերմանաֆաշիստական զավթիչների կողմից գրավելու հետևանքով հանրապետությունը այլևս չէր կարող դրսից պահեստամասեր ստանալ գյուղատնտեսական մեքենաների համար: ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1941թ. նոյեմբերի 17-ին որոշում ընդունեցին տրակտորների, կոմբայնների, գյուղատնտեսական մեքենաների և նրանց պահեստամասերի արտադրության մասին: Որոշման մեջ հաստատվել էր նաև Հայաստանի ձեռնարկություններում գյուղատնտեսական գործիքների պահեստամասերի արտադրության ծրագիրը¹⁵²: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն Գ.Ա.Չարությունյանի նախաձեռնությամբ հատուկ անդրադարձավ այդ հարցին և հանձնարարվեց համապատասխան ժողկոմատների ձեռնարկություններին կարճ ժամանակամիջոցում յուրացնել գյուղատնտեսական մեքենաների համար պահեստամասերի արտադրության գործը: Մինչև տարվա վերջ հանրապետության մի շարք մեխանիկական գործարաններ, արհեստագործական կոոպերացիայի արտադրամասեր և նույնիսկ մեքենատրակտորային կայանների արհեստանոցներ սկսեցին անհրաժեշտ պահեստամասերի արտադրության գործը:

¹⁵¹ Տե՛ս ԳԳ ՀԹԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 033, գ. 8, թթ. 23 – 24:

¹⁵² Տե՛ս ԳԳ ՆՊԿԿԱ, ֆ. 113, ց. 6, գ. 38, թթ. 10, 22 – 23:

Առաջին քարտուղարի սուր աչքից չէին վրիպում համայնական դաշտերում իրենց հերոսական աշխատանքով աչքի ընկած մարդիկ: Նա բարձր էր գնահատում հողի աշխատավորի դժվարին աշխատանքը, հոգ տանում նրանց կուլտուր-կենցաղային պահանջների բավարարմանը, գյուղում առողջապահական հիմնարկների և դպրոցների անխափան գործունեությանը: Գյուղատնտեսական աշխատանքներում առավել աչքի ընկած շրջաններ ու կուլտնտեսություններ պարզևատրվում էին ինչպես հանրապետական, այնպես էլ միութենական փոխանցիկ դրոշմերով, դրամական պարգևներով: 1944թ. փետրվարի 8-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Խորհրդային Չայաստանի գյուղատնտեսության աշխատողներից 388 հոգի պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Նրանցից 21-ը պարգևատրվեցին Լենինի, 44-ը՝ Աշխատանքային կարմիր դրոշի, 88-ը՝ «Պատվո նշան» շքանշաններով, 235-ը՝ «Աշխատանքային արիության» և «Աշխատանքային գերազանցության» մեդալներով¹⁵³: Նույն թվականի սեպտեմբերի սկզբներին Ստեփանավանի շրջանին հանձնվեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշմ¹⁵⁴: 1944թ. հացամթերումների պետական պլանները հաջողությամբ կատարելու համար Չայաստանից 21 մարդ պարգևատրվեց Չայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի, 80 մարդ՝ Չայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով¹⁵⁵: 1945թ. ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշին արժանացավ Կալինինոյի (այժմ՝ Տաշիրի) շրջանը¹⁵⁶:

Չայրենիքը ըստ արժանվույն գնահատեց նաև ԴԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Չարությունյանի ավանդը. Չայաստանի գյուղատնտեսության բնագավառի աշխատանքները հստակորեն ղեկավարելու, պետական պլանների կատարման բնագավառում ձեռք բերած նվաճումների համար 1944թ. փետրվարին նա պարգևատրվեց Լենինի շքանշանով: Մեկ տարի անց՝ 1945թ. փետրվարի 9-ին Գր.Չարությունյանը պարգևատրվեց

¹⁵³ *Տե՛ս «Коммунист», 11 февраля 1944.*

¹⁵⁴ *Տե՛ս «Սովետական Չայաստան», 2 սեպտեմբերի 1944թ.:*

¹⁵⁵ *Տե՛ս «Սովետական Չայաստան», 10 փետրվարի 1945թ.:*

¹⁵⁶ *Տե՛ս «Коммунист», 24 августа 1945г.*

Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրում ասված էր. «Հաշվի առնելով այն, որ պատերազմական պայմաններում հացի մթերման աշխատանքները հատուկ կարևոր նշանակություն ունեն թշնամու նկատմամբ հաղթանակի հասնելու համար և իր նշանակությամբ համահավասար է ռազմաճակատային աշխատանքին, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանին 1944թ. հացամթերումների պետական պլանը հաջողությամբ կատարելու համար պարգևատրել Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով»¹⁵⁷:

4. ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև հանրապետության մտավորականությունը: Նրանց զգալի մասը մեկնել էր ռազմաճակատ և զենքը ծեռքին պայքարում էր թշնամու դեմ, իսկ թիկունքում մնացած նրանց ընկերները ամենօրյա եռանդուն աշխատանքով նպաստում էին Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության հաջողություններին, գիտության, մշակույթի, կրթության, առողջապահության նվաճումներն ի նպաստ դնում ռազմաճակատին համաժողովրդական օգնություն ցույց տալու գործին:

Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն և նրա առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը, ՀԽՍՀ ժողկոմխորհը մշտական հոգատարություն էին հանդես բերում մտավորականության հանդեպ և, չնայած պատերազմական ծանր իրավիճակին, նպաստավոր պայմաններ ստեղծում գիտության, մշակույթի, կրթության, առողջապահության բնագավառի աշխատողների համար:

Այժմ ըստ բնագավառների, համառոտ ցույց տանք այդ աշխատանքները.

¹⁵⁷ Տես «Известия», 9 февраля 1945.

ա) ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի առաջին իսկ օրվանից ՉԿ(բ)Կ Կենտկոմը, նրա առաջին քարտուղար Գ.Չարուքյունյանը, հանրապետության կառավարությունը միջոցառումներ ձեռնարկեցին մոբիլիզացնելու թիկունքում մնացած գիտնականների աշխատանքը՝ ապահովելու պատերազմական իրադրության մեջ ժողովրդական տնտեսության գիտական սպասարկումը, բնակչության և զինվորական շրջաններում տարվող ռազմահայրենասիրական, դաստիարակչական, քաղաքական-բացատրական աշխատանքին մտավորականության գործուն մասնակցությունը:

Ինչպես հայտնի է, մինչև 1930-ական թվականների կեսերը Չայաստանում մտքի հիմնական օջախը և գիտական հիմնահարցերի մշակման գլխավոր կենտրոնը Երևանի պետական համալսարանն էր: Որոշակի գիտական աշխատանք էր կատարվում արվեստի և գիտության ինստիտուտում, որ կազմակերպվել էր Երևանում 1925թ., ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկություններին կից փորձագիտական լաբորատորիաներում: Չայաստանում գիտական կյանքն ավելի էր աշխուժացել առաջին երկու հնգամյակների տարիներին (1929 – 1937թթ.), երբ իրենց գործունեությունը ծավալեցին նոր բարձրագույն ուսումնական հաստատությունները, և կազմակերպվեցին առաջին ճյուղային գիտահետազոտական հիմնարկները: Գիտահետազոտական հիմնարկների ցանցի զարգացման և գիտական կադրերի աճի հետևանքով 1935թ. Երևանում կազմակերպվել էր ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Չայկական մասնաճյուղը (Արմֆան), որը սկզբում ղեկավարում էր ականավոր գիտնական-երկրաբան Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը, իսկ 1938թ. սկզբներից խոշոր արևելագետ, ակադեմիկոս Չովսեփ Օրբելին: Չայրենական մեծ պատերազմի սկզբում Արմֆանի կազմում հաշվվում էին 11 գիտահետազոտական հիմնարկներ, որոնցում աշխատում էին 180 գիտական աշխատողներ¹⁵⁸: Պատերազմի հենց առաջին իսկ օրերին Արմֆանի աշխատողները իրենց ընդհանուր ժողովում և

¹⁵⁸ Չայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967, էջ 450:

հակաֆաշիստական միտինգներում երդվեցին ողջ գիտելիքներն ու ուժերը առանց խնայելու ներդնել գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում¹⁵⁹: Առաջին իսկ օրերին հայ քիմիկոսների ջանքերով ստեղծվեցին երկու տիպի դյուրավառ հեղուկների խառնուրդ, որոնք լցնելով շշերի մեջ կարելի էր օգտագործել թշնամու տանկերն այրելու համար: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարը անծամբ էր հետևում այդ աշխատանքներին: Երբ փորձնական նմուշները պատրաստ էին, նա դիմեց Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դ.Տ.Կոզլովին՝ հայտնելով, որ գործող բանակի կարիքների համար անհրաժեշտության դեպքում Երևանի «Սովպրեն» քիմիական գործարանը Արմֆանի գիտնականների օգնությամբ կարող է պատրաստել շուրջ 100.000 դյուրավառ հեղուկով լցված շշեր: Այդ շշերով կարելի է զինել նաև ժողովրդական աշխարհազորի և հակատանկային կործանիչ գումարտակների մարտիկներին¹⁶⁰: 1941թ. նոյեմբերի 13-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց դյուրավառ հեղուկով լցված շշերի պատրաստման մասին և հանձնարարեց «Սովպրեն» գործարանի տնօրեն Ղազարյանին մինչև դեկտեմբերի 10-ը պատրաստել 80.000 շիշ¹⁶¹:

Անդրադառնալով Արմֆանի աշխատանքները պատերազմական պահանջներին համապատասխան կազմակերպելու խնդրին, Գ.Ա.Հարությունյանը 1941թ. նոյեմբերի 19-ին ՀԿ(Բ)Կ պլենումում նշել է. «Հանրապետության գիտական կազմակերպությունների և Արմֆանի առջև խնդիր է դրվում գիտահետազոտական աշխատանքները ամբողջությամբ փոխադրել ռազմաճակատին սպասարկելու ուղղությամբ: Կարմիր բանակի հզորության ուժեղացման նպատակով նոր տեսակի արտադրանք թողարկելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ձեռնարկությունների կարողությունները, գտնել նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիներ: Ուսումնասիրություններ կատարել տեղական հումքի նոր տեսակների հայտնաբերման ուղղությամբ, որպեսզի հնարավորություն ստեղծվի դրանք

¹⁵⁹ «Սովետական Հայաստան», 2 հուլիսի, 4 հուլիսի, 16 հոկտեմբերի 1941թ. և այլն:

¹⁶⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 030, գ. 60, թթ. 19 – 20:

¹⁶¹ Նույն տեղում, ց. 21, գ. 41, թ. 169:

օգտագործել նախկինում դրսից ներմուծվող թանկարժեք հումքի փոխարեն: Անհրաժեշտ է հետազոտություններ կատարել երկրի պաշտպանական կարիքների համար արդյունաբերական և գյուղատնտեսական երկրորդական հումքից նոր տեսակի արտադրանք ստանալու ուղղությամբ: Գիտական աշխատողների ուշադրությունը պետք է կենտրոնացվի տեխնիկական և հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման, նոր տիպի պարարտանյութերի ստացման վրա, ամեն կերպ խթանել արդյունաբերական ձեռնարկությունների ինժեներատեխնիկական աշխատողների նորարարական և գյուտարարական նախաձեռնությունները, աշխատանք տանել արդյունաբերական ազրեգատների հզորության ավելացման և Կարմիր բանակի համար անհրաժեշտ նոր տեսակի արտադրանքի թողարկման ուղղությամբ»¹⁶²: Այդ ոգով էլ պլենումն ընդունեց համապատասխան որոշում, որտեղ գիտական հիմնարկների անելիքների մասին ասված է. «Չամձնարարել գիտական կազմակերպությունների ղեկավարներին և Արմֆանին՝ գիտահետազոտական աշխատանքն ամբողջապես նպատակամղել ռազմաճակատի սպասարկմանը, այսինքն այդ նպատակով ձեռնարկություններում մեքենայական սարքերի լրացուցիչ հզորության բարձրացմանը, մինչև այժմ դրսից ներմուծվող հումքին փոխարինող տեղական հումքի նոր տեսակների ուսումնասիրմանը; երկրի կարիքների համար արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության մնացուկների և թափոնների օգտագործման միջոցառումների մշակմանը: Գիտական հիմնարկների աշխատողների ուշադրությունը կենտրոնացնել նաև տեխնիկական ու հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման, հողերի պարարտանյութերի նոր տեսակների, անասնապահության արդյունավետության բարձրացման հետազոտման հարցերի վրա»¹⁶³:

Շնորհիվ ձեռք առած միջոցառումների խորհրդային Չայաստանի արդյունաբերությունը արդեն 1942թ. թողարկում էր ավելի քան 300 անուն արտադրանք, այդ թվում ականներ, ականանետեր, նռնակներ, ռումբեր, արկեր, հրետանային սարքեր,

¹⁶² Նույն տեղում, ֆ. 1, ց. 21, գ. 16, թ. 37:

¹⁶³ Նույն տեղում, գ. 17, թ. 172:

պայթուցիկ նյութեր և արտադրանքի այլ տեսակներ, որոնք հիմնականում ստեղծվել էին հայ գիտնականների օգնությամբ: 1942թ. օգոստոսին, երբ գերմանաֆաշիստական զորքերը համառ մարտերով սողում էին դեպի Ստալինգրադ և Կովկաս, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության կառավարության անմիջական օգնությամբ ու օժանդակությամբ հայ ֆիզիկոսները Արագածի բարձր փեշերին, ծովի մակերևույթից 3200մ բարձրության վրա ստեղծեցին տիեզերական ճառագայթների ուսումնասիրության կայան: Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների կողմից այդ կայանում կատարած փորձերը տվեցին այնպիսի արդյունքներ, որոնք իրենց հաստատուն տեղը գրավեցին ֆիզիկա գիտության գանձարանում, հիմք հանդիսացան միջուկային էներգիան խաղաղ և ռազմական բնագավառներում օգտագործելու համար:

Գրիգոր Հարությունյանը մեծ նշանակություն էր տալիս Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի գիտական ուսումնասիրմանը: Ուստի պատահական չէր, որ 1942թ. նա պաշտպանեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նախաձեռնությունը՝ Արմֆանի պատմության ինստիտուտում Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ ստեղծելու վերաբերյալ: Դեռ ավելին, 1943թ. մարտի 2-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից «Հայրենական մեծ պատերազմի ուսումնասիրության հանձնաժողով ստեղծելու մասին»: Հաստատվեց հանձնաժողով հետևյալ կազմով. Կարապետյան Ս.Կ.՝ նախագահ, Օրբելի Հ.Ա. (Արմֆանի նախագահ), Մամիկոնյան Հ. («Սովետական Հայաստան» թերթի խմբագիր), Դեմիրճյան Դերենիկ (Գրողների միություն) և Գրիգորյան Ձ.Տ. (Երքադկոմ)¹⁶⁴: Այդ որոշման համաձայն, Արմֆանի նախագահությանը հանձնարարվեց «վերակառուցել պատմության ինստիտուտի աշխատանքի պլանը՝ ինստիտուտի հիմնական խնդիրներից մեկը համարելով Հայրենական մեծ պատերազմի պատմության, մասնավորապես Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող նյութերի հավաքումը, ուսումնասիրությունը և հրատարակումը: Հեղափոխության թանգարանի հիմնական խնդիրը համարել

¹⁶⁴ Տե՛ս ԴԴ ՀԸԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 28, ք. 21:

Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ նյութերի հավաքումը, ուսումնասիրումը և ցուցադրումը: Պետական հանրային գրադարանին հանձնարարել ձեռնամուխ լինել Հայրենական մեծ պատերազմին վերաբերող նյութերի հավաքման և մատենագրության կազմման աշխատանքներին: Առաջարկել բուհերի տնօրեններին համապատասխան ամբիոնների գիտահետազոտական աշխատանքի պլանների մեջ մտցնել Հայրենական մեծ պատերազմի ուսումնասիրության և դրա վերաբերյալ նյութերի հրատարակության պատրաստման ծրագրեր»¹⁶⁵:

Սակայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային Հայաստանի գիտության բնագավառում և ինչու չէ, հանրապետության պատմության մեջ, ամենակարևոր իրադարձությունը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումն էր: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը այդ հարցում մեծ նախաձեռնություն ցուցաբերեց: 1943թ. հոկտեմբերին նա, հաշվի առնելով հանրապետությունում գիտահետազոտական հիմնարկների լայն զարգացումը, գիտական կադրերի բեղմնավոր աշխատանքը՝ Հայաստանի տնտեսության և մշակույթի զարգացման և երկրի պաշտպանության ամրապնդման գործում, դիմեց Ի.Վ.Ստալինին՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիա ստեղծելու: Դիմումում ասված էր. «ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Անդրկովկասյան ֆիլիալի վերակազմավորումից հետո 1935թ. մարտին Երևանում կազմակերպվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը: Անցած տարիների ընթացքում պարբերաբար ընդլայնվեց գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի գիտական հիմնարկների կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքը: Վերջին տարիներին զգալիորեն ամրապնդվեց Ակադեմիայի մասնաճյուղի գիտական բազան, և նա դարձավ Հայաստանում իրագործվող գիտահետազոտական աշխատանքների իսկական կենտրոն:

Ներկայումս մասնաճյուղի համակարգում գոյություն ունեն 6 ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարող ինստիտուտներ՝ Երկրաբանական, Քիմիական, Կենսաբանական, Բուսաբանական, Պատմության և նյութական մշակույթի, Գրականության և լեզվի:

¹⁶⁵ *Տե՛ս նույն տեղում:*

Բացի դրանից, մասնաճյուղի նախագահությանն առընթեր կան հողագիտության սեկտոր՝ Սևանի ջրակենսաբանական կայան, Պետական աստղադիտարան, Մառի անվան կաբինետ, սեյսմիկ կայան և հետևյալ թանգարանները՝ երկրաբանական, կենդանաբանական, պատմության և գրականության: Գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի բոլոր այդ ինստիտուտներն ու սեկտորներն ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական քաղաքով:

Գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի գոյության և գիտահետազոտական աշխատանքների ծավալման տարիներին կենտրոնից և այլ հանրապետություններից Հայաստան եկան մի շարք ականավոր գիտնականներ՝ ակադեմիկոս Յ.Ա.Օրբելին, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի.Վ.Եղիազարովը, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Ի.Իսազուլյանցը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Ալիխանյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Զ.Չայլախյանը և ուրիշներ:

Սիաժամանակ, աշխատելով Մոսկվայում, Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի գիտական աշխատանքներին են մասնակցում ակադեմիկոս Ա.Ի.Ալիխանովը և Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վ.Հ.Համբարձումյանը:

Դրան զուգահեռ Ակադեմիայի մասնաճյուղում մշտական գիտական աշխատանք են կատարում ականավոր գիտնականներ՝ ակադեմիկոս Յ.Մանանդյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Աբեղյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Թումանյանը, երկրաբանության դոկտոր Յ.Կարապետյանը և ուրիշներ:

Ներկայումս հանրապետությունում դոկտորների և պրոֆեսորների թիվը հասնում է 90-ի, իսկ գիտության թեկնածուների թիվը՝ շուրջ 170-ի:

Գիտությունների ակադեմիայի մասնաճյուղում այդ գիտնականների կենտրոնացումը դրական ազդեցություն է ունեցել Երևանում գործող 8 բարձրագույն ուսումնական հաստատությունների ամրապնդման վրա և բավականաչափ ուժեղացել է գիտահետազոտական աշխատանքներն այդ բուհերի ամբիոններում:

Ելնելով վերոհիշյալից, Հայաստանի Կ(Ք)Կ Կենտրոնական

կոմիտեն, հասունացած համարելով գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի վերակազմավորման հարցը և հաշվի առնելով ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի վերակազմավորման հարցը և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ.Լ.Կոմարովի աջակցությունը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քննարկմանն է ներկայացնում Հայկական գիտությունների ակադեմիայի կազմակերպման և 20 հոգուց բաղկացած ակադեմիկոսների կազմի որոշման թույլտվության հարցը»¹⁶⁶:

Ստանալով Ի.Վ.Ստալինի համաձայնությունը, ՀԽՍՀ Ժողկոմխորհը 1943թ. նոյեմբերի 10-ին ընդունեց թիվ 702 որոշումը, որտեղ ասված էր. «Հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը մի միասնական ղեկավար կենտրոնում միավորելու և գիտական աշխատանքի ավելի նպաստակալաց զարգացումն ապահովելու համար, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի հիման վրա Երևան քաղաքում կազմակերպել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա»¹⁶⁷:

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1943թ. նոյեմբերի 29-ին՝ Խորհրդային Հայաստանի 23-րդ տարեդարձի օրը: Հիմնադիր նիստի աշխատանքներից ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի անդամների հետ միասին մասնակցում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀԽՍՀ Ժողկոմխորհի ղեկավարությունը՝ Գ.Հարությունյանի գլխավորությամբ: ՀԽՍՀ ԳԱ առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլքանյանը:

Ստանալով ՀԿ(բ)Կ Կենտկոմի և կառավարության աջակցությունը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի աշխատակիցները Հայրենական մեծ պատերազմի տարիներին առաջնակարգ հետազոտություններ կատարեցին և ծանրակշիռ արդյունքների հասան հիմնարար և կիրառական գիտությունների մի շարք բնագավառներում, որոնք հիմնականում ուղղված էին ռազմա-ճակատի պահանջները բարելավելուն:

Հայ գիտնականների այդ հիմնարար ուսումնասիրություններից ամենից առաջ պետք է նշել պղտոր միջավայրում

¹⁶⁶ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 31, թթ. 10 – 12:

¹⁶⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 27, թ. 69:

լույսի ցրման տեսությունը, որը մշակեց Վիկտոր Համբարձումյանը իր առաջարկած ինվարիանտության սկզբունքի հիման վրա: Այդ տեսությունն արագորեն ներդրվեց արտադրության մեջ՝ լայն կիրառություն գտնելով գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերում, հատկապես ռազմական նպատակներով օգտագործվելով գիշերային նշանացույցերի թողարկման բնագավառում:

Ֆիզիկայի բնագավառում, մասնավորապես տիեզերական ճառագայթների բնույթը, ատոմի կառուցվածքը ուսումնասիրելու և միջուկային էներգիան օգտագործելու առումով կարևոր հետազոտություններ կատարեցին Ալիխանյան եղբայրները: Բացի այդ, Արտեմ Ալիխանյանի՝ պատերազմի սկզբին Լենինգրադում ստեղծած մագնիսական ծովային ականները ամբողջ պատերազմի ընթացքում հզոր զենք էին Բալթյան նավատորմի համար:

Թերմոդինամիկայի բնագավառում հետաքրքիր արդյունքներ ստացավ Ալեքսանդր Հակոբյանը, որը տվեց նրա երկրորդ սկզբունքի նոր հիմնավորումը: Կիրառական նշանակություն ունեցան հեղուկի և գազերի խառնուրդների թերմոդինամիկական հատկություններին նվիրված նրա ուսումնասիրությունները:

Բանակի և ռազմածովային նավատորմի պատվերների կատարման գործում Երևանի մի շարք ձեռնարկությունների կոլեկտիվներին զգալի օգնություն ցույց տվեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի մի խումբ ֆիզիկոսներ՝ Նորայր Քոչարյանի ղեկավարությամբ:

Կիրառական կարևոր նշանակություն ունեցան քիմիկոսների հետազոտությունները: Արաքսյա Բաբայանի և Արծրուն Գասպարյանի ացետիլենին վերաբերող հետազոտությունների արդյունքները արագորեն ներդրվեցին կաուչուկի արտադրության մեջ: Կարբիդ ստանալու արդյունավետ եղանակ մշակեց քիմիկոս Վաչե Իսագուլյանցը, որը նույնպես ներդրվեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ հումքի արտադրության մեջ: Հայ քիմիկոս գիտնականների անձնվեր աշխատանքի զխավոր արդյունքը եղավ այն, որ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն չդադարեցվեց սինթետիկ կաուչուկի արտադրությունը, այլև տարեցտարի ավելի մեծ չափերով կիրառություն գտավ ինչպես ռազմաճակատի, այնպես էլ թիկունքի կարիքների համար¹⁶⁸:

¹⁶⁸ Տես Վ.Ա.Հարությունյան, Ս.Գ.Սահակյան, *Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի*, էջ 16 – 18:

Ռազմապաշտպանական և ժողովրդատնտեսական առաջնահերթ նշանակություն ունեցավ երկրաբանների աշխատանքը: Նրանց ստացած արդյունքների հիման վրա ՀԿ(Բ)Կ Կենտկոմը 1943թ. հուլիսի 13-ին որոշում ընդունեց Քաջարանի պղնձամոլիբդենային հանքանյութի հարստացման փորձնական ձեռնարկություն կառուցելու մասին: Այդ նպատակով Ղափանի պղնձահանքային կոմբինատի կազմում ստեղծվում է «Քաջարանչին» վարչություն, որը պետք է կարճ ժամանակամիջոցում Քաջարանում սկսեր փորձնական ձեռնարկության շինարարական աշխատանքները¹⁶⁹:

Հայ գիտնականները զգալի արդյունքների հասան մակ գյուղատնտեսության բնագավառում: 1942 – 1943թթ. լույս տեսան Արմեն Թախտաջյանի երկու մենագրությունները, որտեղ հետազոտված էին բույսերի դասակարգման, կառուցվածքի, բջջաբանության և կենսաբանության հետ կապված կարևոր հիմնահարցեր: Սահակ Կարապետյանի աշխատանքներում իրենց արտացոլումը գտան գյուղատնտեսական կենդանիների կերակրման կենսաբանության և արդյունավետության հարցերը: Բույսերի գենետիկային էին նվիրված Վարդան Գուլբանյանի, Հայաստանի հողերի մանրէակենսաբանությանը՝ Հարություն Փանոսյանի, Հայաստանի տարածքում հացահատիկային բույսերին՝ Միքայել Թումանյանի, խոշոր եղջերավոր անասուններին՝ Ալեքսանդր Թամամշևի հետազոտությունները: Հատկապես կարևոր էին այն աշխատանքները, որոնք օգնում էին հանրապետության գյուղական շրջաններին հաջողությամբ կատարելու պատերազմի պայմաններում նրանց առջև դրված գլխավոր խնդիրը՝ գյուղատնտեսական մթերքների նկատմամբ տեղական բնակչության պահանջները բավարարելով հանդերձ, ավելի ու ավելի մեծացնել ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը:

Ծավալուն աշխատանք կատարվեց բժշկական գիտությունների բնագավառում. ընդհանրացվում էր հանրապետության տարածքում գործող ավելի քան 50 զինվորական հոսպիտալներում վիրավոր զինվորների բուժման փորձը, որն արագորեն տարածվում էր մյուս բուժական հիմնարկներում, գիտականորեն

¹⁶⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 20, ք. 90:

հիմնավորվում էր կոնկրետ կանխարգելիչ միջոցների անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով առկա պայմանները: Հատկապես մեծ է բժիշկ-գիտնականների ավանդն այն բանում, որ պատերազմի ամբողջ ընթացքում հանրապետության բնակչությունը գերծ մնաց համաճարակներից, որոնք անցյալում բռնկված բոլոր պատերազմների ժամանակ սոսկալի աղետ էին հանդիսանում: Արմենակ Մնջոյանի ստեղծած ցավագրկող դեղամիջոցները լայն կիրառում գտան դաշտային վիրաբուժության մեջ: Հայ բժշկության պատմության հետազոտության բնագավառում կարևոր աշխատանք կատարեց Լևոն Հովհաննիսյանը: Պատերազմի տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց հանրապետության հանքային ջրերը առողջապահական նպատակներով օգտագործելու խնդրի վրա: 1943թ. օգոստոսի 21-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների բուժման համար Ջերմուկի հանքային ջրերի օգտագործման մասին»¹⁷⁰: Գրիգոր Հարությունյանն անձամբ մեծ նշանակություն էր տալիս Ջերմուկի հանքային ջրերի ինչպես բուժական, այնպես էլ արդյունատնտեսական նպատակով օգտագործմանը: Չնայած ծանրաբեռնված աշխատանքին, նա անձամբ մի քանի անգամ եղավ տեղում և արեց ամեն ինչ Ջերմուկի առողջարանային համալիրի կառուցման արագացման և հետագա զարգացման համար: ՀԿ(բ)Կ Կենտկոմը միջոցառումներ ձեռնարկեց նաև Արզնու առողջարանի օգտագործումն ընդլայնելու ուղղությամբ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և նրա առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը զգալի չափով նպաստում էին նաև հասարակական գիտությունների զարգացմանը: Հենց այդ էր պատճառը, որ չնայած պատերազմի հետևանքով ստեղծված դժվարություններին, մեծարժեք գործեր ստեղծեցին Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը և ուրիշներ:

Այսպես, օրինակ, 1943թ. մայիսի 26-ին, երբ դեռ Անդրկովկասի մատույցներում շարունակվում էր Կովկասի համար նվաճող ճակատամարտը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն Գրիգոր

¹⁷⁰ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 22, թթ. 73 – 74:

Հարությունյանի առաջարկությամբ հատուկ որոշում ընդունեց Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» քառահատորյակը հրատարակելու մասին¹⁷¹: Շնորհիվ ձեռք առնված միջոցառումների, 1943 – 1945թթ. ընթացքում հաջորդականությամբ ավարտվեց հայագիտական մեծարժեք նշանակություն ունեցող այդ եզակի կոթող-աշխատության հրատարակությունը: Նրա հեղինակը 1943թ. նոյեմբերի 29-ին դարձավ ՀԽՍՀ ԳԱ առաջին, հիմնադիր 23 անդամներից (ակադեմիկոսներից) մեկը, 1945-ին պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ 1946-ին դարձավ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր: Պատերազմի տարիներին հայ ականավոր պատմաբան, բանասեր, աղբյուրագետ Հակոբ Մանանդյանը հրատարակեց «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» (1941թ. ռուսերեն), «Տիգրան Բ և Հռոմը» (1943թ., ռուսերեն) աշխատությունները, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի 1-ին հատորը (1945թ.): Հակոբ Մանանդյանը ևս ընտրվեց ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմում, իսկ 1945-ին պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով¹⁷²: Պատերազմի տարիներին իր բեղմնավոր աշխատանքը շարունակեց ականավոր լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, որը 1942թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն, հրատարակեց «Ընդհանուր լեզվաբանություն» (1939թ.), «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» (1940թ.), «Խեթական աստվածները հայերի մոտ» (1941թ.), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (1944թ.), «Հայաստան հայերի բնօրրան» (1945թ.) աշխատությունները: Լեզվաբան, գրականագետ, բանասեր Մանուկ Աբեղյանը, որը 1944 – 1946թթ. հրատարակեց «Հայոց հին գրականության պատմության» 1-ին և 2-րդ հատորները, աշխարհաբար թարգմանությամբ՝ «Վարք Մաշտոցի» (1941թ.) աշխատությունը, կազմեց և հրատարակության պատրաստեց «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի տարբերակները (1944 – 1945թթ.), «Հայոց լեզվի տեսություն» և այլ մեծարժեք գործեր: Սահվանից մեկ տարի առաջ Մանուկ Աբեղյանը ընտրվեց Հայաստանի ԳԱ ակադեմիկոս

¹⁷¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁷² Տե՛ս ՀՍՀ, հ. 7, ե., 1981, էջ 212 – 213:

(1943թ.): Իսկ երբ 1944թ. սեպտեմբերի 25-ին Երևանում մահացավ անվանի գիտնականը, ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտը ՀԿ(ք)Կ Կենտկոմի և կառավարության որոշմամբ կոչվեց Մանուկ Աբեղյանի անվամբ¹⁷³: 1943թ. ակադեմիկոս ընտրվեց նաև անվանի լեզվաբան և բանասեր Հրաչյա Աճառյանը: 1942թ. մինչև պատերազմի վերջը նա աշխատում էր «Հայոց անձնանունների բառարանի» վրա, որի 5 հատորներից երկուսը լույս տեսան 1942 – 1945թթ.: Նա այդ տարիներին շարունակել է աշխատել «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատության վրա, հրատարակել Նոր Ջուղայի, Պոլսի և Համշենի բարբառների քննությանը նվիրված մեծարժեք եզակի գործեր և այլն: Մահից (1953թ.) հետո ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը կոչվել է մեծանուն գիտնականի անունով¹⁷⁴: 1943-ին դոկտորական մտենախոսություն է պաշտպանել, ապա ակադեմիկոս դարձել ականավոր գրականագետ-քննադատ Արսեն Տերտերյանը. 1940 – 1945թթ. հրատարակվել են նրա «Րաֆֆու «Սամվել» պատմավեպը» (1940թ.), «Աբովյանի ստեղծագործությունը» (1941թ.), «Հայ հայրենասեր գրողներ» (1942թ.), «Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան», «Ռուս մեծ առակախոս-բանաստեղծ», «Հայ կլասիկներ» (1944թ.) աշխատությունները և այլն¹⁷⁵:

Գրիգոր Հարությունյանի ցուցումով աշխատանքային նորմալ պայմաններ էին ստեղծվել Լենինգրադից Երևան էվակուացված մի խումբ գիտնականների համար, որոնց թվում էին Բորիս Պիոտրովսկին, Կամելլա Տրևերը, Նիկոլայ Տոկարսկին: Ակադեմիկոս Բ.Բ.Պիոտրովսկին պատերազմի տարիներին արդյունավետ պեղումներ է կատարել Կարմիր բլուրում, 1944-ին հրատարակել «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը», ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Կ.Վ.Տրևերը հրատարակության է պատրաստել «Հին Հայաստանի մշակույթի պատմության ուրվագծեր (մթա 2-րդ – մթ 4-րդ դարեր)» աշխատությունը, 1941 – 1945թթ. Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի փոխնախագահ Ն.Ս.Տոկարսկին ավարտել է «Հին Հայաստանի

¹⁷³ Տես նույն տեղում, հ. 1, Ե., 1974, էջ 23:

¹⁷⁴ Տես նույն տեղում, էջ 268:

¹⁷⁵ Տես նույն տեղում, հ. 11, Ե., 1985, էջ 688:

ճարտարապետությունը» հիմնականում աշխատությունը, որը հրատարակվել է 1946թ. և այլն:

Ուստի պատահական չէր, որ պատերազմն ավարտվելուց հետո մի խումբ հայ գիտնականներ 1945թ. օգոստոսի 4-ին իրենց երախտագիտության խոսքն ասացին ՉԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Չարությունյանին. «Թանկագին Գրիգորի Արտեմևիչ. Չայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը հավաքվել է գիտական ընթացիկ հարցեր քննարկելու, ինչպես նաև ակադեմիայի թղթակից-անդամներ ընտրելու համար, Ձեզ՝ մեր ակադեմիայի բարեկամին, հղում է ջերմ ողջույն:

Ակադեմիան իր հիմնադրման պահից ամենօրյա աջակցություն է ստացել կուսակցության և Չայկ. ԽՍՀ կառավարության, ինչպես նաև անձամբ Ձեր կողմից, թանկագին Գրիգորի Արտեմևիչ:

Ձեզ է պատկանում թղթակից-անդամների ընտրությունների անցկացման նախաձեռնությունը, որն անկասկած կնպաստի ՉԽՍՀ գիտությունների ակադեմիայի զգալի չափով ամրապնդմանը: Ճիշտ այնպես Ղուբ օգնեցիք իրականացնելու մեր ցանկությունը թղթակից-անդամների ազատ տեղերի ավելացման հարցում և դրանով իսկ հնարավոր դարձրիք Չայկական գիտությունների ակադեմիայի կազմում ընդգրկել ավելի շատ մասնագիտությունների ներկայացուցիչների, ինչպես նաև արտասահմանում ապրող հայ գիտնականների:

Մենք ուրախ ենք նշել, որ ընտրված թղթակից-անդամների թվում ավագ, վաստակավոր գիտնականների թվում մենք ունենք գիտության երիտասարդ տաղանդավոր գործիչների մի հիանալի համաստեղություն, որոնք աճել են խորհրդային իշխանության տարիներին և արդեն բարձր տեղ են գրավում խորհրդային գիտության մեջ:

Ընտրելով միաժամանակ ավագ և երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, մենք դրանով իսկ ձգտում ենք կյանքում իրականացնել ավագ և երիտասարդ սերնդի գիտաշխատողների համագործակցության նշանակության վերաբերյալ կուսակցության ցուցումները:

Մենք համոզված ենք, որ հետագայում ևս, մեր ակադեմիայի ինչպես հին, այնպես էլ նոր ընտրված կադրերի ավելի արդյու-

նավետ օգտագործելու ասպարեզում, մենք հնարավորություն կունենանք օգտվելու Ձեր ցուցումներից:

Մենք խոսք ենք տալիս էլ ավելի բարձրացնել մեր գիտական աշխատանքի մակարդակը և այդ աշխատանքը ավելի շատ նպատակաուղղել մեր հանրապետության և մեր ամբողջ մեծ հայրենիքի շինարարության գործին...

Հայկ. ԽՍՀ ԳԱ իսկական անդամներ՝ Վիկտոր Համբարձումյան, Արտեմ Ալիխանյան, Լևոն Հովհաննիսյան, Վարդան Գուլբանյան, Միքայել Թումանյան, Իվան Եղիազարյան, Հակոբ Մանանդյան, Ստեփան Մալխասյան, Սահակ Կարապետյան, Կոստանդին Պաֆենհոլց»¹⁷⁶:

բ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմը, նրա առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանը և ՀԽՍՀ Ժողկոմխորհը Հայրենական մեծ պատերազմի տարիներին զգալի աշխատանք կատարեցին նաև ժողովրդական կրթության բնագավառում: Չնայած պատերազմի հետևանքով առաջացած օբյեկտիվ դժվարություններին (ուսուցիչների զգալի մասը մեկնել էր ռազմաճակատ, դպրոցական շենքերի մի մասը հատկացվել էր զինվորական հոսպիտալներին, ավագ դասարանցիների զգալի մասը աշխատանքի էր անցել արտադրության մեջ՝ փոխարինելով իրենց հայրերին ու ավագ եղբայրներին), կրթության համակարգը ոչ միայն դիմացավ այդ լուրջ փորձություններին և կարողացավ ապահովել ընդհանուր պարտադիր ուսուցման բնագավառում նախապատերազմյան շրջանում ձեռք բերած մվաճումները, այլև ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը վերակառուցելով պատերազմական պահանջներին համապատասխան, զգալի հաջողությունների հասավ սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառում: 1942 թ. ժողովրդական կրթության համար բաց թողնվեց 116,5 միլիոն ռուբլի, 1943թ.՝ 135,7, 1944թ.՝ 159,5 և 1945թ.՝ 211, 3 միլիոն ռուբլի: Դանդաղ, բայց անշեղորեն դպրոցներում աճեց նաև աշակերտների և ուսուցիչների թիվը: Այսպես, օրինակ, եթե 1941 – 1942

¹⁷⁶ ՀՀ ՀԲԿՊՊԿԱ, ֆ. 1, ց. 034, գ. 382, թ. 82:

ուսումնական տարում Հայաստանում գործում էր 1152 դպրոց, ուր աշխատում էին 10.370 ուսուցիչ և սովորում 228,5 հազար երեխա, ապա 1942 – 1943 ուս. տարում հանրապետության 1156 դպրոցներում աշխատում էին 9.900 մանկավարժ, սովորում 248,6 հազար աշակերտ: 1943 – 1944 ուս. տարում հանրապետությունում կար 1159 դպրոց, որտեղ աշխատում էին 11.980 ուսուցիչ, սովորում 233,6 հազար աշակերտ: Պատերազմի վերջին՝ 1944 – 1945 ուսումնական տարում Հայաստանում գործում էր 1164 դպրոց՝ 12.140 ուսուցիչով և 250 հազար աշակերտով¹⁷⁷: Ուսուցիչների համալրումը տեղի ունեցավ առաջին հերթին թոշակառու մանկավարժների, ինչպես նաև թշնամու կողմից ժամանակավորապես զավթված շրջաններից ընտանիքներով Հայաստան տեղափոխված մանկավարժների հաշվին: Ուսուցիչների համալրումը կատարվեց նաև մանկավարժական տեխնիկումների բարձր կուրսերի 620 և բուհերի 490 ուսանողների ժամկետից շուտ ուսուցչական աշխատանքի գործուղելու հետևանքով:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և կառավարության որոշմամբ՝ դպրոցական տարիքի բոլոր երեխաներին ուսուցման ցանցում ընդգրկելու նպատակով ծնողազուրկ երեխաների համար բացվեցին մանկատներ և պրոֆտեխնիկական ուսումնարաններ: Սովորողների մադումները կանխելու, պարտադիր ուսուցումն իրականացնելու նպատակով քաղաքային ու շրջանային խորհուրդների գործկոմները, կոլտնտեսությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկները ստեղծեցին զինծառայողների երեխաներին հագուստով, սննդամթերքով, դասագրքերով ու գրենական պիտույքներով օգնելու ֆոնդ: Այդ մարմինների ու հասարակության ամենօրյա հոգատարության շնորհիվ ուսումը թողած հազարավոր երեխաներ վերադարձան դպրոց, ապահովվեցին անհրաժեշտ դասագրքերով ու գրենական պիտույքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցական հասակի երեխաների մի մասը զբաղված է արտադրության մեջ, 1943 – 1944թթ. ուսումնական տարվանից սկսած ստեղծվեցին բաներիտ և գյուղերիտ դպրոցներ: 1944 – 1945 ուս. տարում հանրապետությունում գործում էին 28 բաներիտ և գյուղերիտ դպրոցներ: Չնայած պատերազմական դժվարին պայմաններին,

¹⁷⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, էջ 173:

Հայաստանում շահագործման հանձնվեց դպրոցական 12 շենք, 40 – 50 տոկոսով բարձրացվեց ուսուցիչների աշխատավարձը, դպրոցներում երեխաների ընդունում սահմանվեց 7 տարեկանից, մտցվեց աշակերտների առաջադիմության և վարքի գնահատման հինգբայան համակարգ, սահմանվեցին հասունության ատեստատի քննություններ, գերազանց առաջադիմության և օրինակելի վարքի համար՝ ոսկե և արծաթե մեդալներ: Պատերազմի հենց առաջին ուսումնական տարում հանրապետության դպրոցներում մտցվեց պարտադիր զինվորական ուսուցում: Այդ նպատակով 1941թ. սեպտեմբերի 8-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը ընդունեց համապատասխան որոշում¹⁷⁸: Մեկ տարի անց՝ 1942թ. նոյեմբերի 12-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը մի նոր որոշում ընդունեց՝ դպրոցներում և տեխնիկումներում սովորողների ռազմաֆիզիկական պատրաստության բարելավման միջոցառումների մասին¹⁷⁹: 1943 – 1944 ուս. տարում հանրապետության մի շարք դպրոցներում (Երևանում և Լենինականում) մտցվեց տղաների ու աղջիկների անջատ ուսուցում, որը շուտով իրեն չարդարացրեց և վերացվեց: Պատերազմի տարիներին մի շարք լուրջ ճշգրտումներ մտցվեցին ուսումնական ծրագրերում, ավելացվեցին ԽՍՀՄ պատմության հերոսական իրադարձություններին, խորհրդային ժողովրդի հեղափոխական պայքարին նվիրված նյութերին տրվող դասաժամերը: Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ Կարմիր բանակի և խորհրդային ողջ ժողովրդի պայքարը լայնորեն արտացոլվում էր տարբեր դասընթացների նյութերում, թեմատիկ շարադրություններում, վարժություններում, զրույցներում, արտադասարանական ընթերցանություններում, տարբեր միջոցառումներում:

Պատերազմն իր կնիքը թողեց նաև դպրոցի պիոներական և կոմերիտական կազմակերպությունների գործունեության վրա: Հանրապետությունում լայն տարածում ստացավ թիմուրական շարժումը: Թիմուրական խմբակները ստանձնում էին ռազմաճակատայինների ընտանիքների շեֆությունը, շաբաթօրյակներ էին կազմակերպում դպրոցներում և օգնում նրանց տնտեսական գործերին: Միայն Երևանում 1942թ. գործում էին 177 թիմուրական

¹⁷⁸ Տե՛ս ԴԴ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 030, գ. 33, ք. 14:

¹⁷⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 031, գ. 21, քք. 36 – 37:

ջոկատներ, որոնցում ընդգրկված էին 2000 պիոներ-դպրոցականներ, որոնք օգնում էին ճակատայինների ընտանիքներին, մշակում տնամերձ հողամասերը, կերակրում անասուններին, նորոգում բնակարաններ, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ խնամում աշխատող մայրերի երեխաներին: ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Գեղամ Ալեքյանին 1943թ. մայիսի 27-ին թիմուրական շարժման մասին ուղարկած հաշվետվության մեջ Ղափանի ՀԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար Ամասիա Չարությունյանը նշում է, որ շրջկենտրոնում և բոլոր գյուղերում գործում են 85 թիմուրական ջոկատներ, որտեղ ընդգրկված են 1350 պիոներ-դպրոցական, նրանք հատկապես մեծ օգնություն են ցույց տալիս ճակատայինների ընտանիքներին: Այսպես, օրինակ, միայն Շիկահող գյուղի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է 5 թիմուրական ջոկատ, որոնց մեջ ընդգրկված են 54 աշակերտներ: Նրանք ավագ ջոկատավար Անտիկա Չարությունյանի ղեկավարությամբ կարմիրբանակայինների ընտանիքների համար տեղափոխել են 350 բեռ փայտ, ցանկապատել 62 ճակատային ընտանիքի բանջարանոց, փորել 70 կարմիրբանակայինի ընտանիքի տնամերձ այգի և այլն¹⁸⁰:

Ընդհանուր առմամբ պատերազմի տարիներին հանրապետությունում գործել է 2123 թիմուրական ջոկատ, որտեղ ընդգրկված էին 22.777 պիոներ-դպրոցականներ, որոնք օգնություն ցույց տվեցին 7.088 ճակատայինի ընտանիքի¹⁸¹:

Պատերազմի տարիներին դպրոցականները նաև օգնում էին ռազմաճակատին. մասնակցում էին ռազմաճակատ ուղարկվող ծանրոցների պատրաստմանը, հավաքում մետաղի ջարդոն, շեֆական օգնություն ցույց տալիս հոսպիտալներին, օգնում վիրավորներին: Այդ մասին վկայում է նաև Գրիգոր Չարությունյանի որդեգիր աղջիկը՝ Նամին. «Պատերազմի տարիներին, – հիշում է նա, – (6 – 10 դասարաններ) մենք երաժշտական դպրոցի սաներս, օգնելու նպատակով լինում էինք հոսպիտալներում, համեզային ելույթներ էինք ունենում: Ես վիրավորների համար կարդում է Կ.Սիմոնովի «Սպասիր ինձ», «Հիշո՞ւմ ես դու, Այրոշա, Սնուլենշի-նայի ճանապարհները» և այլ բանաստեղծություններ»¹⁸²:

¹⁸⁰ ՀՀ ՀԶԿՊ ՊԿԱ, ֆ.48, ց. 13, գ. 297, քք. 14 – 16:

¹⁸¹ Նույն տեղում, գ. 416, ք. 22:

¹⁸² Նամի Սիկոյան, *Սիրով ու թախծով*, էջ 87:

Ղարոցականները շեֆական օգնություն էին ցույց տալիս նաև գերմանացիների կողմից գրավված տարածքներից Հայաստան էվակուացվածներին: Նամի Միկոյանի վկայությամբ, Երևան էին էվակուացրել պաշարված Լենինգրադից երեխաներ, որոնց համար ստեղծվել էր մանկատուն: Մանկատան երեխաների օգնության հարցերով հասարակական կարգով զբաղվում էր նաև Նամիի հորաքույր Նինան՝ Գրիգորի Հարությունյանի կինը: «Հորաքույրս մեզ՝ աշակերտներիս հրավիրեց, – գրում է նա, – որպեսզի օգնենք իրենց: Երեխաների գալու համար պատրաստում էինք շենքը, հագուստ էինք բերում, սպիտակեղեն, մթերքներ, ով ինչ կարող էր»¹⁸³: Բացի այդ Նինա Գրիգորևան պատերազմի տարիներին անվճար աշխատում էր Կոմիտասի անվան զբոսայգու տարածքում գտնվող մանկատանը որպես որբ երեխաների պահապան և դաստիարակ¹⁸⁴:

Պատերազմի տարիներին Հայաստանի շատ դպրոցներ հանդես եկան հայրենասիրական նախաձեռնություններով: Այսպես, օրինակ, Ստեփանավանի շրջանի ուսուցիչներն ու դպրոցականները 1944թ. Լենինգրադի դպրոցների վերականգնման ֆոնդ մուծեցին 400 հազար ռուբլի, Ղափանի շրջանի ուսուցչական և դպրոցական կոլեկտիվները՝ Օդեսայի դպրոցների համար՝ 200 հազար ռուբլի: Նրանց օրինակին հետևեցին Կիրովականի, Էջմիածնի և հանրապետության մյուս շրջանների ուսուցիչներն ու աշակերտները: Երևանի Ա.Ս.Պուշկինի անվան դպրոցի աշակերտների կոչով, դպրոց, որի սաներից էր Խորհրդային Միության հերոս օդաչու Սերգեյ Բուռնազյանը, հանրապետության աշակերտները հավաքեցին 120 հազար ռուբլի՝ «Հայաստանի պիոներիա» կործանիչ ինքնաթիռ արտադրելու համար: Էջմիածնի շրջանի դպրոցականները հավաքեցին ավելի քան 400 հազար ռուբլի՝ «Հայաստանի դպրոցական» տանկային շարասյան ֆոնդի համար: Հանրապետության դպրոցների աշակերտների զգալի մասը ամառային արձակուրդների ժամանակ մասնակցում էին գյուղատնտեսական աշխատանքներին, իրենց աշխատավարձը տրամադրելով երկրի պաշտպանության ֆոնդին:

Պատերազմի տարիներին ամառային արձակուրդների

¹⁸³ Նույն տեղում, էջ 88 – 89:

¹⁸⁴ Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը, էջ 249:

ընթացքում կոլտնտեսային դաշտերում աշխատեցին 305.360 պիոներ-դպրոցականներ, նրանք վաստակեցին 1.543.617 աշխօր և հավաքեցին 80.382,4 կգ հացահատիկի հասկ: Պատերազմի տարիներին դպրոցականները 530.000 ռուբլի տրամադրեցին շարժիչներ կառուցելու ֆոնդին¹⁸⁵: Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության դպրոցների հազարավոր ուսուցիչներ և սաներ տարբեր ռազմաճակատներում հերոսաբար մարտնչեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ և փառքով պսակեցին իրենց անունները: Ամբողջ երկրով մեկ տարածվեց Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ, լեգենդար օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, Պուշկինի անվան դպրոցի շրջանավարտ, կործանիչ օդաչու, Խորհրդային Միության հերոս Սերգեյ Բուռնազյանի, Կապանի շրջանի Ծավ գյուղի դպրոցի շրջանավարտ, Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի, Գորիսի շրջանի Տաթև գյուղի դպրոցի սան, Խորհրդային Միության հերոս Սուրեն Առաքելյանի, Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի դպրոցի սաներ, գրոհային օդաչու, Խորհրդային Միության հերոսներ Սամսոն Մկրտումյանի և Լիպարիտ Իսրայելյանի, Խորհրդային Միության հերոսներ՝ Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի դպրոցի սան Վահիկ Լևոնյանի, Լեմինականի թիվ 51 երկաթուղային միջնակարգ դպրոցի սաներ Աշոտ Ամատունու և Գրիգոր Փալանջյանի, Կիրովականի Վահագնի գյուղի դպրոցի սան Գառնիկ Վարդումյանի, Աշոցքի շրջանի Թորոսգյուղի դպրոցի սան Այդին Հարությունյանի, Ղափանի շրջանի Գեղանուշ գյուղի դպրոցի սան Մուշեղ Հարությունյանի, Ախուրյանի շրջանի Մարմաշեն գյուղի դպրոցի սան Հարություն Մկրտչյանի և ուրիշների անմահ սխրանքների լուրը: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի հատուկ ցուցումով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն 1945թ. հոկտեմբերի 9-ին որոշում ընդունեց Խորհրդային Միության հերոսներ դաստիարակած հանրապետության 14 դպրոցների պարգևատրման վերաբերյալ¹⁸⁶: Այդ որոշման համաձայն, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագա-

¹⁸⁵ Советская Армения в годы Великой Отечественной войны (1941 - 1945). Сборник документов и материалов, с. 323.

¹⁸⁶ Տե՛ս ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 25, գ. 38, ք. 146:

հուօթյան հրամանագրով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով պարգևատրվեցին հանրապետության սկզբում 14, ապա և 8 դպրոցներ, որտեղ սովորել կամ աշխատել էին Խորհրդային Միության ապագա հերոսները¹⁸⁷:

Գրիգոր Հարությունյանը հատուկ նշանակություն էր տալիս նաև հանրապետությունում զինվորական մասնագետ կադրերի պատրաստման գործին: Դեռևս 1939թ. սեպտեմբերին նրա ցուցումով Երևանում բացվեց թիվ 17 հրետանային դպրոցը, որտեղ 1941թ. սովորում էին 630 կուրսանտներ¹⁸⁸: Դպրոցն իր առաջին շրջանավարտները տվեց Կովկասի ճակատամարտի ծանր օրերին: Գ.Ա.Հարությունյանի առաջարկով 1940թ. Երևանում բացվեց նաև ռազմաօդային ուժերի միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին 600 կուրսանտներ¹⁸⁹: Դպրոցը նույնպես իր առաջին շրջանավարտները տվեց Կովկասի ճակատամարտի օրերին: Օդաչուական կադրեր էին պատրաստվում նաև Երևանի և Լենինականի ակրոակումբներում¹⁹⁰:

Գրիգոր Հարությունյանը մեծ կարևորություն էր տալիս նաև Սովորովյան զինվորական ուսումնարաններին, որոնք բացվեցին 1943թ. սեպտեմբերին: Պատերազմի տարիներին ՀԼԿԵՄ Կենտկոմի 1-ին քարտուղար Գեղամ Ալեքյանի վկայությամբ, ուսուցման առաջին տարում Հայաստանին հատկացվեց 60 տեղ: «Այդ առնչությամբ Գրիգոր Հարությունյանն ինձ ասաց, – հիշում է Ալեքյանը, – թե շատ ցանկալի է, որ հայ երիտասարդները շարունակեն մեր ժողովրդի ռազմական ավանդույթները, դառնան զինվորական խոշոր հրամանատարներ: Այդ տեսակետից սովորովյան ուսումնարաններն ունեն բացառիկ նշանակություն: Անհրաժեշտ է, որ կոմերիտմիության Կենտկոմը զինկոմի հետ այնպես կազմակերպի ընդունելության գործը, որ Սովորովյան ուսումնարաններ գնացողների 80 տոկոսը հայ լինի»¹⁹¹:

Պատերազմի տարիներին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի, նրա առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանի և կառավարության հոգատար

¹⁸⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», 17 հոկտեմբերի 1945թ.: Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, էջ 176:

¹⁸⁸ Տե՛ս ՀՀ ԼՊՊԿԱ, ֆ. 113, ց. 8, գ. 11, թթ. 33 – 35:

¹⁸⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 39:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 26, գ. 138, թթ. 1 – 15:

¹⁹¹ Գրիգոր Հարությունյան, Կյանքը և գործունեությունը, էջ 254:

վերաբերմունքի ու իրականացված մի շարք միջոցառումների շնորհիվ հանրապետության բուհերը շարունակում էին իրենց աշխատանքը: Պատերազմի տարիներին նրանք ժողովրդական տնտեսության համար պատրաստեցին 38.000 բժիշկ, ինժեներ, գյուղատնտես, անասնաբույժ, ուսուցիչ և այլ մասնագետներ: Այդ նույն ժամանակաշրջանում հանրապետության տեխնիկումներն ու միջնակարգ մասնագիտական մյուս հաստատություններն ավարտեցին 8.400 մասնագետներ, որոնք հաջողությամբ աշխատում էին արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, կուլտուր-լուսավորական հիմնարկություններում: Պատերազմի տարիներին ոչ միայն չփակվեց որևէ բուհ, այլև բացվեցին նորերը: Այսպես, օրինակ, եթե 1941թ. Հայաստանում գործում էր 9 բուհ, ապա պատերազմի վերջին՝ 1945թ., դրանց թիվը հասավ 12-ի. 1943 – 1945թթ. բացված նոր բուհերի թվում էին ռուսական մանկավարժական, զեղարվեստա-թատերական և ֆիզկուլտուրայի ինստիտուտները: Պետությունը, չնայած պատերազմական ժամանակաշրջանի բազմաթիվ դժվարություններին, մշտապես հոգ էր տանում բուհերի և տեխնիկումների դասախոսական կադրերի, ինչպես նաև ուսանողության մասին: 1942թ. մայիսի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը որոշում ընդունեցին «Բուհերի ընդունելության պլանի և բարձրագույն ուսումնական հաստատությունների ամրապնդման միջոցառումների մասին», համաձայն որի զգալի չափով թեթևացվեց բուհերի ընդունելության կարգը, միջոցառումներ իրականացվեցին ուսումնական հաստատությունների ուսումնադրատարական բազան պահպանելու համար: Արտոնություններ հաստատվեցին վիրավորվելու հետևանքով բանակից զորացրվածներին բուհեր ընդունելու համար, թոշակներ նշանակվեցին կարիքավոր ուսանողների և Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների համար: Բուհերի աշխատողների վրա տարածվեց արդյունաբերության մեջ աշխատող բանվորների մատակարարման կարգը, նրանց նույնպես տրվեցին մի շարք արտոնություններ, մի շարք բուհերում, պետական քննություններին զուգահեռ, մտցվեց դիպլոմային աշխատանքների պարտադիր պաշտպանություն:

զ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԿԵՍՏ, ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ,
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի տարիներին Գրիգոր Հարությունյանը չնայած մեծ ծանրաբեռնվածությանը, մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում գրականության և արվեստի բնագավառները, աջակցում գրողներին ու արվեստի աշխատողներին: Նախորդ բաժիններում արդեն նշել ենք հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի և ականավոր վիպասան Դերենիկ Դեմիրճյանի վաստակը գնահատելու հարցում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի կատարած դերը: Գր.Հարությունյանը բարձր էր գնահատում գրական խոսքի նշանակությունը, որն ավելի էր մեծացել պատերազմական պայմաններում: Ուստի պատահական չէր, որ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը գրողների առաջ խնդիր դրեց շրջադարձ կատարել դեպի հայրենասիրական թեմատիկան, գեղարվեստական երկերի մեջ պատկերել հայրենիքի ազատության և անկախության համար մղվող մարտերի հերոսներին, հայ ժողովրդի հերոսական պատմական անցյալը: Այդ խնդիրը հայ գրողները կատարեցին հաջողությամբ՝ ստեղծելով արվեստի չափանիշներին բավարարող մնայուն արժեքներ: Այդպիսի արժեքներից էին Ավետիք Իսահակյանի ռազմաշունչ բանաստեղծություններն ու հրապարակախոսությունը, Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Ստեփան Ջորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը, Նաիրի Ջարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ողբերգությունը և «Ձայն հայրենական» պոեմը, Հրաչյա Քոչարի պատմվածքներն ու ակնարկները, Մովսես Արագու արձակ պոեմներն ու պատմվածքները, Գեղամ Սարյանի, Աշոտ Վշտունու, Համո Սահյանի, Հովհաննես Շիրազի և Սիլվա Կապուտիկյանի քնարերգությունը և այլն: Գրականագետ Արսեն Տերտերյանը հրատարակեց «Հայ հայրենասեր գրողները. Ղազարոս Աղայան և Հովհաննես Թումանյան», «Ղևոնդ Ալիշանը և հայրենասիրությունը», Հովսեփ Կուսիկյանը՝ «Հայրենիքի պաշտպանության գաղափարը հայոց հին գրականության մեջ», Արամ Ղանալանյանը՝ «Հայրենական կռիվները և ֆոլկլորի հերոսները» արժեքավոր ուսումնասիրությունները և այլն: Գրիգոր Հարությունյանի

հովանավորությամբ 1944թ. լույս տեսավ բազմավաստակ հայագետ, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը, 1944 – 1945 թվականներին՝ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» չորս հատորները: Պատերազմական թեմատիկայով արժեքավոր ստեղծագործություններ ստեղծեցին ռազմաճակատային գրողներ Հրաչյա Քոչարը, Վախթանգ Անանյանը, Հմայակ Սիրասը, Հարություն Մկրտչյանը, Ստեփան Կուրտիկյանը, Գարեգին Բեսը, Բաբկեն Շահումյանը, Սերո Խանգադյանը, բանաստեղծներ Հրաչյա Հովհաննիսյանը, Արշալույս Սարոյանը, Ղևոնդ Կոմունիս, Գուրգեն Բոբյանը, Գևորգ Էմինը, Թաթուլ Հուրյանը և շատ ուրիշներ:

Անուրանալի է Գրիգորի Հարությունյանի օժանդակությունը արվեստի բոլոր բնագավառների աշխատողների նկատմամբ: Այդ մասին են վկայում Մարտիրոս Սարյանի, Արամ Խաչատրյանի, Թամարա Դեմուրյանի և շատ ուրիշների հուշերը: Դեռևս պատերազմի նախօրյակին, 1939 թվականին Գ.Ա.Հարությունյանի աջակցությամբ նշվել էր «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակը, Մոսկվայում անցկացվել հայկական արվեստի առաջին տասնօրյակը, որը մեծ նշանակություն էր ունեցել ինչպես երկրում հայ արվեստի գոհարների ճանաչման, այնպես էլ նրա հետագա զարգացման վրա: Թամարա Դեմուրյանի վկայությամբ, Գրիգոր Հարությունյանի գաղափարով էր, որ պատերազմի սկզբին ստեղծվել էր ժողովրդական երգ ու պարի և գուսանական հանույթները՝ Թաթուլ Ալթունյանի և Վաղարշակ Սահակյանի ղեկավարությամբ: 1943թ. Հայկական գուսանական երգի հանույթը կոչվեց Սայաթ-Նովայի անվան: 1945թ. փետրվարի 13-ին Գրիգոր Հարությունյանի առաջարկությամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն հատուկ որոշում ընդունեց ուշ միջնադարի հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը նշելու մասին¹⁹²: «Ձարմանալին այն է, – հիշում է Դեմուրյանը, – որ նա (Գր.Հարությունյանը – Կ.Հ.) մեծացել ու ձևավորվել է Հայաստանից դուրս, սակայն արյամբ և բնագոծվ ազգային էր... Նա ուշադիր էր նաև արվեստի այլ ոլորտների նկատմամբ... Նա բարեկամություն էր անում երիտասարդ կոմպոզիտորների, թատերագետների, նկարիչների

¹⁹² ՀՀ ԳԵՎԹ ՊԿԱ, ֆ. 1, ց. 25, գ. 16, թ. 164:

հետ...»¹⁹³: Երիտասարդ արվեստագետներին Գ.Չարությունյանի կողմից հովանավորելու մասին է վկայում աշխարհահռչակ երգահան Արամ Խաչատրյանը. «Արվեստը նա սիրում էր. գերազանց զգում էր, հասկանում էր, – հիշում է Արամ Խաչատրյանը, – և երբ նա ղեկավարեց հանրապետությունը, հայկական արվեստի համար շատ բաներ արեց: Ժողովուրդը նրան կոչում էր Գրիգոր-չինարար, և դա պատահական չէր. իսկապես նա շատ կառուցեց, բայց կրկին անգամ, եթե անդրադառնանք Չայաստանի մշակութային զարգացմանը, չենք կարող ամտեսել նրա դերը: Անժխտելի էր, օրինակ, նրա մեծ դերը օպերային թատրոնի հաջողությունների մեջ: Նրա օրոք ստեղծվեցին օպերաներ, բալետներ, ռուսական, արևմտյան դասական գործեր, ի հայտ եկավ իսկական օպերային թատրոն, հրավիրվեց երաժշտավար Միքայել Թավրիզյանը, թատրոնում հավաքվեցին լավ ծայներ: Երիտասարդ Պավել Լիսիցյանը իր գործունեությունը սկսեց Երևանի օպերային թատրոնում այն ժամանակ, երբ Արութինովը ղեկավարում էր հանրապետությունը: Այն ժամանակ էլ սկսեց երգել, հետագայում արդեն աշխարհահռչակ, փայլուն Ջառա Դոլուխանյանը»¹⁹⁴:

Արամ Խաչատրյանը բարձր է գնահատել Գրիգոր Չարությունյանի դերը անձամբ իր երիտասարդ կոմպոզիտորին Չայաստան հրավիրելու և նրա արվեստը հովանավորելու գործում: «Որպես կոմպոզիտոր, ես մեծ առաջընթաց ապրեցի, որի համար շնորհակալ եմ Գրիգոր Արտեմիչին, որը նախ և առաջ իմ աշխատանքի ընթացքում ստեղծեց ամենաբարենպաստ պայմանները, – հիշում է աշխարհահռչակ կոմպոզիտորը, – բայց ես այսօր ուզում եմ հիշել մի այլ բան ևս: Ես հայ եմ, ծնվել եմ Վրաստանում, Վրաստանից մեկնել եմ Մոսկվա. իսկ արդեն Մոսկվայից ես եկա Չայաստան՝ Երևան. սակայն հավանաբար նախ, այն ժամանակ երիտասարդներին օգնելու հնարավորությունները մեծ չէին, երկրորդը, գուցե և իմ ընդունակությունները հայտնի չէին, բայց պետք է ասեմ, որ ինձ չհաջողվեց շփվել ոչ հայկական պաշտոնական, ոչ էլ երաժշտական շրջանակների հետ: Եթե կարելի է ասել, ես «ոչ հայ էի», մերժված անձ էի: Եվ միայն Արութինովն էր, որ կապեց ինձ Չայաստանին, ստիպեց ինձ մտածել և հպարտանալ նրանով, որ ես հայ եմ: Նա

¹⁹³Նամի Միկոյան, *Միտով ու թախտով*, էջ 124:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 122 – 123:

մի մարդ էր, որը ես կասեի, կապեց ինձ հողին. ի դեպ նա կապեց ինձ ոչ միայն այն ամենին, ինչ ես պատմեցի և դեռ կպատմեմ, այլև աջակցեց, որ ես ինձ լիարժեք իմ հայրենիքի քաղաքացին զգամ: Գրիգոր Արտեմիչի կարգադրությամբ ինձ Յայաստանում կառավարության կողմից առանձնատուն շնորհվեց՝ բաղկացած հինգ սենյակից և մրգատու այգուց... Այնպես որ Գրիգոր Արտեմիչը իմ կենսագրության մեջ, նույնիսկ իմ արվեստի ուղղության առումով հսկայական դեր խաղաց... քանի որ շնորհիվ նրա ես սկսեցի մտածել, որ հայկականը գլխավոր հատիկն է, որը պետք է արտացոլվի իմ արվեստում»¹⁹⁵: Արամ Խաչատրյանը ոչ միայն բարձր է գնահատել Գրիգոր Յարությունյանի խաղացած դերը իր կյանքում և արվեստում, այլև տպավորիչ ձևով նկարագրել նրա արտաքինը. «Շատ գեղեցիկ տղամարդ էր. բարձրահասակ, սլացիկ, լայնաթիկունք, խելացի, ազնվաբարո դեմքով, խելոք, թափանցող աչքերով, ուշադիր մարդկանց նկատմամբ... Խոսում էր նա համեստ, կարելի է ասել առանց մեծամտության, կարծես թե հարցադրման կարգով... Ես միշտ ինձ վրա մեծ տպավորություն է թողել»¹⁹⁶:

Գրիգոր Յարությունյանը մեծ դեր է խաղացել նաև Մարտիրոս Սարյանի կյանքում: «Այսօր, երբ մտահայացքս դարձնում եմ այդ տարիներին, – հիշում է վարպետը, – Գրիգոր Յարությունյանի կերպարը իմ առջև է հառնում որպես իրական արարող ղեկավարի կերպար, որը իսկական աշխատանքային եռանդով լիցքավորում էր ողջ հանրապետությունը: Հիշում եմ մեր այդ ժամանակվա բազմաթիվ հասարակական-քաղաքական խնդիրների վերաբերյալ քննարկումները իմ բարեկամ, Յայաստանի մեծագույն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ: Իսահակյանը շատ բարձր էր գնահատում Յարությունյանի գործունեությունը և մի անգամ, համեմատության համար կոչեց նրան «Գրիգոր-չինարար»: Իմ յուրաքանչյուր անձնական հանդիպումը Յարությունյանի հետ ինձ համար նրա նկարագրի վրա ավելացնում էր մի նոր երանգ՝ այդ մարդու էության իմ ամբողջական ընկալման համար... Յարությունյանի հետ ամեն մի հանդիպման ժամանակ ես նկատում էի, որ նա դառնում էր ավելի իմաստնացած և նպատակամղված մարդ: Երբ ես առաջարկեցի ինձ ժամանակ

¹⁹⁵ *Նույն տեղում:*

¹⁹⁶ *Նույն տեղում:*

հատկացնել նկարելու համար իր դիմանկարը, նա խորհուրդ տվեց ավելի շուտ նկարել առաջավոր բանվորների, կոլտնտեսականների և ընդհանրապես աշխատավորների դիմանկարներ: «Կյանքը կառուցում են նրանք» եզրակացրեց Գրիգոր Արտեմիչը:

Ինձ կյանքում վիճակված էր շատ ծանր փորձություններ: Դա այն տարիներին էին, երբ իմ կողմից սնուցված արվեստն ու շատ ստեղծագործական սկզբունքներ սխալ էին համարվում, երբ իմ աշխատանքները և գեղարվեստական աշխարհայացքը ընդունում էին անվստահությամբ: Եվ ահա, հենց այդ տարիներին ինձ վստահեցին շատ պատասխանատու գործ՝ ընտրեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Ինձ ընտրեց ժողովուրդը (ես ընտրվել եմ երեք գումարումներին), բայց իմ նկատմամբ վստահությունը գալիս էր իհարկե վերևներից: Այդ վստահությունը ինձ համար իմ արվեստի իսկական ճանաչման արտահայտությունն էր: Իսկ Հարությունյանի կողմից ճանաչումը պաշտպանեց ինձ և իմ արվեստը անբարյացակամների տարբեր գրոհներից:

Չեմ կարող առանց հուզմունքի հիշել իմ նկատմամբ Հարությունյանի վերջին հիանալի արարքի մասին: Դա այն տարին էր, երբ Հարությունյանը հեռանում էր Չայաստամից: Մեկնելուց առաջ նա ինձ ուղարկեց ներկեր, ընդ որում շատ արժեքավոր և դեֆիցիտ: Ես անչափ զգացված էի նրա ուշադրությունից, բայց հետո, տեղեկանալով, որ ազատ ժամանակ ինքն էլ է զբաղվում գեղանկարչությամբ, և որ այդ ներկերը նրա սեփականն էին, իմ երախտիքը կրկնապատկվեց: Ահա թե որտեղից էր գալիս արվեստի նկատմամբ նրա հոգատարությունը:

Մինչ օրս էլ Գրիգոր Հարությունյանը ինձ համար մնում է որպես ազնիվ և մեծահոգի պետական գործչի մարմնավորում, որի հիմնական կողմնացույցը ժողովրդի շահերն էին»¹⁹⁷:

Արվեստի հսկաների այս խոսքերից հետո մեզ թվում է, որ այլևս կարիք չկա գովեստի խոսքեր բերել Գրիգոր Հարությունյանի գործունեության վերաբերյալ, որոնք ասվել են արվեստի բնագավառի այլ աշխատողների կողմից: Դրանք շատ-շատ են և բոլորն էլ միահամուռ նշում են այն մեծ դերը, որ խաղացել է

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 125 – 126: (Այստեղ հարկ ենք համարում հիշեցնել, որ Գրիգոր Հարությունյանը ժամանակին սովորել էր նկարչական դպրոցում և հիանալի հասկանում էր կերպարվեստը, անձամբ լավ նկարում էր):

Գրիգոր Հարությունյանն արվեստի հովանավորման գործում՝ հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Հայտնի է, որ պատերազմի տարիներին, չնայած տնտեսական սուղ պայմաններին, ոչ միայն չդադարեց գոյություն ունեցող արվեստի օջախների գործունեությունը, այլև հիմնադրվեցին նորերը: Այսպես, օրինակ, 1942թ. Երևանում բացվեց երաժշտական կոմեդիայի թատրոնը, որը հետագայում կոչվեց Հակոբ Պարոնյանի անունով, իսկ 1944թ., ինչպես արդեն նշել ենք, Երևանում ուսանողների առջև իր դռները բացեց գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Հանրապետության կառավարության աջակցությամբ 1944թ. Հայաստանում տեղի ունեցավ Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված համամիութենական 4-րդ փառատոնը և գիտահետազոտական կոնֆերանս, որոնք խոշոր իրադարձություն էին երկրի գեղարվեստական կյանքում: ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից Երևան հավաքվեցին շեքսպիրագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչներ: Հայկական իրականության մեջ Շեքսպիրի ժողովրդականության լավագույն ապացույցն էր Հայաստանի հինգ թատրոնների մասնակցությունը փառատոնին: Շեքսպիրը հնչեց ոչ միայն ռուսերեն, այլև հայերեն, բեմադրվեց նաև օպերայի թատրոնում: Գիտաժողովը բարձր գնահատեց Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնի «Օթելլո» և «Համլետ», Լեմինականի թատրոնի՝ «Տասներկուերորդ գիշեր», Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի՝ «Ամառային գիշերվա երազ» ներկայացումները, հայ դերասանների և բեմադրիչների վարպետությունը: Բեմում չարի ու անմարդկայինի դեմ էին ելել Վաղարշ Վաղարշյանի և Գուրգեն Ջանիբեկյանի Համլետը, Հրաչյա Ներսիսյանի և Գուրգեն Ջանիբեկյանի Օթելլոն, Ռուզան Վարդանյանի և Սյուզան Գարագաշի Դեզդեմոնան ու Օֆելյան, չարի կատարյալ մարմնացում էր Ավետ Ավետիսյանի Յագոն և այլն: Շեքսպիրին մեկնաբանելիս յուրովի բացահայտվեց Արշակ Բուրջալյանի և Վարդան Աճեմյանի բեմադրական արվեստը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հիմնականում բեմադրվեցին ֆաշիստական զավթիչների դեմ խորհրդային մարդկանց հերոսական պայքարը, ինչպես նաև հայ ժողովրդի հերոսական անցյալը վեր հանող գործեր: Պատերազմական թեմային էին նվիրված Նաիրի Ջարյանի «Վրեժ», Ալեքսանդր

Արաքսմանյանի «Չրաբխի վրա», Գեղամ Սարյանի «Անտառի խորքում», Արմեն Գուլակյանի «Ցասում», Գրիգոր Յաղջյանի «Զոյա», Աշոտ Շայքոնի «Թիկունքում», Կոստանդին Սիմոնովի «Ռուս մարդիկ», Լ.Լենոնովի «Արշավանք», Ալեքսանդր Կորնեյչուկի «Ռազմաճակատ» և այլ պիեսներ: Հայ բեմում պատերազմի տարիներին մեծ հաջողությամբ բեմադրվում էին Մուրազյանի «Ռուզան» և «Գևորգ Մարզպետունի», Ռաֆֆու «Սամվել», Դերենիկ Դեմիրճյանի «Երկիր հայրենի» և «Դրաստամատ» երկերը, որոնք նվիրված էին հայ ժողովրդի հերոսական պատմական անցյալին: Մեծ վարպետությամբ և սիրով էին կերտում իրենց հերոսների կերպարները տաղանդավոր դերասաններ Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Ավետ Ավետիսյանը, Յուլյա Ամերիկյանը, Դավիթ Մալյանը, Համբարձում Խաչանյանը, Օրի Բունիաթյանը, Գուրգեն Գաբրիելյանը, ժողովրդական դերասանուհի Հասմիկը (Թագուհի Հակոբյան), Արուս Ոսկանյանը, Ռուզաննա Վարդանյանը, Սյուզան Գարագաշը, Արուս Ասրյանը և շատ ուրիշներ:

Ռազմաճակատային և հայրենասիրական բնույթի բեմադրությունները տեղ ունեին ոչ միայն մայրաքաղաքի և Լենինականի, այլև շրջանային և գյուղական բոլոր թատրոններում:

Պատերազմի պայմաններում, երբ օրվա հիմնական նշանաբանն էր «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար», հիրավի հայրենասիրական շնորհակալ աշխատանք կատարեցին հայկական կինոյի աշխատողները: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ցուցումով, նրանք պատերազմի առաջին շրջանում զգալի աշխատանք կատարեցին վավերագրական կինոֆիլմեր ստեղծելու ուղղությամբ: Կինոսպերատորների և կինոռեժիսորների հատուկ խմբեր մեկնեցին ռազմաճակատ: Նրանք եղան Կերչում, Թամանում, Սևաստոպոլում, Մերձբալթիկայում, Լեհաստանում, Օդերի ափին, Բեռլինում, վավերագրական ֆիլմեր նկարեցին հայկական 390-րդ և 89-րդ հրաձգային դիվիզիաների, լեգենդար օդաչու, կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի մարտական ուղիների, հանրապետության թիկունքի աշխատողների հերոսական առօրյայի վերաբերյալ և այլն: 1943 – 1944թթ. Հայկինոն նկարահանեց «Դավիթ Բեկ» գեղարվեստական լիամետրաժ կինոնկարը՝ Համո Բեկ-Նազարյանի բեմադրությամբ: Գլխավոր դերերում հանդես էին գալիս Հրաչյա Ներսիսյանը

(Դավիթ Բեկ), Դավիթ Մալյանը (Ստեփանոս Շահումյան), Ավետ Ավետիսյանը (Մելիք Ֆրանգյուլ) և շատ ուրիշ տաղանդավոր դերասաններ, որոնք արժանացան կառավարական պարգևների: «Դավիթ Բեկի» տրամաբանական շարունակությունն էր «Երկիր հայրենի» ֆիլմը (1945թ.), որի նկարահանումներին մասնակցեց նաև խորհրդային ականավոր կինոռեժիսոր Ալեքսանդր Դոլժենկոն:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և կառավարության հոգատարության շնորհիվ պատերազմի տարիներին զարգացավ նաև հայ երաժշտական արվեստը: Լայն տարածում ստացան արտիստների և ստեղծագործական կոլեկտիվների անմիջական ելույթները ռազմաճակատում: Նախորդ բաժիններում մենք արդեն նշել ենք Մերծբալթյան ռազմաճակատում Հայաստանի երգի-պարի համույթի (ղեկավար՝ Թաթուլ Ալթունյան) և Հայաստանի պետական ջազ-նվագախմբի (ղեկավար՝ Արտեմի Այվազյան) ելույթների մասին: Պատերազմի տարիներին փայլուն հաջողություններով նշանավորվեց Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի թատրոնի գործունեությունը՝ ականավոր դիրիժոր Միքայել Թավրիզյանի ղեկավարությամբ: Պատերազմի տարիներին թատրոնը ստեղծեց 14 նոր բեմադրություն: Արամ Խաչատրյանի վկայությամբ, այդ հաջողությունների գործում իր արժանի ավանդն ուներ Գրիգոր Հարությունյանը: Նրա առաջարկությամբ էր, որ կազմակերպվեց Հայկական ԽՍՀ պետական հիմնի ստեղծման մրցանակաբաշխությունը: Առաջին մրցանակը շահեց Արամ Խաչատրյանը (խոսք՝ Սարմենի): Նրա երաժշտությամբ Հայկական ԽՍՀ պետական հիմնը առաջին անգամ հանդիսավոր կերպով հնչեց 1944թ. օգոստոսի 12-ին¹⁹⁸:

Պատերազմի տարիներին զգալի հաջողությունների հասան հայ նկարիչները: Մենք արդեն մեջբերում կատարեցինք ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանից, որը երախտագիտությամբ էր հիշում իր հանդեպ Գրիգոր Հարությունյանի ցուցաբերած հոգատարությունը: Այդ ծանր տարիներին մեծանուն վարպետի նշանակալից գործերն են «Ինքնանկարը», ծովակալ Յովհաննես Իսակովի, ակադեմիկոս Յովսեփ Օրբելու դիմանկարները, «Պայծառ ծաղիկներ», «Նվեր ռազմաճակատից

¹⁹⁸ Տե՛ս «Սովետական Հայաստան», 13 օգոստոսի 1944:

վերադարձողներին» մեծածավալ նատյուրմորտները և այլն: Մեծարժեք գործեր ստեղծեց Դիմիտրի Նալբանդյանը: Նրա «Գնդապետ Ջաքիյանի վերջին հրամանը» մեծակտավ պատկերը, «Նամակ ռազմաճակատից», «Նվեր ռազմաճակատին» ժանրային բնույթի պատկերումները այսօր էլ չեն կորցրել իրենց գեղարվեստական արժանիքները: Պատերազմի տարիներին Դիմիտրի Նալբանդյանի ղեկավարությամբ երևանում գործում էր երիտասարդ նկարիչների մի խումբ, որը «ՏԱՍՍ-ի պատուհանի» օրինակով, խորհրդային ինֆորմբյուրոյի հաղորդագրությունների և ՏԱՍՍ-ի նյութերի հիման վրա ստեղծեց հակաֆաշիստական ծաղրանկարներ ու պլակատներ: Հայտնի է, որ Գրիգոր Հարությունյանը անձամբ հովանավորել է Դիմիտրի Նալբանդյանին, 1943 թվականին նրան Թբիլիսիից հրավիրել երևան և ստեղծագործելու բարենպաստ պայմաններ ստեղծել: Պատերազմի տարիներին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի անձնական աջակցությունն էին վայելում Գաբրիել Գյուրջյանը, Հակոբ Կոջոյանը, Էդուարդ Իսաբեկյանը, Մարիամ Ասլանազյանը, քանդակագործներ Արա Սարգսյանը, Սուրեն Ստեփանյանը, Այծեմնիկ Ուրարտուն, Նիկողոս Նիկողոսյանը և ուրիշներ:

Չնայած պատերազմի տարիներին թուլացավ ճարտարապետության բուռն զարգացումը ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում, այնուամենայնիվ պատերազմի առաջին շրջանում հանրապետության ճարտարապետները զգալի աշխատանք կատարեցին ռազմապաշտպանական շինարարության, ինչպես նաև աղբյուր-հուշարձանների կառուցման բնագավառում: Գրիգոր Հարությունյանի անմիջական հովանավորությամբ պատերազմի տարիներին ճարտարապետներ Գևորգ Քոչարի և Ռաֆայել Իսրայելյանի նախագծերով իրականացվեց «Արարատ» տրեստի գինու կոմբինատի մառանների շինարարության շարունակությունը: Պատերազմական ժամանակների ինժեներական խոշորագույն կառույց է «Հաղթանակ» կամուրջը՝ Հրազդանի գեղատեսիլ կիրճում: Գրիգոր Հարությունյանը կամուրջի հեղինակ՝ ինժեներ Ս.Հովնանյանին, ճարտարապետներ Ա.Սազմանյանին, Ս.Ասատրյանին, Ս.Սաֆարյանին, քանդակագործ Ա.Սարգսյանին ամենօրյա օգնություն էր ցույց տալիս կառույցը ժամկետին ավարտելու համար: Գր.Հարությունյանի անմիջական

նախաձեռնությամբ երևանում իրականացվեցին քաղաքա-
շինական կարևոր միջոցառումներ, որոնցից էին Բաղրամյան
փողոցի բացումը, մատենադարանի և Բյուրականի աստղա-
դիտարանի շենքերի նախագծումը և շինարարական
աշխատանքների սկսումը, Ջանգվի ձորում մանկական երկա-
թուղու զբոսայգու և այն քաղաքին միացնող թունելի կառուցա-
պատման, այնտեղ պատանի հերոսների հիշատակը հավերժաց-
նող աղբյուր-հուշարձանների տեղադրման, մայրաքաղաքի
կանաչապատման աշխատանքները և այլն:

Հայրենական պատերազմի տարիներին Գրիգոր Հարու-
թյունյանի տեսադաշտում էր գտնվում նաև Հայաստանի առող-
ջապահության բնագավառը: ՀԿ(Բ)Կ Կենտկոմը պատերազմի
տարիներին բազմաթիվ որոշումներ ընդունեց հանրապետու-
թյունում գործող առողջապահական հիմնարկների աշխատանքի,
բժիշկների և բուժաշխատողների սոցիալ-տնտեսական պայման-
ների բարելավման ուղղությամբ: Շնորհիվ ժամանակին ձեռք
առնված միջոցառումների, պատերազմի տարիներին, ինչպես
արդեն նշեցինք, հանրապետության բնակչությունը զերծ մնաց
համաճարակներից: Բացի այդ, գործող 94 հիվանդանոցներում և
25 հոսպիտալներում բուժվեցին ավելի քան 120 հազար վիրավոր
զինվորներ ու սպաներ, որոնց զգալի մասը կրկին համալրեց
գործող բանակի շարքերը, իսկ մյուս մասը աշխատանքի անցավ
արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում,
ժողովրդական կրթության, գիտության, մշակույթի հիմնարկներում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին էական
առաջընթաց նկատվեց հայ առաքելական եկեղեցու կյանքում:
Շնորհիվ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ
արքեպիսկոպոս Չորեքյանի ազգապահպան քաղաքականության
և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի
բարեհաճ վերսբերումների, հայ առաքելական եկեղեցին սկսեց
աստիճանաբար վերադարձնել 1920 – 1930-ական թվականներին
անարդարացի կորցրած իր հեղինակությունը: 1943թ.
հոկտեմբերին Գրիգոր Հարությունյանը դիմում է ՀամԿ(Բ)Կ
Կենտկոմի քարտուղար Գ.Ս.Սալենկովին՝ Հայաստանի ժողկոմ-
խորհին կից Հայ եկեղեցու գործերի խորհուրդ ստեղծելու
միջնորդությամբ¹⁹⁹: 1943թ. հոկտեմբերի 29-ին ՀամԿ(Բ)Կ

¹⁹⁹ ԳԳ ԴԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 032, գ. 31, ք. 5:

Կենտկոմը դրական լուծում է տալիս այդ միջնորդությանը: Նոյեմբերի 10-ին ՀԿ(ք)Կ Կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում ՀԽՍՀ ժողկոմխորհին կից Հայ եկեղեցու խորհուրդ ստեղծելու մասին. խորհրդի նախագահ է նշանակվում Սուրեն Ներսեսի Յովհաննիսյանը²⁰⁰:

Կրոնի նկատմամբ խորհրդային պետության քաղաքականությունն իրականացնող այդ մարմնի ստեղծումը կարևոր դեր խաղաց հանրապետության կառավարության և կրոնական կազմակերպությունների միջև կապ հաստատելու գործում: Գրիգոր Հարությունյանի միջնորդությամբ 1944թ. հունվարից սկսեց լույս տեսնել «Էջմիածին» կրոնաբանասիրական ամսագիրը: 1945թ. փետրվարի 13-ին ՀԿ(ք)Կ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց Վաղարշապատի շրջանի և Վաղարշապատ քաղաքի նախկին անվանումը վերականգնելու մասին. հիշեցնենք, որ մինչև 1928թ. շրջանը կոչվում էր Էջմիածնի շրջան, իսկ քաղաքը՝ Էջմիածին: Գրիգոր Հարությունյանի անձնական միջնորդության շնորհիվ 1945թ. ապրիլի 19-ին Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին Կրեմլում ընդունեց Ի.Վ.Ստալինը: Ստալինը բարձր գնահատեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հայրենասիրական գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հատկապես «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյունների ստեղծման նպատակով արտասահմանի հայության շրջանում դրամական հանգանակություն կազմակերպելու, հայրենասիրական բնույթի բազմաթիվ կոչերի հրապարակման համար: Արքեպիսկոպոս Չորեքչյանը Ստալինին ներկայացրեց 11 կետից բաղկացած դիմում, որտեղ խնդրվում էր վերականգնել սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը, ս. Էջմիածնին վերադարձնել նախկին հոգևոր ճեմարանի գրադարանը, թույլ տալ ս. Էջմիածնին ունենալ իր տպարանը՝ հոգևոր ճեմարանի դասագրքերը, եկեղեցական գրքեր, Կաթողիկոսի կոնդակները, «Էջմիածին» հանդեսը և եկեղեցական օրացույցը տպագրելու համար, որոշել Էջմիածնի վանքի սահմանները, ս. Էջմիածնին վերադարձնել «Հռիփսիմե», «Գեղարդ» և «Խոր Վիրապ» վանքերը, թույլ տալ Պետքանկի Երևանի բաժանմունքում բացել ս. Էջմիածնի հատուկ

²⁰⁰ Նույն տեղում:

օտարերկրյա վալյուտային հաշիվ և այնտեղ կենտրոնացնել ս. էջմիածնի անվամբ արտասահմանյան թեմերից ստացվող դրամական միջոցները և այլն: Ստալինը արքեպիսկոպոս Չորեքչյանի դիմումի վրա մակագրեց, որ ինքը համաձայն է բոլոր պահանջների հետ²⁰¹: Ինչպես ցույց տվեց կյանքը, Ստալինը տեր եղավ իր խոստումին: Մոսկվայի կարգադրությամբ Հայաստանի պետական մարմինները աստիճանաբար սկսեցին ս. էջմիածնին վերադարձնել պահանջված վանքերն ու եկեղեցական շինությունները, սփյուռքի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռվեց մասնակցել Մայր Հայրենիքի եկեղեցական ժողովներին և վերջապես 1945թ. հունիսի 16 – 22-ը էջմիածնում տեղի ունեցավ Ազգային եկեղեցական ժողով, որն Ամենայն հայոց կաթողիկոս ընտրեց Գևորգ 6-րդ Չորեքչյանին²⁰²: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ հաշվի առնելով վեհափառի մեծ ծառայությունները Հայրենիքի պաշտպանության գործում՝ հատկապես Կարմիր բանակի օգտին դրամական հանգանակություններ կազմակերպելու և տանկային շարասյուներ կառուցելու բնագավառում, Գրիգոր Հարությունյանի առաջարկությամբ Գևորգ Չորեքչյանը պարգևատրվեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: Կաթողիկոսը այն մշտապես հպարտությամբ էր կրում իր կրծքին: Այդ մասին են վկայում ժամանակակիցները, ինչպես նաև փաստավավերագրական կինոխրոնիկան:

*

*

*

1945թ. մայիսի 2-ին ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը անձնատուր եղավ խորհրդային զորքերի առջև: Այդ հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև Հայկական 89-րդ Թամանյան եռակի ջբանշանակիր հրաձգային դիվիզիան, որի մարտիկները հայկական խրոխտ քոչարին պարեցին ռայխստագի պատերի տակ, իսկ շատերն էլ իրենց անունները դրոշմեցին այնտեղ: Մայիսի 8-ի գիշերը լույս 9-ի

²⁰¹ Տե՛ս ԳԳ ՊՊԿԱ, ֆ. 409, ց. 1, գ. 739, թթ. 17 – 19:

²⁰² Տե՛ս «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1945:

առավոտյան ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերի ներկայացուցիչները Բեռլինի Կառլսհոբստ արվարձանում ստորագրեցին անվերապահ կապիտուլյացիայի ակտը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945թ. մայիսի 9-ի հրամանագրով, մայիսի 9-ը համարվեց Հաղթանակի օր: Հայրենական մեծ պատերազմն ավարտվեց: Խորհրդային բոլոր ժողովուրդները, որոնց թվում և հայ ժողովուրդը, ցնծությամբ ընդունեցին հաղթանակի լուրը: Հայաստանի բոլոր քաղաքներում ու գյուղերում ժողովրդական լայն զանգվածները դուրս եկան հրապարակներ ու փողոցներ: Շենքերի վրա բարձրացվեցին հաղթանակի ալ-կարմիր դրոշները: Ամենուրեք թնդում էր ուրախության երգն ու պարը: Գործարաններում, հիմնարկ-ծեռնարկություններում տեղի ունեցած աշխատավորների բազմամարդ միտինգներ: Մայիսի 8-ի գիշը՝ լույս 9-ի առավոտը ցնծության օր էր նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի համար, որը 1418 օր շարունակ, առանց հանգստի ու արձակուրդի, լուռ տանելով օրեցօր աճող հիվանդության ցավերը, անհամբեր սպասել էր այդ բաղձալի օրվան՝ իր ուժերն ու եռանդը նվիրելով պատմական Հաղթանակի կռման գործին:

*
* *
*

Այսպիսով, ամփոփելով Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի մասին մեր ուսումնասիրությունը, գալիս ենք այն եզրակացության, որ, չնայած պատերազմի հետևանքով առաջացած օբյեկտիվ դժվարություններին, նա կարողացավ հմտորեն կազմակերպել և ղեկավարել ռազմամոբիլիզացիոն և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ռազմական ռեչևերի վրա արագորեն փոխադրելու ամենաառաջնահերթ և կարևոր աշխատանքները: Գ.Ա.Հարությունյանի ղեկավարությամբ Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի մակարդակը պատերազմի ամենածանր տարիներին ամգամ, ոչ միայն չնվազեց, այլ,

ընդհակառակը, աճեց: Պատերազմի տարիներին շարունակվում էր խոշոր գործարանների ու ֆաբրիկաների կառուցումը, չէին դադարում քաղաքների բարեկարգման աշխատանքները: Պատերազմի ժամը տարիներին Գր.Հարությունյանը մշտական ուշադրություն է նվիրել հանրապետության գիտության, կրթության, գրականության, արվեստի, առողջապահության բնագավառների զարգացմանը:

Հայ իրականության մեջ կարևոր իրադարձություն էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացումը 1943թ. նոյեմբերին: Գ.Ա.Հարությունյանը որպես ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար և Անդրկովկասյան ռազմաճակատի Ռազմական խորհրդի անդամ անմիջականորեն մասնակցել է Կովկասի պաշտպանության գործին և իր արժանի ավանդը ներդրել գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում, պարգևատրվել շքանշաններով ու մեդալներով, արժանացել ժողովրդական լայն զանգվածների հարգանքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| Ներածություն | 5 |
| 1. Պատերազմի սկիզբը | 28 |
| 2. Գ.Ա.Չարությունյանի ավանդը գերմանաֆաշիստական զավթիչների դեմ համաժողովրդական պայքար կազմակերպելու գործում | 31 |
| ա) Ռազմամոբիլիզացիոն միջոցառումներ և ռազմապաշտպանական աշխատանքներ | 31 |
| բ) Ազգային և ոչ ազգային դիվիզիաների կազմավորումը հանրապետությունում..... | 48 |
| գ) Ռազմաճակատի հետ ունեցած կապը..... | 66 |
| դ) Ի.Վ.Ստալինին ուղարկած դիմումներ, նամակներ և պաշտոնական գրություններ | 82 |
| 3. Գրիգոր Չարությունյանի գործունեությունը՝ ժողովրդական տնտեսությունը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու բնագավառում..... | 91 |
| ա) Արդյունաբերություն | 92 |
| բ) Գյուղատնտեսություն | 107 |
| 4. Գ.Ա.Չարությունյանը և մտավորականությունը | 118 |
| ա) Գիտություն | 119 |
| բ) Կրթություն | 132 |
| գ) Գրականություն, արվեստ, առողջապահություն, հոգևորականություն..... | 140 |

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՏԵՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941 – 1945)

Հրատ. խմբագիր՝ Ա.Հովակիմյան

Ստորագրված է տպագրության 05.05.2001թ.: Չափսը 60 X 84 $\frac{1}{16}$,
Տպագրական 9,6 մամուլ + 1 մամուլ նկար:
Հրատ. պատվեր № 044:

ԳՂ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ.:
ԳՂ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

000 777

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090559

A II
90559

